



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3006

NI

20



~~1395~~

~~34~~

2000 1000 1000 1000

1000 1000 1000

Handwritten text, possibly a signature or name, located in the upper right quadrant of the page.

Handwritten text, possibly a signature or name, located in the middle right quadrant of the page.


Handwritten text, possibly a signature or name, located in the lower right quadrant of the page.

Համար 12

Հ Ա Ն Ր Ի Կ Ո Ս

Կ Ա Մ

ԱՆՍՈՒՄԱՍ ՏՊԱՅ



ԹԵՐԳ՝ Ի ԳԵՂՂԻԿԵՆՆԻ

ԳԱՔԻՔԵՆ ԱՊՈՒՄԱՔԱՆ

Գ Ր Ա Ս Ի Ր Ե Ա Ն Ց

3006



ՊԵՏՊԵՆ

Ի ԿՈՍՏԱՆՍՆՈՒՊՈԼԻՍ

ՅԵՄԻՐՈՒՄ ԽԵՆՆ

- 1854 -

ՀՈԳԵՒՈՐ ԺՈՂՈՎՍ

Այս Բարոյական պատմութիւնը 'ի խրատ Տնօղաց և մանկանց օգտակար դործ մը ըլլալը ճանչցաւ, ու արժան համարեցաւ տպագրութեամբ 'ի լոյս ընծայուիլը որոց հաճութիւնը կը հաստատենք մեր ստորագրութեամբն ու կնքովը :

Պ. Կ. ՅԱԿՈԲ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Տ. Կ.

ԱՆԱՄԱԿ ՏՊԱՅ

ԳՂՈՒԽ Ե.

Որսորդն ու իր Գերդաստանը:

ԱՅՆ երեսնամեան վշտալի պատերազմէն քիչ մը ետքը Պոհեմիոյ սահմանագլուխները, հնարագէտ քաղաքէ մը քիչ հեռուն կ'ապրէր Ռօտօլֆ Շուէտէր անուն բարի մարդը. որ քաջ որսորդ և իշխանին անտառներուն վերահացուն էր. բնակած տունը գեղեցիկ անտառի մը մուտքը գետեղուած էր, ուր տեղ վայրի որսերը կը վստային, և ուր հետեաքար հազար կերպ առիթներ կ'ունենային որսորդք վարժուելու. բազմաթիւ շանց հաշիւնէն կը յայանուէր հեռուն եղած անտառապետին մէկ բնակարանը. և անոր պատերուն շուրջը կախուած եղջերուներուն եղջիւրները տիրոջը ճարպիկու-

Թեանը վկայող յաղթանակներ էին .
 Շուէտէր՝ բարեպաշտ և առաջինի կին մը
 ունէր, որ ծնաւ անոր երեք որդի . Հեն-
 րիկոս, Ղուխլա, և կիլում . անդրանիկ
 զաւակը՝ վայրենի և գազանական բը-
 նաւ որու թիւն մը ունէր . իսկ կրտսերը
 և իւր Ղուխլա քոյրը գառնուկի պէս
 քաղցրաբարոյ աղաքներ էին, ասոնք՝
 Ասաւ և Յակոբ կրնային համարուիլ .
 հայրը միտքը դրած էր առաջինը աղէկ
 որսորդ մը ընել, ինչպէս որ շուտով
 ալ Շուէտէրի ակնկալութիւնները հաս-
 տատեց . որովհետեւ երբ տունը կը ձը-
 գէր կ'երթար, հրացանը ձեռքը առած՝
 անտառին մէջ կը թախտէր որս որսա-
 լու . կիլում ընդհակառակն շարունակ
 քաղաքին ժողովրդապետներէն մէկուն
 դպրոցը կը յաճախէր . և շատ անգամ
 ամբողջ օրեր անոր հետ կ'անցընէր :

Յունիս ամսոյն վերջին ուրբաթն
 էր, տաքը սաստիկ, և տանը ժամա-
 ցոյցը կէս օր կը ցուցընէր . սեղանը
 դրուած ճաշը պատրաստ էր, բայց կե-
 րակուրի մարդ չէր գար . անտառապե-
 տին Մարիամ կինը պատու հանը նստած
 այս յապաղմանս վրայ անհանգիստ կ'ըլ-
 լար, վայրկեանը անգամ մը պատուհա-

նէն կը նայէր թէ մարդ կուգայ :

« Ո՛ւր կրնայ մնալ իմ ամուսինս աւանկ երկար ժամանակ », ըսաւ գործը ձգելով . « գլխուն բա՛ն մը եկաւ արդեօք որ միւսներն ալ չեն երեւար . կիւլօմն ալ չ'եկաւ , որ ցորեկս գալու խոտտացեր էր . մեծ ցաւ և արամութիւն է ինձի նաև Հենրիկոսիս և այն չար Գանիէլին մէկզմէկու հետ ունեցած սերտ բարեկամութիւննին ալ , ե՛րբ պիտի տեսնեմ սա՛ Գանիէլին սատեղէն վըռընտուիլը . իրաւցընէ երեւելի որսորդ մըն է , և ամուսինէս ետքը մեր մարդիկներուն ամենէն ճարտիկն է , բայց բարքը աւրուած երիտասարդ մըն է , որ վերջապէս զաւակս գլխէ պիտի հանէ » :

Այս խեղճ կնկանը հեծութիւնները աւելի սաստկացընողը այն տարածուած համբաւն էր , թէ խուժք մը գայլ Պոհեմիոյ լեռներէն իջնալով՝ դէպի այն անտառը գացեր էին , ուր տեղկ'անցընէր Շռէտէր գրեթէ իւր բոլոր ժամանակը . բայց ան՝ գայլերէն և արջերէն վախցող մարդ չէր . իր երկհարուած հրացանը , ճարտարութիւնը , դաշոյնը և շունը ամեն կերպ վրասանգնեցէ կը պահպանէին վիճքը . քաջ

և խրոխտ ալ ըլլալով օտար որսորդներ
 րէն ալ չէր վախնար . և երբ անոնցմէ
 յանցաւոր մը գտնէր , խափու պատ-
 ժել կուտար . բայց անոնք ալ շատ չէին
 սեպեր դանի . և շատ անգամ իւր և
 իւր Հենրիկոս տղուն կեանքը վտանգի
 մէջ կ'իյնար :

Երբոր Մարիամ իր մարդոցը բա-
 ցակայութեանը վրայ ասանկ կը վշտա-
 նար , առնէն քիչ մը հեռուն հրացա-
 նի մը ձայն լսուեցաւ , շուները սկրսան
 հաչել , և բարձրաձայն ծիծաղ մը յա-
 ջորդեց մինչև ան ատեն անտառին մէջ
 տիրող լռութեանը . Մարիամ բոլոր
 մարմնովը դողդրդալով հարկադրեցաւ
 սեղանին ետին նստարանի մը վրայ նրս-
 տելու . գլուխը ձեռքին մէջ կըր-
 թընցընելով :

« Միայն թէ իմ մարդիկներէս կամ
 ա՛յն խեղճ որսորդներէն մէկուն վրայ
 չպարպէին , կ'ըսէր . ո՛հ , երբ պիտի
 տեսնեմ երկանս գալը . շատոնցուրնէ
 ՚ի վեր կը վախնամ որ գլխուն փորձանք
 մը չգայ . խեղճ Շուէտեր , ա՛նչափ
 գէշութիւն կը քաշես , և քիչ միսի-
 թարութիւն ունիս » :

Տակաւին իւր վշտայ և վարանայը

մէջ էր , երբոր դուռը բացուեցաւ , և
 Հենրիկոս ներս մտաւ խնդալով , որ
 պէս թէ աշխարհիս ամենագեղեցիկ
 գործքերէն մէկը ըրած ըլլար :

« Ե՛հ , մա՛յր իմ , ըսաւ , լսեցի՞ր
 հարուածս . նայէ՛ ի՛նչ զարկի . կ'ու
 գէի որ գնատակս ա՛յն անիժեալ որսորդ
 ներէն մէկուն հասնէր , քան թէ այս
 թռչունին » :

Իսկոյն հրացանը և սպայուսակը վար
 դրաւ , և գետինը նետեց գեղեցիկ
 անոգը մը , որ դեռ մահուան դէմ կը
 կռուէր . և սենեկին մէջ մէկ անկիւ
 նէն մէկայր կը վազվռատէր . « նայէ՛ ,
 ըսաւ Հենրիկոս մօրը , ինչպէս կենդա
 նին կը կռուի . գիտես թէ վրէժ առ
 նել կ'ուզէ . ի՞նչպէս փոշի կը հանէ ,
 աղէկ հարուած մըն էր . թռած տե
 ղը զարկի . օգոյն մէջ աչքէ կորսուե
 լու չափ հեռուն կը պարտէր , մինչև
 հոն հասաւ գնատակս , ա՛լ հիմակ հո
 վիւր հանգիստ կրնայ ըլլալ , ա՛լ անոր
 գառնուկները չի յափշտակէր , հայրս
 չատ պիտի ուրախանայ , երբոր ըրած
 որսս իմանայ . է՛հ , ա՛լ հերիք է . դա
 դարէ՛ չա՛ր կենդանի , մեռնի՛ր այդ
 չափ դժուա՞ր կուզայ քեզի » և ուրով

աստիկ զարնելով շնչասպառ անգեղը՝
 նատարանի մը տակ մղեց :

Խեղճ մայրը դարձուց աչքերը իւր
 որդւոյն անգթութեանը տեսարանէն .
 և խորունկէն հառաչելով մտեցաւ
 Հենրիկոսին ու ըսաւ , « Ի՛նչ ըրաւ քե-
 ղի այս խեղճ կենդանիս , որ մեռցու-
 ցիր . ո՛վ որդեակ իմ , ա՛լ երեսդ չպի-
 տի նայիմ . ինձմէ կը հեռանաս , իմ գո-
 լովալից սէրս կը մերժես . արդեօք օ-
 տարակա՞ն մը եղած եմ ես քեզի . ձեռ-
 քրդ անցած կենդանիներուն վրայ ա՛ս
 ըրած անգթութիւնդ՝ խիստ և բարբա-
 րոս սրտի մը նշան է . գրեթէ և կեղե-
 ցական խորհրդոց գանուած չունիս .
 գանուած ատենդ ալ աղօթք ընել չու-
 նիս . ասանկով սիրտդ կամաց կամաց
 դէպ ՚ի բարին կը խասանայ . քու փրո-
 կութիւնդ կ'արհամարհես , խրատներս
 կ'անգոսնես , և Դանիէլին ընկերու-
 թիւնը իմինէս նախասպառիւ կը համա-
 ըրիս , որ չար մարդ մըն է , ա՛հ , փա-
 խի՛ր սա մարդէն , կ'աղաչեմ , քու վը-
 ըրող ունեցած սիրոյս համար ըլլայ ,
 խօսք ասուր ինձի անկից խորշելու , և
 շտկէ՛ ինքզինքդ , չէ՛ նէ զիս գերեզմա-
 նը կը խօթես » :

Հենրիկոս խորին լուսթեամբ մտիկ
 կ'ընէր իւր բարի մօրը խրատները . աչ-
 քերուէն մէջ արցունքները կը փայլէին ,
 և սիրան ալ շարժեր էր , Մարիամ ա-
 սիկա տեսնելով՝ յոյս առաւ զանի ուղ-
 զելու . և ձեռքէն բռնելով շարունա-
 կեց . « միտքդ բե՛ր քու Ռօպէրթ հօր-
 եղբօրդ աղէտալի վիճակը , որ իբրև հե-
 թանոս կ'ապրէր , զՄատուած և կրօն-
 քը կը ծաղլէր , մեղք մեղքի փայ կը
 դիպէր , որ օր մըն ալ անտատին մէջ
 վայրի գազաններէն կէս մեռել եղաւ ,
 ամեն մարդ կ'ըսէր թէ Մատուած վը-
 ռիժիսնդիր եղաւ այս հայհոյիչն սոս-
 կալի եղանակաւ մը . ի՛նչ եղաւ այն
 թշուառականին հոգին , ա՛լ մտիկ մ'ը-
 ներ Դանիէլն անիրաւ խօսքերուէն ,
 հաւատքի դարձի՛ր , և Մատուծոյ հեա-
 հաշտուէ՛ բարի խոստովանութեամբ ,
 Տէրը ողորմած և ամենաբարի ըլլալով՝
 քու երիտասարդական մոլութեանցդ
 կը ներէ » :

Հենրիկոս մօրը ձեռքը պագաւ , և
 ըսաւ . « Գիտեմ որ բնութեանս սաստ-
 կութենէն երբեմն չտփէն դուրս կ'ել-
 լեմ . բայց ես ալ սպաս կը համարիմ
 քեզի ըսելու , թէ դուն ալ եղբայրս

ինձմէ, շատ կը սիրես, եւ ալ քու ար-
 զադ չե՛մ մի. գիտես որ Աիլօմն ալ
 ինձմէ կը փախչուի, այս բանիս սիրտս
 շատ կը ցաւի, եւ ահա՛ ասոր համար է
 որ օտարականի մը ընկերութիւնը կը
 փնտրուեմ, որովհետեւ իմիններս զիս
 կ'արհամարհեն ։

« Շատ կը սխալիս, որդեա՛կ իմ », ը-
 ասւ մայրը, « Էներիկոսը վատահ ընե-
 լու հաստատողական կերպով մը, « թէ
 որ մտածես թէ քեզի ունեցածէս աւել-
 լի սէր ունիմ Աիլօմիս վրայ. երկուքդ
 ալ միապէս սիրելի էք ինձի. այս բանը
 ինքնին կրնաս հասկընալ դուն, բայց
 Աիլօմին գալով՝ ա՛ն քեզնէ չի փախչո-
 տիր. դուն անկից կը փախչիս երբոր կը
 տեսնես. ա՛ն կ'ուզէ միայն իւր սէրը
 յայտնել քեզի, փորձէ՛, ըսածիս ճշմար-
 տութիւնը կը հասկընաս ։

Այս խօսակցութեան ատեն դէպ'ի
 դուռը եկող մէկու մը ոտնաձայնը լրս-
 ուեցաւ, « Էներիկոս բացաւ, — « Դո՛ւն
 ես Դանիէլ », աղաղակեց եռանդով,
 « ի՛նչ լուր բերիր » ։

« Աղէկ լուր մը », պատասխանեց
 Դանիէլ բարձրաձայն խնդալով. « աղէկ
 գերի մը բռնեցինք, օտարական որ-

սորդներէն ամենէն սոսկալին ձեռք ձր
գեցինք ։

« Անիժեալ Այտէնալախէրը որ մեր
այնչափ վայրի որսերը գողցաւ . գնա՛ ,
բանը գէշ է ։ »

« Ի՛նչպէս ։ » , պօռայ Հենրիկոս ցրն
ծութեան ձայնով մը . « Այտէնալախէ-
րը բռնուեցաւ . շատ ուրախացայ . ու
րովհետեւ այն անիրաւը շատ գէշու-
թիւն ըրաւ մեզի . կը բերե՞ն կոր ։ »

« Այո՛ , այո՛ , նայե՛ պատուհանէն .
կը տեսնե՞ս , ի՞նչպէս անիրաւը մեր մար-
դոցը գէ՛մ կը դնէ . վախճիլ կը նայի , ա-
հա՛ կը կապեն և սայլին վրայ կը դնեն ,
վրան վեց հրացան շտկած՝ հնազանդու-
թիւն կը պահանջեն ։ »

Հենրիկոս կը ծափահարէր կառքին
գէպ ՚ի հօրը տունը գալը տեսնելով .
Դանիէլն ու ինք բռնեցին անգղը , և
սենեակէն գուրս հանեցին , մայրը խո-
հանոցը գնաց ձաշ պատրաստելու .
Տիան՝ Շուէտէրի հաւատարիմ շուներ
վաղեց տիրոջը գալուստը յայտնելու .
Չոր խոտ բեռնաւորուած սայլ մը , ու
րուն վրայ պառկած էր օտարական որ-
սորդը , բակին մէջ կայնեցաւ , քովը ու-
նենալով Շուէտէրն ու իր հինգ սպա-

աւարները, որտղը սոսկալի թշնամանք և հայհոյութիւններ կ'ընէր զինքը բռնողներուն, և կ'երդնայր մեծ վրէժ առնելու աննցմէ, երբոր ազատուէր:

Գ Լ Ո Ւ Խ Ը

Ահլօմի կոչումը:

Շուտէր սայլէն իջեցընել առաւ թշուառական որտղը, որ կը մը ընէր իւր հետը անասունի մը պէս վարուելուն համար, ձեռքերը և ոտքերը կապելով:

« Երկար ատենէ 'ի վեր արժան եղածը 'ի գործ դրուեցաւ քեզի », պատասխանեց Շուտէր, « կըյուսամ որ այս անգամ ոստիկանութեան ձեռքէն չպիտի ազատիս. բանան ու կախաղանը սորվեցընեն պիտի քեզի օրէնքները յարգելը »:

« Ո՛վ Պարոն, կ'ազաչեմ », ըսաւ Վայտէնպախէր, Շուտէրին ոտքը խնայով. « ոստիկանութեանը մի՛ մատ-

հեր պիս . ողորմէ՛ ինձի . գիտես որ եօթըն վաւակ ունիմ . ի՞նչ պիտի ըլլան ա՛յն խեղճերը , թէ որ իմ օգնութենէս զանոնք զրկես , կը խոստանամ որ ա՛լ եղջերու չի զարնեմ . այս վտանգաւ որ արհեստը ա՛լ պիտի թողում . ողորմէ՛ ինձի » :

« Հազար անգամ ըսիր այդ խօսքերը , խա՛բէբայ , և միշտ ըրիր » :

Շուէտէր նշանացի հասկըցուց իր սպասաւորներէն մէկուն , որ զանի տուն տանին և սենեկի մը մէջ բանտարկեն , օտարականը դէմ կը կենար , բայց բռնի քաշկռտելով տարին : Շուէտէր և ըստ սպասաւորները սեղանի նստան . նոյնպէս իռիզան և մայրը , բայց առաջ խաչակնքեցին , և կարճ աղօթք մը ըսին , ճաշի ատեն մայրը ամուսնոյն ըսաւ . « Ուրեմն ըսէ՛ սիրելիս , ինչո՞ւ համար այսօր ճաշի ուշ եկար » :

« Տեսա՛ր » , ըսաւ , « այս անգգամ Վայտենպախէրն էր պատճառը » :

« Գիտե՞ս , ի՞նչ քաշեցի , ս՛րչափ վշտացայ այս յապաղմանս վրայ , միշտ կը վախնամ որ այս օտարական որսորդներէն մէկը օր մը գէշութիւն մը հասցընէ քեզի , թո՛ղ տուր երթայ սա

չարը , մէյ մը մտածէ՛ իւր կիներ և իւր
 եօթն զաւկրները , կը տեսնես որ պի-
 տի զգաստանայ , և ա՛լ ասկից ետքը
 վայրի որս չպիտի զարնէ ” :

“ Աղէկ ա՛ ” պօռաց Հռէտէր բար-
 կութեան ճայնով մը . “ ներողութի՞ւն
 կը քարոզես կոր ինձի , ես ուզածս
 կրնամ մի ընել , այս անիրաւը եղջե-
 րուն կտրրած ատենը բռնեցի , և
 հիմակ թող տամ որ երթայ , չե՞ս մի
 գիտեր որ ես կատարելու պարտակա-
 նութիւններ ունիմ , և երդում ըրած
 եմ իշխանին որ չթողում մէկուն այս
 անտառներուն մէջ վայրի որս զարնելու .
 կը տեսնես որ ի՞նչ խղճմտանքով կը
 վարաւիմ իմ մասնաւոր սովորութենէս
 չխոտորելով . և զարկածներս ամբողջ
 բերդին վերակացուին կը խրկեմ . արդ
 ի՞նչպէս թողում որ Վայտէնպատի
 պէս անիրաւ մը , որ քառասուն անգամ
 կախաղանի արժանի եղած է , մեր ան-
 տառները կողոպտէ , ընտանեաց հայր
 ըլլայ ըլլայ երկուքն ալ մէկ է ինձի .
 պէտք է որ իմ պարտականութիւնս
 կատարեմ ” :

“ Տայց ” ըսաւ փոքր իւր իզան , “ ա՛ն
 մարդը սոսկալի սպառնալիքներ կ’ը-

նէ կոր քեպէ, հայր իմ. և թէ որ ա-
զատու թիւն գանե, արիւնն աւշա կեր-
պով մը վրէժխնդիր պիտի ըլլայ. առ-
կաւ ին կը ստակամ կը բար լաւճներա կը
մտածեմ :

3006

« Մտիկ ընէ՛, Մղձիկս. փարսակ՝
քու երկիւղներդ, Սասուած չի թու-
ղուր չարերուն, որ ամեն խորհած եղեռ-
նագործ աւ թիւննին կատարեն. Վայտն-
պատիւ, բանասին մէջ ինքրդինք վար կը
դնէ ինչպէս Նիկողայոս Արամակի իւր
դրոյնն. որ ա՛ն ալ վեց ամիսէ ՚ի վեր
բարեւից աշատրակին մէջ բանասարկեալ
է. արդարու թիւնը նայելու է որ օրի-
նակ ըլլայ, Վայտնապատիւ, աւելի աղէկ
կընար ապրիլ իւր արուեստը գործելով
քան փայրի որս գողնալով. բայց անի-
րաւու թեամբ ապրիլը աւելի աղէկ կը
սեպէ կոր. Մնդրե՛աա. ճաշդ ընելիդ
եարբ գնա՛ ստիկանու թեան նախա կ-
ները գտի՛ր, որ այս շարագործը բան-
ար սանին » : Մնդրե՛աա ելաւ, և եր-
թառն պատրաստուեցաւ :

Մայրը և խեղանկարէն աղերսանի-
ներ ըրին Շահանքին, որ թող սոյ սյն
օտարական արարողը առանց ստիկա-
նու թեան մտանելու. բայց չի կրցան որ-
2

նի համարել, անողորբելի մնաց. լեցուց
 ծխախայտը, և սկսաւ խմելու. Հենրի-
 կոս ալ նայնպէս. վերջապէս ժամ մը
 ապաստելէն ետքը երեք նուիրակ եկան
 հետերնին երկու մեծ շուն սուած՝ Վայ-
 ակնպահերը տանելու համար. որն որ
 կատարած դուրս ելլելով բանտարկուած
 սենեակէն՝ յարձակեցաւ նուիրակնե-
 րէն մէկուն վրայ, առաւ դաշոյնը, և
 նետուեցաւ Շուտերին վրայ որ զար-
 նէ. բայց Դանիէլ թեր բռնեց. սու-
 կալի կռիւ մը բացուեցաւ նուիրակնե-
 րուն և այս անհատիս մէջ տեղը, որ
 առիւծի պէս կը մաքրուէր. վերջապէս
 բռնեցին զանի. կապեցին և աղէկ մը
 ծեծեցին՝ ՚ի պատիժ ըրած յանցանացը
 և ընդդիմութեանը. ետքը առին սա-
 լին, որ գայլի պէս կ'ոռնայր.

Երբոր խաղաղութիւն եղաւ, Շը-
 ուտեր սենեակը մտաւ և ղկիչօմը հար-
 ցուց. « չեմ ուզեր », ըսաւ կնաջը,
 « որ այս տղայն ամեն իժիր Եննար-
 տու ժողովրդապետին քով աշակերտու-
 թեան երթայ. հերիք է սորվածը,
 մեզի հետ որսի գալու ասննն է, ես
 ըստիններէն չգիտեմ, հայրս և եղբայր-
 ներս ալ չգիտէին, բայց այսու ամե-

նայնիւ երևելի որսորդներ էին, կարծեմ որ կիշում քահանայ ըլլալու փափաք աւնի. դուն գիտես որ կրօնից թշնամի չեմ, քահանաները կը յարգեմ. բայց իմ վիճակս աւելի սիրելի է քեզի, կիշում դեռ շատ պզտիկ է, տասն և տասներկու տարի բան սորվելու համար դպրոցներուն նասորաններուն վրայ պիտի անցընէ, և վերջո ի՞նչ պիտի ըլլայ, մէկ խեղճ վիքար մը, և գեղի մը ժողովդապետի փոխանորդ, երբէք կանոնիկոս կամ եպիսկոպոս ըլլալիք չ'ունի":

«Շատ չարազանց կը խօսիս, Սիւրելիս,» ըսաւ մայրը, «փառասիրութիւնը մէկ գի ձգէ՛, և բանը իրեն ճշմարիտ նպատակաւ ը մտածէ. աշխարհիս մէջ աղէկ քահանայի մը վիճակէն աւելի լաւագոյն վիճակ չկայ. քահանայն՝ մանաւանդ գիւղին մէջ, հին ժամանակուան նահապետի մը պէս կ'ապրի, հոյր կ'ըլլայ իւր հօսին, և դիւղին ալ իբր թաղաւորը, իւր ոչխարներուն բարեկամը, մտերիւնը, խորհրդատուն և պաշտպանը, և իւր թեմականներուն տեսանելի նախախնամութիւնն է. քահանան է որ նորածին մանուկին կե-

նայ ճանապարհը կը բանայ՝ անոր հո-
 գին յառիտե՛նականու թեան գրքին մէջ
 կ'որձանագրէ, և կը սորվլ ցընէ՝ անոր
 զՄատուած ճանչնայ, առայինու թիւն
 գործել, և երջանիկ ըլլայ. այն է որ մե-
 ղուորը իւր գերագոյն Պատառոյին
 հետ կը հարչտլ ցընէ. և մարդը յառիտե-
 նականու թեան դուռնէրը կը ասի, ա-
 նոր գերեզմանը կ'որհնէ, և Տիրոջ սըոր-
 մու թեանը կը յանձնէ, անոր ասէն քայ-
 լտիտիմէրը՝ բարեգործութիւններ են.
 և ասն իտքերը՝ դէպ ՚ի բարին յոր-
 դորմուներն. ի՞նչ կ'ըսես, ըսէ՛, ե-
 կեղեցական վճակը իմ առջև անաս-
 ուսակտի մը վիճակէն շատ աւելի պատ-
 ուական է, թէպէտ և բոլոր թագա-
 ւորութեան մը աւելի ճարտիկ սրտը
 դը եղած ըլլայ.

Շուտէր հանդերձին կոճակները
 քակեց առանց պատասխանելու. կը
 հասկընար Սողիտմին իտքերուն զօ-
 ռութիւնը, և չուղեց լանոնք ջըրելու
 ջնայ, այն ասէն շէնիկոս ներս մը-
 սաւ, լ'ցուց վառոյին ասնը, կա-
 պար ալ առաւ, կախեց հրացանը ուր
 տրտի գնաց. շատ ջանցաւ, սուն ե-
 կաւ. և հորը ծանոյց որ մէկը այցե-

« Ո՞վ է քառ Շոհանք »

« Տ. Ի հանարառա ժողովրդապետար ,
 որ իւր քրոջը և կիցովին հետ կուգայ »
 պատասխանեց Հենկիկա , և գնաց :

Հայրը ելաւ , և արգոյ հովիւք դի-
 մաւորելով « բարի և կար Տ. ժողովր-
 դապետ » , ըսաւ , « երկար ասունէ ՚ի
 վեր գձեզ այս անգ անանելու հաճու-
 թիւնը չ'ունեցանք » :

« Ահ թէ կանք չ'ունէի » , պատաս-
 խանեց արգոյ հովիւք , « այլ ժամանակ
 չ'եղաւ , գիտէք որ մեր վիճակին մէջ և
 զորք իւր ժամանակին տէրը չէ' . շատ
 անգամ անակրնկալ գործքեր կը պատա-
 հին , բայց վերջապէս ահա այսօր և կայ
 իմ ջիւղիս քրոջս հետ » :

« Հրամանք Ներս , հրամանք և
 հանգստացէ՛ք . Ինչպէս , գնա բանի վր
 գուտք աւրած պատրաստե՛ք քառ Շո-
 հանք իւր ազգանք , որ ա՛ն առան
 մորը հետ Ներկայացու իւր յարգանքը
 մտառցանելու Տ. Ի հանարառա » :

« Կիցովն ալ բ'ի ի՞նչ » , կ'ընէց Շոհ-
 անք , « այս աղան շատ ճանճութիւն
 կ'աւայ ձեզի . որովհետեւ անքող լ
 րեք հետեւնիկ » ինչ կ'ընէք հետը » :

« Որովհետեւ ճանքայ բացիս ինձի »

Պ. Շնչատէրո՞, ըսաւ ժողովրդապետը .
 « ուրեմն կը պարտաւորիմ ըսելու պար-
 զապէս, որ ըստ մեծի մասնն կիջօմին
 համար եկայ այսօր զձեզ տեսնելու .
 ի՞նչ կը մտածէք, այս պատանին ի՞նչ
 սխախ ընէք . իւր ապագային վրայ զբա-
 ղելու ժամանակն է » :

« Մենք ալ այր և կին ատոր վրայ
 կը խօսէինք, և չկրցանք միաբանիլ,
 Մարիամը կ'ուզէ զանի քահանայ ընել
 ես ալ կ'ուզեմ որ աղէկ որսորդ մը ըլ-
 լայ . իմ ամեն նախնիքս և ազգականներս
 այս գործոյն հետեւեցան . և աղէկ ապ-
 ըցան . չեմ հասկընար թէ ինչո՞ւ հա-
 մար կիջօմ դուրս մնայ » :

« Խորհուրդ մարդկան, կամք Աս-
 տուծոյ . Սիրելիդ իմ Պ. Շնչատէրո՞ .
 պատասխանեց ժողովրդապետը, այս բա-
 ընպաշտ պատանիս, այս հեզ հոգին,
 քրիստոնէական իմաստու թեան այս ա-
 շակերար աշխարհի համար չէ, խռով-
 եալ կենաց անընդհատ աղմուկներուն
 և ցնցումներուն մէջ կը կորսուի, ա-
 սիկայ մէկ մատղաշ և փափուկ բոյս մըն
 է, որ արեւուն կիզիչ ճառագայթնե-
 ըն հեռու՝ զատ մշակուիլ կ'ուզէ . ա-
 ուանձնութիւն պէտք է անոր, կիջօմինը

գործուներայ գթութեամբ մը կենդան
 նացած նկատողական կեանք մըն է . որ
 իւր մերձաւորին բարւոյն անձնանուէր
 կ'ըլլայ . ճանչցայ անոր անարատ հոգին ,
 աղէկ սորվեցայ , և համոզուեցայ , որ
 որ մը միայն Աստուած պիտի ըլլայ ա-
 նոր բաժինը . դուք ալ Պարոն , գիտեմ
 դուք ալ ինձի պէս նոյն նկատուեքները
 ըրած էք , և մարդ կրնայ մի խաբուիլ ,
 Հենրիկոսիդ բնութիւնը և յօժարու-
 թիւնները համեմատէ՛ կիլոմին բնաւո-
 բութեանը և վարմունքին հետ , և ըստ՛
 թէ խոհեմութի՛ւն է մի երկուքն ալ
 մէկ գծի մը վրայ քալեցընելը . Աստ-
 ուած ճանչցուց մեզի իւր կամքը .
 Հենրիկոս քեզի քու գործոյդ պիտի
 յաջորդէ . և առնող նայի , բայց կիլոմ՝
 Ահարոնի պէս զձեզ օրհնելու և երկ-
 նից շնորհքները ձեր վրան բերելու
 կոչուած է . ինչպէս որ կը յուսամ Աս-
 տուծոյ կամայք չէք հակառակիր » :

Հոկտէր ան ատեն ի՛նչ որոշաւու-
 թիւն ընելը չէր գիտեր , կ'երևէր որ
 ներսի դին սաստիկ խռովութիւն մը
 կար . ժողովրդապետին զուցած խօսքե-
 ըը պատասխան չէր վերցընել , բայց
 սակայն իւր երկու որդւոց օր մը իր

Հաւ դասքը հետեւեալը տեսնելու անկեղա-
 լու թիւ նմերն ալ չէր կրնար թողուլ ,
 երբոր ասանկ կը վարանէր , կիլով ներս
 մտաւ մօրը հետ սեղանն պատրաստելու ,
 սա բճր պատրաստ էր . հայրը կանչել ցաւ
 ձեռքէն բռնելով ըսաւ . “ կիլով , ին-
 ձի եւ եղբօրդ հետ սրտի երթալէն չե՞ս
 անտրժիր ” :

“ Տէ՛հ , չէ հայր իմ . բնաւ չեմ կրն-
 նար այն ինկճ կենդանիները մեռչընել ,
 որ մեզի վնաս մը ըսած չ’ուենին ” :

“ Ի՛նչ վիճակ ունենալու կը վախա-
 քիս ” :

Ան ասե՛ն կիլով աչքը դարձուց
 Տ . Մէնարատսին . եւ դէմքն ալ յան-
 կարծական կարմրութիւն մը առաւ :

“ Հասկոցայ ” , ըսաւ հայրը , “ որդ-
 ես’կ իմ . աւելի ժամայ իրք գործածե-
 լու կը բաղձաս քան թէ հրօցան ” , ան-
 ասե՛ն մեկ ցաւազ ին հայել ցաւածքով
 մը երկինքը նայլ լով լէր թէ ընելիք
 զոհին մեծութիւնը յայանել լով , ը-
 սաւ , “ քու կամքդ թո՛ղ ըլլայ ս’վ տէր ,
 զու տու իր ինձի ս’յս տղայն , ես ալ
 քեզի կաւտամ . քու սեղաններուդ ար-
 ձանի պաշտօնեայ մը քրէ ” ետքը սա-
 նելով զանի Տ . Մէնարատսին , “ դու

այս արդոյ հասիւ, որ ալ առաջնորդ
եղի, բաւ, իմ արդարաց, մինչև որ
կարող ըլլայ ինքնին գուցիչները վերջ
կաթեան ճամբուն մէջ առաջնորդե-
լու ։

« () Դհնեայ ըլլայ Աստուած ու աղա-
զակեց մայրը, արցունքը սրբելով, և
համբոյրներ տալով իւր սիրելի կից-
մին ։

Ինչպէս սուրճը բերան, Հոն-
ակէր ալ սեզան նասաւ ժողովրդապե-
տին և անոր շիջիլիս բրոջը մէջ անդր-
զանազան բաներու վրայ խօսք եղաւ,
կիցով մօտը բոլոր կը նստէր, և անոր
թեւէն կը բռնէր որպէս թէ այն բանին
վրայ ս'ըջաւի ուրախ ըլլալը հասկըցընէր,
ժողովրդապետը ըսաւ մէջը ։

« Ինչ' ինձի հետ, ախի՛ն, ինչ
պիտի ընէս թէ որ ասկից տանն տալի-
էն ետքը բու սիրելի կիցովի իմ վիքա-
լի կարգովն գայ այս սեզանը նստի, և
քեզնէ գաւաթ իր սուրճ ուզէ, և ա՛ն
տանն աւելի երջանակ չս'ի՛տի համարիս
անոր այս վիճակը, քան թէ երբոր որ
մը զանի որսողի մը գնաակէն կամ
վայրի գազաններուն ժանիքէն ՚ի մահ
վերաւ որուս, անասունն տուն բերի-

ին . կարծեմ զանի իր կոչմանէն դարձրնելը անհնարին է . որովհետև իւր գեռափթիթ հասակէն իբրև ապագայ պաշտօնեայ Մատուծոյ և առաքինութեան քարոզիչ յայտնուած է . Տէրը խօսեցաւ անոր սրտին , ինչպէս որ երբեմն Սամուէլին , որ պատասխանեց , « խօսեաց Տէ՛ր , և լուիցէ ծառայ քո » . ո՛րչափ ուրախ եմ ասանկ գեղեցիկ դործի մը նպաստելուս , ուրախակից կ'ըլլամ ձեզի ո՛վ երջանիկ գերդաստան ձեր մէջ քահանայ մը ունենալուդ , և ժամանակը սխափ յայտնէ թէ ո՛վ ընտրեր է աղէկ բաժինը , կիլո՞մը թէ Հենրիկոսը » .

« Քանի՛ երախտապարտ եմ ձեզի , Տ . ժողովդապետ , ըսաւ մայրը . զիս մէկ սոսկալի բեռնէ մը ազատեցիր վերջապէս այս գործը լռմնցընելով . կիլով շուտով դպրոցի մը դասերուն յաճախելու պարտաւոր է , արդեօք ո՞ր ատեն կընայ երթալ » .

« կարծեմ դասերուն մօտակայ մուտքին » .

« Մենայն սրբոց տօնի՞ն » , աղաղակեց լուիզան զարմանալով :

« Այո՛ , պատասխանեց ժողովդա-

պեար . որովհետև ժամանակ կորսընցը
նեւու չէ՛ր .

Խաթունները անական գործքերու
վրայք խօսակ ցելէն ետքը , ժողովրդա-
պեար ելաւ օրհնեց ընտանիքը , և քա-
ղաքը դարձաւ . Հոկտեր առաւ հը-
րացանը , և որսի գնաց . Հենրիկոս և
Գանիէլն ալ շուտ մը ետեւէն գացին .
Կիլով մօրմէն կողով մը ուզեց ելակ
ժողվելու համար . ամառուան գեղեցիկ
իրիկուն մըն էր . միլիոնաւոր աստղեր
կը ցոլանային հաստատութեան կապու-
տակադոյն կամարին վրայ . կիլով շուտ
մը դարձաւ սուն . և գամծ աղուոր ե-
լակները մօրը ցուցուց . հայրն ալ դար-
ձաւ , և փոքր գերդաստանը ժողվու ե ուլ
միայն Հենրիկոսին և Գանիէլն կ'ըս-
պատէին հաց ու սեւու և հանգստանաւ
համար . երկար ատեն սպասեցին և այս
երկուքը չեկան , « այս գէշ բան է , ը-
սաւ հայրը . պէտք է Գանիէլէն կրարը
վիլ . այն չարը վերջապէս գլխէ պիտի
հանէ զՀենրիկոս . անցեալ օր սեւայոր
սենեակին մէջ կեղծ քուենէր կը շի-
նէր . երբոր մարդ ստակ շահելու հա-
մար անանկ բաներ ընելու սորված է ,
ամեն բան կրնայ ընել . իրաւցընէ այս

Երիտասարդը շատ աղէկ որատրոզ մըն է •
 բայց հոգ չէ՛, իմ սրդւոյս վարկութիւն
 նոր ուրիշ ամէն նկատմանց կը յաղթէ • •

« Այս բանս շատուցաւ ընէ մասձել
 պէտք է իրո՞, պատասխանել ց մայրը • « Գա
 նիել մեր ամուսնու ժամատասան է, ո՛չ կը
 բռնէ ունի, ո՛չ վարք, անանկ մայր մը
 մեր ամուսնու շունենալուս կ'ամշնամ • •

« Իրաւունք ունիս Արեւիկա, ըսաւ •
 բայց մինչև հիւս համբերեցի, վախ
 նայով որ չ'ըլլայ թէ յուսահատութեան
 մէջ ձգեմ զանի • ասանկ մարդը վը
 տանդաւոր բան մըն է • մեղի բաւա
 կան թշնամի եւս որսի գողերը՝ պէտք
 չէ որ զանոնք շատցընել ուզենք հիւս
 շենքիսին խափա կ'արգիւնեմ, որ շատ
 չտեսնուի անոր հետ • Ե թէ որ ասան
 կով չ'ըլլայ, ուրիշ միջոցներ ձեռք պի
 ախ առնեմ • •

Ելամ մը անցաւ, և ժամացոցոց ինն
 աւելիս զարկաւ երբոր Գանիէն Ե. շեն
 րիկար տուն եկան կատարեալ գինով •
 Հռէտէր խոհեմութիւն ընելով բան մը
 չ'ըսաւ անոնց այն գիշերը, աղէկ գիտ
 նայով որ անէն խրատները դուր անգը
 պիտի երթան, և վաղուան թողուց աս
 նոնց վարմունքը կշտամբելու գործը •

կերակուր տալ տուաւ անոնց, և սենեակնին խրկեց. գացին այն բարի հօրք սիրար ցաւ ցընելուն վրայ, ամենեւին վշտանալ չըցուցընելով. Հռէտէր ալ գնաց պառկէ ցաւ. այն օրը սարժանելի յիշատակներ թողած էր անոր մայրին մէջ. իւր կինն ալ () ալ իրա՛մ ծածկեց արցունքները որ վանի շատ չի վշտայընէ:

Գ Լ Ո Ւ Խ Գ

Բազէից աշտարակ:

Հեռուեալ օրը Հռէտէր կանուխկէ կանչել տուաւ իր Հենրիկոս որդին. և խիստ յանդիմանու թիւն մը ըրաւ կըշտանքելով անոր գիշերուան վարմունքը, և իմացուց թէ ս'ըջափ անխայել բան է իրեն՝ Գանիէլի պէս սնարգ մարդու մը հեռ սերտ բարեկամութիւն մը ունենալը, վերջը ցուցուց անոր թէ սասանկ պզտիկուց վարժուելով ըմպելեաց և խաղու աղէտալի սովորութեանը՝ ի՞նչ վառնագնորու մէջ կ'իջնար. « վերջը օր

մը տեղդ կախաղանն է, ըսաւ. որովհե-
 տե խաղամունները և արբեցողները ան-
 գամ մը մտութեան մէջ իյնալնուն ետ-
 քը ա՛լ չեն դադարիր. և երբ իրենց կիր-
 քերը հաճեցընելու միջոց չունենան
 ձեռքերնին, ապօրինաւոր ճամբաներ
 կը բռնեն, յիշէ՛ փոքր Մարտինոսին
 վաճակը. որ իր յանցաւոր կեանքը ա-
 մօթալի մահով վերջացընել, խաղուն պը-
 տուողը եղաւ, Դանիէլն հետ շատ
 տեսնուելն դադարէ՛. որ թէպէտ ա-
 նոր ալ իր ներկայութեամբը տունս պըղ-
 ծելը երկար չի քշեր. անկից անձայն ա-
 ղատելու հնարքը գտած եմ. չեմ ու-
 զեր վրոնանել, վասնաչով որ անոր վը-
 րէժխնդրութիւնը չը գրգռեմ իմ և ի-
 միներուս վրայ. բայց գիտեմ որ կեղծ
 քուէներ շիներ է, ոտախկանութեան
 ձեռքը պիտի մատնեմ, որպէս զի անոր
 անիրաւ նենգութիւններուն վախճան
 մը տայ, և ուրիշներուն ստակը գողնա-
 լէն զանի արգիլէ. այս վերջին անգամ
 կ'ըսեմ քեզի, հեռու կեցիր Դանիէ-
 լն, թէ որ անոր պէս գէշ մարդ ըլլալ
 չես ուզեր.

Հերիկոս այս լատմներէն վախցած
 երեցաւ. երկար ատենէ ՚ի վեր կը կաա-

կածէր Դանիէլին խաղու մէջ ունեցած նորանշան յաջողութեանը վրայ, հօրը զուրցածնեղէն աչքը բացուեցաւ, ըսկրաւ սրտանց ասել իր խարդախ ընկերը. և միտքը դրաւ որ անոր հետ բարեկամութիւնը վերջացընէ. ինչպէս որ ասանկ ալ խոստացաւ հօրը.

Տայց այս խոստմունքը առաջնե անգամինն ոչնչանար պիտի. Հենրիկոս արդէն հեշտութեան սորված ըլլալով, պիւրաւ չէր կրնար ետ կենալ, հաւաարքը կորսընցուցած էր հեշտութեան դէմ դնելու համար միայն իւր ուժին կը վստահէր առանց խնդրելու անոր օգնութիւնը, որն որ միայն ինք իւր շնորհիւր մարդկային առաքինութեանց օրէնքները կը հաստատէ. թէ որ այս միջոցիս խոնարհական աղօթքով մը իւր հոգին ամենայն բարութեանց պատճառին բարձրացընէր, կ'զգար Տիրոջ քաղցր ներգործութիւնը, և անոր շնորհքը կը բեղմնաւորէր իւր անպատու սիրար բայց Հենրիկոս աղօթելէն չէր ախորժեր, կենաց հիւթը չորցեր էր. և անշուշտ անոր հետեւութիւնն ալ իր կործանումն էր, ասանկով այն բարի պիտաւորութիւնները գրե-

թէ մտած ու անձ ժամանակին անհայտն ,
 Հենրիկոս ինքրորդինք բանեց , և Գամիկե-
 վն հետ իւր ծնադարը առ ջնն չէր խո-
 աակցեր , որ անոնք ալ խաբուեցան ,
 բայց գինեատուր , գինինե , քուէնե-
 րը և թուղթը անոր մարէն չեղան , և
 երեակցու թեանը առ ջնն կուգային ա-
 ւելի հասարակիչ գոյնեբով , այս խա-
 ղալաւէտ կեանքը անհաճոյ և կու ա-
 նոր , « ինչո՞ւ կ'ըսէր , իմ այս տարեքիս
 միջ խաթաուն տարեկան մարդու մը ալ , ս
 ապի Ը . հայրս չա խաղանցու թիւն յրաւ
 Գամիկեյ այնչա ի վաանդաւոր և բխաա-
 սարդ մը հաւկոցնեւով ինձի . իրաւ ցը-
 նէ պակասու թիւններ աւնի , բայց պա-
 կասու թիւն չունեցող ո՞վ կայ . մամա-
 ւանդ որ անոր մարի գայթակղեցուցիչ
 գործքերէն և պատրանքներէն ինքը-
 զինքս կը պահպանեմ . Գամիկեյ աղէկ
 ընկեր մըն է . իւր բարեկամները կը լը-
 ւարճացնեն մեյմ'ալ որ բողորովն ան-
 կից չեմ կրնար դատուիլ . սարաք ալ
 ունիմ անոր . որով ապերախաու թիւնս
 երեսիս կուտայ , նայինք , նայինք » :

Կամակ կը խորհէր Հենրիկոս . և
 իւր կորստեանը կը գիմէր .

Կիլով գասի գացած էր իր արդոյ

վարժապետին քով . և կամաց կամաց
 հօրը տունը կը դառնար . որովհետեւ
 իրիկուն Ժամը վեցն էր , չ'աճապա-
 րեց շուտով տուն գալու . ճամբան եր-
 կարեց Վ իրգիլիոսի Հովուաբանու-
 թիւններէն մէկը սերտելով . և անցաւ
 Տաղէից աշտարակին փողոցէն . այս աշ-
 տարակը հին բերդերէ մնացած շէնք
 մըն էր քաղաքէն քիչ մը հեռուն . բո-
 լորտիքը ունէր քիչ խորունկ փոս մը ,
 հոն կը բանտարկուէին մանաւանդ եր-
 կար ժամանակ բանտարգելու թեան դա-
 տապարտեալները .

Կիլով աշտարակէն յիսուն քայլ
 հեռուն կնճնիի մը տակ նստաւ դասը
 սերտելու , մեղմ հարուածներ լսեց
 դուռ մը կոտրելու ժամանակ ելած
 ձայնին նման . ասոր ի՛նչ ըլլալը հաս-
 կրնալու համար ելաւ դէպ 'ի աշտարա-
 կը գնաց . տեսաւ որ գեղացի մը կա-
 ցինը առած՝ աշտարակին դրանը մէկը
 կոտրելու կ'աշխատէր , անշուշտ քանի
 մը բանտարգելոց փախուստ ձարելու
 համար . կիլովի մօտենալէն գեղացին
 շփոթեցաւ , և խուճապելով մը կացի-
 նը և փեղոյրը ձգեց փախաւ . « աս ի՛նչ
 պիտի ըլլայ » , ըսաւ կիլով ինքնիրեն .

« քանի մը բանտարգելոց ազատութիւն
 տալու համար պիտի ըլլայ » . և աշտա-
 րակը նկատելով՝ աղէկ մը հասկըցաւ
 գեղացիին դիտաւորութիւնը , իջաւ
 փոսին մէջ , թուփի մը տակ նստաւ այս
 եղևնական գործոյս վերջը տեսնելու
 համար . շատ չանցաւ աշտարակին վը-
 րայէն ձայն մը լսեց . ահանջ դրաւ .
 « Մատն հո՞տ ես , կը հարցընէին , շատ
 ձայն մի՞ հաներ , որ ձեռք չանցնինք .
 քառորդ ժամէ մը կ'ազատինք , հրա-
 ցանները անտառին մէջ որոշեալ տե-
 ղը խաչին տակը դրի՞ր մի . անկից եր-
 թանք պիտի առնենք . վերջն ալ Շոէ-
 տերին ճամբան սպասենք որ անոր սոր-
 վեցընենք » .

« Ո՛վ Մատուած » , ըսաւ կիլովինք
 նիրուն . « ասոնք իմ խեղճ հօրս թշնա-
 մութիւն պիտի ընեն . Վայտենապախերի
 ձայնն է ա՛ս » . լռութիւնը տիրեց , և
 կիլով ամենեւեկին տեղէն չի շարժեցաւ ե-
 ղածը տեսնելու և լսելու համար . քիչ
 մը ետքը մէկ մեծ քար մը ինկաւ փոսին
 մէջ , և ան ատեն կիլով թուփին տակ կըծ-
 կըտելով՝ տեսաւ որ Վայտենապախեր գը-
 լուխը ծակէն դուրս կը հաներ , որսոր-
 դը չորս դին նայելով՝ « այս ի՞նչ է » ,

ըսաւ , « մարդ չի կայ հոս . բայց Անտոնն ալ չի կայ . . . Անտոնն , ո՛ւր ես » .
 մարդ պատասխան չի տար . . . « Անտոնը
 գացեր է . . . ի՞նչպէս կ'ըլլայ , մեզ թո՛ղ
 ղուց գնաց » . ըսաւ ու ետ քաշվեցաւ :

Հաս չ'անցաւ Պրանտէր եկաւ գըլուխը դուրս հանեց . « իրաւ է » ըսաւ ,
 « Անտոնը հոն չէ . բայց անոր փեղոյրը եկացիներ կը տեսնեմ կոր . խնդալու բան մըն է փախչիլը . հոգ չէ՛ , մեր բանը նայի՛նք , աղէկ մը ցաթկելու է . ի՞նչ բանէ կը վախնանք . թէ հոս ենք մեռեր թէ կախաղանին վրայ , երկուքը մէկ բան է . աւելի այս փոսին մէջ մեռնիլ կ'ուզեմ քան կերակուր ըլլալ ագուաւներուն , ուրեմն ժամանակ չի կորսընցընենք , վախկոտ մարդը բան չի վատրկիր , ես ցաթկեմ , դու ալ ետեւէս եկուր » մէյմ՝ ալ ցաթկեց եկաւ կիլումէն յիսուն քայլ հեռու փոսին մէջ ինկաւ , գրեթէ հինգ վայրկենի չափ անշարժ մեռածի պէս մնաց . կիլում կը կարծէր որ մեռաւ :

Վայտէնպախէր աշտարակին վրայէն ըսաւ , « է՛հ , ի՞նչ կ'ընես կոր , գլուխդ կոտրեցա՞ւ , ըսէ՛ , պատասխան տո՛ւր ինձի » . — « Ո՛վ Աստուած » , ը-

սաւ Պրանտէր , « սրունգներս շատ կը
ցաւին կոր , բայց հոգ չէ' , մեռած
չեմ' » . ելաւ առաւ Անտոնին կացինը
դուռը կտորելու , բայց դուռը չէր
կտորեր :

« Եւէ' » , աղաղակեց յանկարծ « , խօս
սելու ձայն կը լսեմ , պահուրտուէ' »
ինքն ալ խոտին մէջ պառկեցաւ :

Կիլոմ ականջ դրաւ , և ճանչցաւ
Հենրիկոսի ու Դանիէլին ձայնը , որոնք
քաղաքը կ'երթային իրիկունը գինետա
նը մէջ անցընելու . « շատ չի կենանք »
ըսաւ Հենրիկոս , « մանաւանդ չի գինով
նանք , որ հայրս չի յանդիմանէ » :

« Դուն հոգ մի ըներ , սի'րելիս » ,
պատասխանեց Դանիէլ , ձեռքը Հեն
րիկոսին տալով . « ընելիքնիս կարգի կը
դնենք . միայն թէ մեր ընկերները հոն
գտնայինք , անցած կիրակի քսան ըս
քուտ վաստրկեցայ » , որ համրեց . « նա
յինք այսօր այսչափ պիտի վաստրկի'նք
մի » . — « Ես այս երեկոյ շատ խաղալու
չեմ' » , ըսաւ Հենրիկոս . « ստակ չ'ունիմ .
իմ շիշ մը գինիս պիտի խմեմ , երեք
կամ չորս մասն (բառ-թի) պիտի խա
ղամ , և ձեր խաղալուն պիտի նայիմ' » :

« Աս բան մը չէ' » , ըսաւ Դանիէլ .

ուսին զարնելով . « քեզի տան սքուտ
 փոխ կուտամ , որ անարժաթ ասպետի
 մը պէս կախ երեսով չինատիս հոն » :

« Ի՞նչ ստակդ չեմ ուզեր , արդէն
 քսան և հինգ սքուտ պարտք ունիմ
 քեզի » :

« Հոգ չէ . չեմ ուզեր որ այն տեղ
 նստիս միայն մեր խաղալը նայիս . վրադ
 կը խնդան , և դու Պ . Շուէտերի որ-
 դին չե՞ս մի » :


Այս խօսակցութեանս ատեն , զորն
 որ ամբողջ լսեր էր կիլում , երկուքը
 աշտարակին առջիւնի միջոցէն անցեր
 էին , և իրենց ճամբան շարունակեցին
 դէպ ՚ի քաղաքը : Երբոր անունք հեռա-
 ցան , Պրանտեր գլուխը վերցուց և ը-
 սաւ . « մեզ բռնել կրցողները գացին .
 է՛հ Վայտենպախէր . դուն ալ ցաթկէ
 եկուր հոս » . և այն ալ ցաթկեց եկաւ
 ինկաւ խոտին մէջ ընկերոջը քովը , քիչ
 մը ինքրիկները ժողվելէն ետքը , երկու-
 որսորդները անտառին ճամբան բռնե-
 ցին գացին :

Կիլում ալ զորն որ մարդ չէր տե-
 սած , ելաւ և շտապաւ հօրը տունը
 գնաց , սիրտը կը նետեր սաստկու-
 թեամբ . այն երկու եղեռնագործնե-

բուն ընելիք գէշութիւնը սաստկապէս
 կը ներկայանար իւր շփոթեալ երեւա-
 կայութեանը առջին . խեղճ տղայն թե-
 ւեր ունենալու կը փափաքէր , որ ժամ
 մը յառաջ հօրը իմացընէ գլխուն գա-
 լիքը . քանի որ կը մօտենար , այնչափ
 ալ իր անհանգստութիւնը կը շատ-
 նար . աշտարակէն մինչեւ որ տուն գը-
 նաց , հազար անգամ հայր կանչեց , յու-
 սալով որ անտառին մէջ կը հանդիպի
 անոր . բայց ո՛չ ձայն մը լսեց . և ո՛չ
 ալ մէկը տեսաւ . տանը բակը մտած
 ատենը քրոջը (Իանօին մեղմ ձայները
 լսեց , և ըսաւ ինքնիրեն . « խեղճ Ղուխ-
 զա , դուն նուագարան կը զարնես , եր-
 բոր հայրդ իր թշնամեացը գնտակ-
 ներուն մատնուած է . ա՛հ Աստո՛ւած .
 դու պաշտպան եղիր անոր . Ս . կուսին
 պաշտպանութիւնը հասնի . ամիս մը
 տէր ողորմեա՛ ըսեմ , թէ որ հայրս այս
 վտանգէն ազատի » :

Այս ըսաւ և բարեպաշտ տղան
 մտաւ կամաց մը Ղուխզային սենեակը ,
 որ իր նուագածութեան տետրերը կը
 գոցէր կոր . Ղուխզան՝ երբոր մեռելի
 պէս դեղնած տեսաւ զկիլով , վախցաւ ,
 և հարցուց թէ ի՞նչ եղեր է . իսկոյն

մայրը խոհանոցէն եկաւ , ուր ընթրիք
պատրաստելու գացեր էր :



Գ Լ Ո Ւ Խ Գ

Գիշերային արշաւանք մը :

Կիլոմ կը նետուի մօրը բաղուկնե-
րուն մէջ , և մէկ նուազեալ ձայնով մը
կը պատմէ անոր տեսածն ու լսածնե-
րը , և Վայտէնպախէրին ու Պրանտէ-
րին այն գիշեր ընելիքնին . իւր հայրը
կորանցընելու երկիւղը անանկ ներգոր-
ծեր էր անոր՝ որ բոլոր մարմնովը կը
գողգողար . խեղճ մայրը սկրսաւ լալու ,
և իւր երկանը դէմ եղած այս նոր դա-
ւադրութիւնը լսելով կ'ազաղակէր ճը-
ջելով :

« Լմեն ատեն չէի՞ ըսեր , որ այս ա-
նիրաւները վերջապէս մէկ օր մը պիտի
մեռցընեն հայրդ . Իչպէհառթ , Բօն-
րատոս , Մնդրէաս , Մաքս , առէ՛ք հը-
րացաննիդ և շուներնիդ , և շուտով
գացէ՛ք ձեր տիրոջը օգնելու » :

Այս չորսը իրենց տիրոջը ըլլալիք թշնամութեանը վրայ կատարելով առին զէնքերնին, կանչեցին շուներնին, և գացին անտառը խաչին քով, ուր այն երկու որսորդները խոստացեր էին գրտնուելու Շուտերին սպասելու համար. կիլումն ալ ընկերացաւ ասոնց, թէպէտեւ մայրը չէր թողուր :

Երբոր հասան այն որոշեալ տեղը, Լպէհաութ ըսաւ ընկերներուն. « քիչ մը անտառին մէջ մտնանք խաչէն հեռանալով. չ'ըլլայ որ չարագործները ըզմեզ տեսնան. երբոր իրենց համար հոս դրուելիք զէնքերը առնելու գան, առաջ լեցրնենք հրացաննիս, ետքը պառկինք, ձայն ալ չի հանենք, գալու ըլլաննէ՛ ան աստէն կը նայինք :

Չորսն ալ լեցուցին հրացաննին, և կիլումը մէջ տեղերնին առնելով գետինը պառկեցան, հանդարտ կեցան. յուսալով որ շուտ մը որսորդներուն ոտնաձայնը կը լսեն. քառորդ ժամէ մը 'ի վեր սպասեցին, երբոր Լպէհաութ քիչ մը գլուխը վերցուց « ահա՛ կուգան կոր » ըսաւ գրեթէ անխմանալի ձայնով մը. « խաչին մօտեցեր են. և խոտին մէջ բան կը փնտրուեն կոր, կ'առնեն

կոր հրացաննին, ճշդիւ Պրանտէրն ու
Վայտէնպախէրն են, ո՛վ չարագործ-
ներ, սպասենք քիչ մը, նայինք ի՞նչ
պիտի ընեն » :

Երկու անիրաւները խաչին տակը
զէնքերնին կը փորձեն, և սոսկալի ե-
ղևո՛նագործութիւն մը կը խորհին ա՛յն
սրբազան ծառին տակ, ուրկից վազեց
երբեմն Մատուծոյ արիւնը աշխարհիս
փրկութեանը համար. անոնք իրենց վը-
րէժինդրութիւնը յագեցընել կ'ու-
զեն այս խաչին քով. որուն վրայ աւան-
դեց անմեղը իւր հոգին, իրեն դա-
հիճներուն ներելով, բայց Փրկչին պատ-
կերին տեսքը անոնց համար ամենեւեմ
ազգեցութիւն մը չ'ունեն. այս խաչը՝ որ
մեղաւորին անգամ յուսոյ առարկայ մըն
է, անոնց սրտին չէր դպչեր. չարագոր-
ծութեան համար խստացած հոգինին
ծախուած էր դժոխքին, և երկինքն ա՛լ
անոնց բաժինը չէր :

« Հիմա տակից երթանք », ըսաւ
Վայտէնպախէր, « ու վարի կաղնիին տակ
նստինք մեր մարդուն սպասելու » . և
ելան գացին կաղնիին տակ, հոն մէկ
տեղ կը խօսակցէին. Պրանտէր կ'ըսէր
թէ « Ժամանակը ուշ է, կարելի է որ այս

իրիկուն Շուէտէր չի գար » . — « կու
գայ » ըսաւ , « Վայտէնպախէր գեղեցիկ
է այս երեկոյ , ես քեզնէ աղէկ կը ճանչ
նամ իմ մարդս » :

Կիլով տերեւի պէս կը դողար , վախ
նալով որ չ'ըլլայ թէ այն երկու չարա
գործներուն գնատակացը զոհ ըլլայ իւր
խեղճ հայրը . Իպէհաութ ալ նոյնպէս
կը վախնար . և խորհեցան որ որսորդ
ներուն վրայ կրակ ընեն , որ իրենց տի
րոջը մնաս մը հասցընեն , արդէն ծուն
կի եկած՝ հրացաննին պարպելու վրայ
էին , երբ որ Տիան Շուէտէրի հաւա
տարիմ ընկերը սպասաւորներուն առ
ջին ներկայացաւ Իպէհաութ նշանացի
ըրաւ որ չի հաչէ . հանճարեղ կենդա
նին ալ հասկընալով՝ անշարժ կեցաւ .
քիչ մը ետքը Շուէտէրն ալ եկաւ , և
զարմացաւ երբ որ իւր մարդիկը և որ
դին ա՛ն ժամանակ անտառին մէջ տե
սաւ . Կիլով քովը վազեց , քաշեց իրեն ,
և բանը յայտնեց անոր , մատով ցու
ցունելով ա՛յն երկու չարագործները ,
որոնք արեւմտեան կողմը դարձեր էին ,
յուսալով որ անկէց անոր գալը կը տես
նեն , երբ որ Շուէտէր արեւելեան կող
մէն եկած էր . Այն ալ վախցաւ , բայց

եւտքը ինքն ալ ծուռնկ չոքած նստաւ իր
մարդոցը մէջ ըսելով. « հոգ մի՛ ընէք,
այս անիրաւները ազատելիք չունին
ձեռքերնուս » :

« Ե՛ւ, այս տեղ ժամանակ կը կոր-
արնցուներէք կոր » ըսաւ Պրանտէր, կար-
ծեմ աւելի աղէկ կ'ըլլայ բաներնիս եր-
թանք և թողուէք զՇոէտէր, ես չեմ
կրնար ա՛յն մարդուն վրայ հրացան պար-
պել, ընտանեաց հայր և հետեւաբար
բարի մարդ մըն է » :

« Եւ մե՛նք » պատասխանեց Վայ-
տէնպախէր, « մե՛նք ալ ընտանեաց հայր
չե՞նք մի . ես եօթն տղայ ունիմ, դու
ալ հինգ, ողորմիլն ի՞նչ է. անոր մնար
նէ շատոնցու ընէ կախաղանը ելած էիլք,
պէտք է որ կամ ա՛ն մեռնի կամ մե՛նք » :

Շոէտէր, որ այս խօսքերը լսած էր,
ոտքի ելաւ, և հրաման ըրաւ իւր մար-
դոցը որ առաջ քալեն. հանած ձայներ-
նէն իմացան որսորդները անոր գալուս-
տը. « կարծեմ կուգայ կոր » ըսաւ
Վայտէնպախէր :

« Ա՛յո՛ կուգայ կոր » պատասխանեց
Շոէտէր բարձր ձայնով մը. « ահա՛ կու-
գայ կոր սպասած մարդերնիդ. թէ որ
քիչ մը ընդդիմութիւն ընէք՝ բաներ-

նիդ լումնցած է ։

« Դեռ չէ ։ » պօռաց Վայստէնպախէր դառնալով և ինքրզինք պաշտպանելով բայց չի թողուցին անոր բան մը ընելու ։ հապիւ թէ ոտքի վրայ ելած էր , որ Լապէհաթ ու Մաքսը վրան վազեցին , նորէն գետինը վաւեցին , առին ձեռքէն հրացանը , և շատ դժուարութեամբ կապեցին ։

Պրանտէր ամենեւին ընդդիմութիւն չ'ըրաւ , և ինք առաւ իր հրացանը Շուէտէրին ։ Պրանտէր՝ Վայստէնպախէրի պէս եղծեալ չարագործ մը չէր , անկից աւրուած և անոր պատրանացը զոհ եղած էր ։ « Աստուած ողորմի կընտըս և մարդոցս ։ » ըսաւ արցունքը սրբելով , « գիտեմ որ բանս գէշ է ։ որովհետեւ մեր մեղաց չափը լեցուեցաւ ։ »

« Այո՛ , իրաւ է ։ » պատասխանեց Շուէտէր , « շատ աղէկ էր քեզի քու փոքրը վաճառականութիւնդ շարունակել քան որսորդ ըլլալ ։ պէտք էր որ այս ամեն բաները առաջկուց գիտնայիր , և որ մը ասանկ կախաղանին վրայ մեռնելու վտանգին մէջ չ'իյնայիր ։ ահա՛ այս պիտի ըլլայ քու վիճակդ , որովհետեւ գիտցած եղիք որ այս անգամ Տազէից

աշտարակին մէջ չի պիտի բանտարկուիք ,
որ կարողանաք փախչելու . այլ զատ
բանտերու մէջ պիտի դրուիք , քալե-
ցէք ա՛նիրաւներ , շուտ քալեցէ՛ք . որ
դուռները չի գոցուած քաղաքը հաս-
նիլիք » :

Սպասաւորները՝ որսորդները չորս
կողմը առին մէկ տեղ կապեցին , և մէջ
տեղերնին առնելով դէպ ՚ի քաղաքը կը
քալեցընէին :

Երբ որ կիլով ասանկ իւր հօրը կեան-
քը մահուանէ կ'աղատէր , Հենրիկոս՝
Դանիէլին և ուրիշ քանի մը իրենց պէս
մարդոց հետ գինեատունը նստած՝ իւր
ստակը կը կորսնցընէր խաղ խաղալով .
քուէները կը դառնային սեղանին կա-
նաչ գորգին վրայ , և միշտ Դանիէլ
չը վաստրկէր , ետեւէ ետեւ ուրիշներէն
խաբէութեամբ յափշտակած փայլուն
սքուտները գրպանը կը լեցընէր . Հեն-
րիկոս բոլոր ունեցած ստակը կորսըն-
ցուցեր էր . Դանիէլ փոխ սուաւ ա-
նոր . բայց շատ չ'անցաւ ամենն ալ ինք
առաւ , Հենրիկոս հանեց գրպանէն հօ-
րը ժամացոյցը և սեղանին վրայ դրաւ .
Դանիէլ այս բանիս դէմ գանգատելով
« Հենրիկոս » ըսաւ . « ահա՛ ստակ ,

ա՛ռ տասն սքուտ ալ . բայց ժամացոյցդ պահէ՛ , հայրդ անանկ կը կարծէ որ ես գողցեր եմ . գիտես ա՛ անոր խատու թիւնը » :

Հենրիկոս այս խօսքերէն խաբուելով , և ամենեւին չի կասկածելով որ դաւ մըն էր աս , ինկաւ որոգայթին մէջ , ժամացոյցը առաւ և ձեռքը երկրնցուց . տասն սքուտը համրուեցաւ իրեն . բայց այս ստակն ալ ուրիշներուն պէս կորսուեցաւ . Դանիէլ անանկ ծարստարութեամբ մը դարձուց քուէները որ բոլորն ալ վաստրկեցաւ . Հենրիկոս կատրելով սեղանէն ելաւ , Դանիէլն ալ ետեւէն . միւս երկու ընկերները դեռ մէկ տեղ կը կռուէին , ասոնք բակին մէջ իրար գտան . և Դանիէլ Շուէտէրի որդւոյն ըսաւ . « ծարաւէս կը մեռնիս կոր . մարդ խաղալու ետեւէ ըլլալով՝ քան խմել կը մտնայ . և կուր ներս մտնանք . թօքայի շիշ մը գինի առնենք » . ետքը աւելի անուշքերնելով ըսաւ . « իրաւցընէ այս իրիկուն շատ ձախորդ գնաց քեզի . քանի՞ կ'արծէ հորդ ժամացոյցը » — « Զգիտեմ . բայց ան ալ խաղու պիտի դնեմ . քիչ մըն ալ նայիմ ի՞նչպէս պիտի ըլլայ . ա՛ռ , տուր ինձի

տասն եւ հինգ սքուտ, ասոր արժէքին
հաշուովը", Դանիէլ առանց դժուա-
րութիւն ցուցրնելու, առաւ ժամացոյ-
ցը և տասն սքուտ տուաւ, Հենրիկոսին
հետ մէկ տեղ ներս մտան, և գինին
հարստանալու նոր փափաք մը գրգռեց
անոնց երակներուն մէջ, նորէն խա-
ղալու սկըսան. Դանիէլ դիմացինը որ-
սալու համար առջի բերանը կորսըն-
ցունել ուղեց. բայց շուտ մը դարձրնե-
լով խաղը, սկըսաւ առնելու, և բոլորո-
վին Հենրիկոսը կողոպտեց, որ տեսնե-
լով ստակ չի մնալը, աղաղակեց զայրանա-
լով. « այս խաղին մէջ խաբէութիւն
կայ. անհնար է որ ամեն ատեն մէկ
մարդ մը վատարկի. հինգ հոգի ենք. և
մինակ քեզի՞ կը յաջողի կոր. թէ որ ա-
սանկ շարունակես, բանդ գէշ է. որ մը
չէ՛նէ՛ որ մը խաբէութիւնդ պիտի յայտ-
նուի. և կախաղանին վրայ պիտի վճա-
րես » :

« Ի՛նչ » պօռաց Դանիէլ մէկ սոս-
կալի ձայնով մը. « կախաղա՛նը պիտի ել-
լեմ, դո՞ւ կ'ընես ինձի այս սպառնալի-
քը. դո՞ւ կ'ընես ինձի այս թշնամանքը.
ես ա՛լ չեմ կրնար համբերել որ քեզի
պէս չար մը ». և գրպանէն դաշոյն մը

հանեց . . . բայց միւս երիտասարդները
 ձեռքը բռնեցին և չի թողուցին որ բան
 մը ընէ :

Հենրիկոս սեղանէն ելաւ , և ա՛ն
 ատեն աղէկ մը ճանչցաւ Դանիէլին
 ինչպէս մարդ ըլլալը , ուրկից չէր կրո-
 նար զատուիլ , և այս խաբեբային ցը-
 ցուցած բարեկամութիւնը ճիշդ ի՛նչ
 ըլլալը հասկըցաւ . այն միջոցին միտքը
 եկաւ իր հօրը խրատները , և մօրը ազ-
 դարարութիւնները . անարդ յանցաւոր
 մը դարձած էր ինքն իրմէն ամբշնարով ,
 խղճմտանքէն տանջուելով՝ անոր կրշ-
 տամբանքներէն փախչիլ կ՛ուզէր . բայց
 խիղճը զանի հալածելով՝ խթանով կը
 մղէր :

Երբոր խեղճ Հենրիկոս ասանկ իւր
 մաածութեանցը մէջ ինկած էր , փողո-
 ցին մէջ ձայն մը լսեց . բացաւ պա-
 տուհանը և նայեցաւ . « նայէ՛ ի՛նչ է »
 ըսաւ . « ահա հայրս , եղբայրս , մեր մար-
 դիկները որ երկու որսորդ կը տանին .
 ո՛վ Աստուած , Վայտենպախէրն ու Պը-
 րանատէրն են . ի՛նչպէս այս երկու չա-
 րագործները բանտէն փախեր են » , և
 դուրս ելաւ մօտէն տեսնելու , իսկոյն
 ամեն կողմէն մարդիկ թափեցան . ա՛ն

ասուն շենրիկոս աղէկ ճանչցաւ իւր
հայրը, և այս գիշերային արշաւանացս
մէջ եղող բոլոր անձինքը • բայց միշտ
հեռուն կը կենար, որ Շուէտէր չտես-
նայ, որն որ շատ բարկացած կ'երեւէր:

Սակայն ժողովուրդը խուռն բազ-
մութեամբ կը թափէր չարագործնե-
րուն բոլորաիքը, և զանոնք կը յանդի-
մանէր • ամեն պատուհանները դիտող-
ներով լեցուած էին, և բազմութիւ-
նը միշտ շանալով քաղաքին բանտե-
րուն դուռը հասաւ • բանտապետը դու-
ռը բացաւ, զարմանալով որ Տաղէից
աշտարակին մէջ բանտարկուած երկու
յանցաւորները կը բերէին:

« Այս անգամ ձեռքէս ազատելիք
չունիք » ըսաւ • « ձեզի աղնիւ մարդա-
րիակ մանեակներ պիտի դնեմ, որ խա-
բէութիւն ընելու փափաքնիդ անցընէ •
է՛հ, յօ՛սլին • Սօ՛նալէնթուրա, բերէ՛ք
մեծ շղթաները և զարկէ՛ք սա՛ անիրաւ-
ներուն » • երկու սպասաւոր գացին և
երկու մեծ շղթայ բերին • ժողովուրդը
այս չարագործներուն վրայ թափած կը
թշնամանէր, երբոր յանկարծ երկու
կին շատ մը տղաքներով մէկ տեղ ձեղ-
քեցին ամբոխը և Շուէտէրին ոտքը ին-

կան, աղաղակելով և աղաչելով որ ամուսիննին դատաւորին ձեռքը չմատնէ :

« Մէկդի գացէ՛ք » , ըսաւ Իշպէհաւթ երբոր Շուէտէրբանտապետին կը պատմէր այն երկու աւաղակներուն բանտէն փախչիլը . « մէկդի գացէ՛ք , և այս չարագործներուն համար միջնորդութիւն մի՛ ընէք . որովհետեւ թէ որ իւրենց դիտաւորութիւնը յաջողէր , Շուէտէր մեռած էր հիմայ , գիտէ՞ք որ բանտէն փախչելով անտառը գացած են դանի սպաննելու համար . իմ տէրս պատուոյ աէր մարդ մըն է . վեց տարի է որ անոր ծառայութիւն կ'ընեմ , և երբէք մէկու մը անիրաւութիւն ընելը չտեսայ . իշխանին շահը կը նայի , որուն որտորը և վերահացուն է՝ թող չտար որ այս չարերը որս գողնան . և ահա՛ ասոնց թշնամութեանը պատճառբողորը այս է , այս երկուքը շատ գէշութիւններ ըրած են , մեղքընալու մարդիկ չեն . ա՛լ անոնց աւաղակութեանցը փախճան մը տալու ժամանակն է » .

Բազմութիւնը կատղեցաւ Իշպէհաւթի այս խօսքերը լսելով . և այն երկու եղևնագործներուն վրայ պիտի

յարձակէր, թէ որ բանտապետը զանոնք անոնց բարկութենէն չպահպաներ, Շուէտէր և իր մարդիկը ելան գացին. Հենրիկոս և Գանիէլ ալ անոնց հետեւեցան հեռուէն երթալով, Գանիէլ կ'ուրախանար իր վաստրկելուն և տիրոջը ժամացոյցը առնելուն վրայ. բայց Հենրիկոս համարձակութիւն չուներ իր ընտանեացը առջեւ երեւնալու, և գետիներ անցնիլ կ'ուզէր.

Վերջապէս տուն հասան, Հենրիկոս բակին մէջ նստարաններէն մէկուն վրայ նստաւ, և պատուհանէն տեսաւ որ հայրն ու մայրը կը գգուէին զկիւրմ և կը սիրէին հայրը մահուանէ ազատելուն համար. ասոր վրայ սկըսաւ լալ, չէր ուզեր ան տեղ կենալ. « ո՛վ Աստուած իմ » ըսաւ ինքնիրեն. « ի՛նչ պիտի ըլլամ. շատ յանցաւոր եմ, իրաւ ո՛ւնք աւնին զիս երեսէ ձգելու. ա՛հ, թէ որ այս իրիկուան ըրածներս գիտնա՛ն. չեմ համարձակիր այս բանը մտածել. գազան մըն եմ ես ».

Շուէտէր հարցուց թէ ամենն ալ տուն եկա՞ն մի, և պատուհանը նրստաւ որ տեսնէ թէ բակին դուռը գո՞ց է մի. տեսաւ որ Հենրիկոս նստարանին

վրայ նստեր է . « յո՛ւ իզա » , ըսաւ աղջիկանը . « աղքատ մը եկեր է . գնա՛ կտոր մը հաց տո՛ւր » : — « Մասնկ ուշ ատեն ատանց ապաստանի մնացեր է » , ըսաւ աղջիկը , և քիչ մը հաց կտրեց պատուհանէն վար տալու համար :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Գանիելի երթալը , Հենրիկոսի փախելը :

Երբոր յո՛ւ իզա հաց կուտար այն կարծեցեալ մուրացկանին , ան ալ ելաւ և քրոջը վրան նայեցաւ . « դո՞ւ ես ե՛րբայր իմ » , պօռաց աղջիկը . « ի՞նչ կ'ընես սպող աեղը . ինչո՞ւ ներս չես մտներ » :

Հենրիկոս այս խօսքերուն վրայ որոշեց ներս մտնալու . ստուերի պէս պատերուն քովէն սողալով՝ օտար մարդու մը պէս մտաւ ընտանեացը մէջ . « ահա՛ մուրացկանը » , ըսաւ հայրը ցաւագին աչօք նայելով երիտասարդին վրայ . « ո՞ւրկից կուգաս այս ժամանակ . յայտնի է որ գինետունէն . երբոր ամեն մարդ այս տեղ վշտաց մէջ կը սա-

ուսալի , երբ քու հօրդ կեանքը սպառ-
 նալիքներ կը կրէ , դուն խմելով և խա-
 դալով կը զուարճանաս . անանկ չէ՞
 Հե՛նրիկոս . երիտասարդ քրիստոնէի մը
 վարմունքը այս է մի . կ'ամբընամ ըսելու .
 բայց ճշմարիտը այս է , սպասաւորնե-
 րէս է՛ն յետինը աւելի վատահոլթեան
 արժանի է . և քեզնէ աւելի կանոնա-
 ւոր կեանք կ'անցընէ . թէ որ այս կեր-
 պով շարունակես , որ մը Այտէնպախէ-
 րի և Պրանտէրի պէս պիտի ըլլաս . կամ
 հիւանդանոցին մէջ կամ կախաղանին
 վրայ պիտի մեռնիս , գինովութենէն և
 խաղամոլութենէն աւելի մարդուս ան-
 պատուութիւն բերող բան չկայ . այս
 կիրքը՝ որ ամեն մոլութեանց մայրն է ,
 մարդը անատունէն ալ նուաստ և ա-
 նարդ կ'ընէ , անոր աղնուական որպիսու-
 թիւնները կ'ոչնչացընէ , գեղեցիկ բը-
 նաւորութիւնները կը խախտանէ , ինք-
 նագլուխ էակ մը կ'ընէ և թշուառու-
 թեան մէջ կը խորասուզէ , ուրկից ան-
 հնար է ելլել անոր . ահա քու ապա-
 գայդ , Հե՛նրիկոս , կրնա՞ս այս բանե-
 րը առանց սարսափի մտածել * :

* Ո՞վ է որ ինձի համար դարձեալ
 զրպարտութիւն է ըրեր քեզի * , ըսաւ
 Հե՛նրիկոս կամակորութեամբ .

« Ի՞նչ », կրկնեց հայրը . « քեզի հա-
մար զրպարտութի՞ւն ըրեր են . եղբայ-
րդ չես՞ց մի Դանիէլին հետ ըրած խօ-
սակցութիւննիդ , երբոր անոր հետ
մէկ տեղ Տաղէից աշտարակին առջեւէն
կ'անցնէիք , ա՛յն երկու աւազակներուն
փախչելէն քիչ առաջ » :

« Աղբայրս քեզ խաբեր է , այս ի-
րիկուն չխաղացի . Դանիէլը կ'անչէ՛ և
հարցո՛ւր » . Դանիէլը կանչուեցաւ .
որ Հռէտէրի ժամացոյցը գրպանը դը-
րած եկաւ . Հենրիկոս հարցուց թէ
այն իրիկունը խաղ խաղալը իրա՞ւ է մի .
Դանիէլ ուրախացաւ երիտասարդը խո-
նարհեցընելու , և գինետանը մէջ ան-
կից կրած թշնամանացը վրէժխնդիր
ըլլալու առիթ գտնելով . Հենրիկոսի
հարցմանը պատասխանելուն տեղ , դար-
ձաւ Հռէտէրին , և մէկ ուրախական
կերպով մը ըսաւ .

« Ուրախակից կ'ըլլամ քեզի ո՛վ
տէր , Պ . Հենրիկոսի պէս բարեկիրթ
որդի մը ունենալուդ . որ մը մեծ պա-
տիւ պիտի ըլլայ քեզի . և ամեն մարդ
պիտի գովեն զանի , գեղեցիկ յօժարու-
թիւններ ունի . . . բայց թշուառու-
թեանց գուշակ ըլլալ չեմ ուզեր . ա-

պաղայն պիտի յայտնէ ձեզի թէ խաբու
ուած եմ թէ ո՛չ, այս օրուան խընդ
րոյն գալով՝ որովհետեւ սուտ խօսիլը
չեմ սիրեր, կը պարտիմ ըսելու թէ ո՛չ
թէ միայն խաղ խաղաց, այլ շատ ալ
խաղաց, և շատ ստակ կորսընցուց, ին
ձի պարտական եղած քառասուն և
հինգ սքուտը չեմ ուզեր, բայց . . . » :

« Ի՞նչ », ըսաւ Շուէտեր բարկու
թեամբ. « քառասուն և հինգ սքուտ
պարտք ունի քեզի. դուն ինչո՞ւ այդ
անիրաւութիւնը ըրիր, որ առանց ին
ձի իմացընելու տուիր. ի՞նչ ըրաւ այդ
ստակը, խաղի՞ մէջ կորսընցուց » :

« Կայներ է թող ինք պատասխանէ », ը
րաւ Դանիէլ. « մի կարծեր տէր իմ
որ ուզելովս տուի այնքան ստակը. հե
տերնիս գանուողներուն առջին անոր
պատիւը պահելու համար էր » :

« Պապանձէ՛, ա՛նիրաւ », պօռաց
Հենրիկոս զայրանալով, « թէ որ խա
բեբայ չ'ըլայիր, այնչափ չէիր վատը
կեր. կեղծ քուէներովդ ամենուն քա
կը պարպեցիր » :

« Կատակ կ'ընես կոր Պ. Հե՛նրի
կոս », կրկնեց Դանիէլ. « կեղծ քուէ
ներով զիս ամբաստանելով վրէ՛ժ առ

նել կ'ուզես, պէտք է որ քիչ մը խօսք
քրդ գիտնաս. թէ որ ամեն ըրածնե-
րը ըսեմ հօրդ . . . » :

« Դեռ ի՞նչ կայ թշուառական »,
հարցուց Հռէտէր զայրագնելով :

« Դեռ ի՞նչ կայ, ըսէ՛ ինձի ուրե-
մըն, ժամացոյցդ ի՞նչ եղեր է » :

Հռէտէր ժամացոյցը կախուած պա-
տին վրայ նայեցաւ և հոն չտեսաւ զա-
նի. Դանիէլ անոր քարկուծիւնը տես-
նելով, և ստոյգ յաղթանակ մը յուսա-
լով, « ահա ժամացոյցդ » ըսաւ. « օ-
տարներուն ձեռքէն առի քեզի տալու
համար. թէ որ ասանկ չընէի, ասոր
քանը լըմնցած էր » :

Հռէտէր ա՛լ համբերեց, որդւոյն
վրայ կը վազէր կոր, բայց կինը չթո-
ղուց, Հենրիկոս հօրը ոտքը ինկաւ, և
աղաչեց որ մտիկ ընէ. յայանեց անոր
Դանիէլին զինքը գինեատուն տանելու
համար գործածած միջոցները. և անոր
խաղու մէջ ըրած խարդախութիւնը.
Վերջը իւր ըրածներուն թողութիւն
խնդրեց, և խոստացաւ որ ա՛լ անկից
ետքը ինքրզինքը շտկէ :

Հռէտէրի քարկուծիւնը քիչ մը
անցաւ, և քիչ մը ատեն մտածելէն ետ-

քը ըսաւ . « շատոնցու ընէ գիտեմ որ
 իժը մեր մէջն է , որովհետեւ ես ալ
 անձամբ տեսայ յանիելին կեղծ քուէ-
 ներ շինելը , վաղը կարգին կը դնենք .
 արդարու թիւնը կը նայինք . . . » յանկարծ
 ինքրդինքը քաշեց , որ աւելի բան չխօ-
 սի . յանիել հասկը ցաւ այս խօսքերուն
 միտքը և վախցաւ :

« Հիմակու հիմա բան մը չ'ըլլար » ,
 կրկնեց Շուէտէր . « Թող ամեն մարդ եր-
 թայ պառկի , այսօր շատ յոգնեցանք » :

Ամեն մարդ տեղը դնաց . մինակ յա-
 նիել չ'քնացաւ . որովհետեւ սարսափե-
 լով Շուէտէրի խօսքերէն , վախնալով ոս-
 տիկանու թեան ձեռքը իյնալէն , և եր-
 կար ժամանակ խաղու մէջ խաբէութիւն
 ընելուն համոզուելով՝ այս բանիս ա-
 ռաջը առնել կը նայէր . նստաւ անկո-
 ղինին վրայ , և սկըսաւ մտածել . « Ին-
 չո՞ւ երկար բարակ մտածեմ այս տեղ ,
 և իմ թանկագին ժամանակս կորսնցը-
 նեմ » , ըսաւ ինքնիրեն . « դեռ կէս
 գիշեր չէ . մարդ իմ վախչիս չտեսած՝
 կրնամ շատ ճամբայ առնել , ա՛լ այս
 սուէնը թողում , ուր ամեն բան լըմնցաւ
 ինձի համար . թէ որ հիմայ չ'երթամ ,
 վաղը իրիկուն բանափն մէջ պիտի պառ-

կիմ, երթալու է * . ետքը սկըսաւ իւր
 ստակը համրելու, և հարիւր քսան ըս-
 քուտի գումար մը գտաւ . լաթերը
 գըրոցէն առաւ ծրար մը ըրաւ, պա-
 սուհանը բացաւ նետեց տանը առջե-
 ւի ճամբուն վրայ . անկողինին լաթերն
 ալ առաւ, պասուհանին երկաթներէն
 մէկուն կապեց, և վանդակապատին
 շուրջը եղած պատին վրայ իջաւ սո-
 ղալով . անկից վար ցաթկեց, և աղա-
 տեցաւ . առաւ ծրարը շալկեց, և սու-
 նէն հեռացաւ, ըսելով՝ * մնաս բարով
 Պ . Հոկտեր, վաղը ոստիկանութեան
 մասնէ, զիս ալ Վայտէնպատի և Պը-
 րանտի պէս չպիտի կրնաս ձեռք սա-
 լու . մնաս բարով սրտաշարժ յիշատակ
 մը թողուցի քեզի . Հենրիկոս ինձմէ
 վրէժ պիտի առնէ * . ճամբան դէպ ՚ի
 քաղաքը շտկեց, դարձաւ և Տրակիոյ
 ճանապարհը բռնեց, ուր տեղ յոյս ու-
 նէր հարստանալու :

Մնտառապետին տանը մէջ մարդ-
 չէր կասկածեր այս փախուստէն, և
 խիստ զարմացան երբոր աւտուն Պա-
 նիէլ սեղանին վրայ չ'երեւաց միւս ըս-
 պասաւորներուն հետ թան ուտելու,
 Լպէհատ թասոր սենեակը ելաւ, և

չուտ մը վար իջաւ ծանուցանելով թէ
Դանիէլ գացեր է :

Շուտե՛ր բանը հասկըցաւ, և ուստի
անուրբեան համար խօսք ընելուն վըրայ
զղջաց. որով այս անիրաւ մարդուն
առիթ առաւ արժան եղած պատու հասէն
փախչելու. Դանիէլի փախուստը Շուտե՛րի
ընտանեացը մէջ շփոթութիւն ձգեց,
մայրը կը կարծէր թէ անտառին մէջ
պահուրտած է իւր ամուսնոյն սպասելու,
և որսորդներուն գործը նորոգելու համար.
և այս բանը շատ ճշմարտանաման
կը թուէր անոր, որովհետեւ այս
երիտասարդս աղէկ գիտէր Շուտե՛րի
շատկէկ գացած տեղերը, և գուրս
ելելու ժամանակները, մայրը իւր
այս երկիւղը իմացուց իւր զաւակացը,
որոնք արտասուալից աչք գացին
աղաչեցին հօրերնուն՝ որ զգուշանայ,
մինակ գուրս չելայ. Հենրիկոս
և Իսպէհաթ միշտ անոր հետ ընկերանալու
հրաման առին. նայինք հիմակ
Հենրիկոս ո՛րչափ ատեն իւր հօրը
ընկեր եղաւ :

Շատ չքչեց տեսաւ Հենրիկոս Դանիէլ
երթալէն առաջ եկած իւր ճանճութիւնը.
Թէպէտ և ներսանց կը

Ճանչնար այն մարդուն ներկայութե
 նէն ծագաց գէշութիւնները, բայց ա
 նանկով ալ անկից բաժնուելուն վրայ
 երբեմն երբեմն կը ցաւէր. հայրը՝ որ ըզ
 գուշութեամբ կը հսկէր վրան, կը նա
 յէր որ լաւագոյն զգացմունքներու ա
 ռաջնորդէ զանի, անոր համար աւելի
 խոհական խրատներ կուտար խստիւ ար
 գիլեց գինետուն երթալը, որ նորէն ու
 ըիշմուլութեանց զոհ ըլլալու ենթակայ
 էրլայ. մայրն ալ համոզական խօսքերով
 առաքինի մարդուն վայելած երջանկու
 թիւնը կը նկարագրէր, երբոր Աստու
 ծոյ կամայր հնազանդելով մոլութեան
 հրապոյրները կը մերժէ, և բարի գործ
 քերու ետեւէ կ'ըլլայ. Հենրիկոս զըզ
 շալ ցուցուց, և հառաչանքներ ընելով
 յոյս և անկալութիւն տուաւ. բայց
 գէշ սովորութիւնները խորունկ արմա
 տացեր էին անոր հոգւոյն մէջ, որով
 դժուարին էր անոնցմէ հրաժարիլ ա
 ռանց հաստատուն կամաց. այս իւր
 շղթայներուն ծանրութիւնը զգալով
 երբեմն երբեմն կը թօթուէր, բայց
 կոտրելու համարձակեցաւ. իւր ծը
 նողացր խրատները այս անիրաւ կամա
 կոր և յանդուգն սրտին վրայէն անլոր

նետերու պէս սահելով վար կ'իշնային .
 յաւիտենական ճշմարտութիւնն ալ ը-
 սած էր . « որ սիրէ զվտանգ 'ի նմին
 կորիցէ » . տասն և ութն դարու ընթաց-
 քով այս խօսքերս արդարացաւ . հիմակ
 ալ Հենրիկոս իր կողմէն պիտի արդա-
 րացրնէ :

Կանոնաւոր կեանք վարելը ծանր ե-
 կաւ անոր , և իր վրայ եղած հսկողու-
 թիւնը անարդ լուծ մը թուեցաւ . դի-
 նետուէն և խաղէն հեռանալը ամենա-
 դժուարին զրկողութիւն մը եկաւ իրեն .
 որովհետեւ իր ա՛յն հասակին մէջ (որ
 տասն և ինն տարեկան էր) աղաս կը
 կարծէր զինքը իրեն աղէկ երեցածին
 պէս իւր ժամանակը գործածելը , և ու-
 ղովհետեւ իւր առջի վարմունքը ձեռք
 առնելու համար ստակ չուներ , Դանի-
 էլն ալ հոն չէր , որ իրեն փոխ տայ , ա՛ն
 ատեն իւր վիճակը աւելի ծանրացաւ ,
 և հաստատութեամբ երդում ըրաւ որ
 ինքը զինք ասկից ազատէ :

Կիրակի որ մը երբոր մօրը , քրոջը ,
 և Կիլօմի հետ ընկերացած պատարա-
 գէն գիւղ կը դառնար , քաղաքին ա-
 ւելի բանուկ փողոցներէն կամաց կամաց
 քալելով իւր խաղու ընկերնէրէն մէ-

կու՛ն պատահեցաւ , մէկզմէկ ողջու՛նեցին և սկըսան խօսելու : Երբոր ընկերը գիշերը մէկ տեղ չգտնուելնու՛ն պատճառը հարցուց Հենրիկոս իրեն և Դանիէլին պատահածները անոր յայտնեց , և յաւելցուց որ ստակ չ'ու՛նենալովը , չէր կրնար գալ :

« Մե՛ղք որ չես կրնար գալ » ըսաւ , « որովհետեւ քանի որ Դանիէլ գացեր է , մեր ժողովքները աւելի զուարճալի են , ամենքնիս ալ ժամանակ ժամանակ կը վատարկինք կոր . բայց երբոր ան հո՛ս էր , մինակ ինքը կը ժողվէր ստակները . այս իրիկու՛ն եկո՛ւր , և քեզի երկուսքուտ տամ՝ նա՛յէ ի՛նչ աղէկ պիտի վատարկիս » . Հենրիկոս գլխով նշանացի ըրաւ , և գնաց մօրը հետ միացաւ երեկոցին տունէն ելաւ զբօսնելու պատրուակաւ . լեցուց ծխախայտը , քիչ մը պըտրտեցաւ վակարանին բռշորը , և գընաց արդէն ժամը ութը անցեր էր՝ որ տեղան նստան , Հենրիկոսէն զատ ամենքն ալ տունն էին , անոր հոն չը գրանուելը սաստիկ անհամբարտութիւն պատճառեց մօրը . գուշակեց որ վաւակը ինքրզինք չշտկելէն զատ , կամայ կամայ իր առջի սովորութիւննե-

որ ձեռք պիտի առնէ , թէ որ մէկ
հնարը չգտնուի :

Մայրը չ'ուզեց այս բանիս վրայօք
սպասաւորներուն առջին ամուսնացն
հետ խօսելու , վախնալով որ չ'ըլլայ թէ
անխոհեմութիւն մը ընէ . բայց երբոր
սպասաւորները գացին , ծանոց անոր
իւր վիշտերը . Շւէտեր ալ նոյնպէս
վշտակից եղաւ անոր . ասանկ մէկ տեղ
կը խօսէին , երբոր Հենրիկոս չափէն
աւելի գինովցած տուն եկաւ . ծնու
ղացը առջին ելլելու համարձակելով ,
ուզեց շուտ մը սենեակը ելլել և պառ
կիլ . բայց հայրը՝ որ իրեն խօսելը ի
մացեր էր , կանչեց , Հենրիկոս հար
կադրեցաւ կամայ ակամայ հօրը առջին
ելլել :

« Այլէկ կ'ատուգես կոր » ըսաւ ,
այն առածը , « մէյմը խմողը պիտի խը
մէ . . . չե՞ս ամհնար , անիրաւ , քու
անկարգութիւններդ նորէն ձեռք ա
ռիր . արդեօք Դանիէ՞լը գտար , մէկ
տեղ մոյութեանց մէջ ընկղմելու հա
մար . գիտցած եղի՛ր որ ազդու միջոց
ներ ձեռք պիտի առնում կուրութեամբ
պրարտած անդունդիդ եզրերէն ըզ
քեզ մէկդի առնելու համար . հիմայ

բանդ գնա՛ վաղը կը հասկընաս » • Հեն-
րիկոս մէկ երկու խօսք ըսելով իւր սենե-
կակը ելաւ , և անկողինին վրայ նետ-
ուեցաւ անարգ անասունի մը պէս , ա-
ռանց մտածելու իւր արարիչը » •

Հետեւեալ օրը Շուէտի-ր գնաց գը-
տաւ զանի իր սենեկին մէջ , և հայրա-
կան իշխանու թեամբ խօսեցաւ հետը •
յայտնելով թէ ասկից ամիսէ մը իւր
վարմունքը չիօխէ նէ՛ խստութիւնը ՚ի
գործ պիտի գնէ • և զանի իշխանին
բանար գնել պիտի տայ , իւր գերդաս-
տանը անպատուութենէ պահելու հա-
մար •

Հենրիկոս այս խօսքերը մտիկ կ'ը-
նէր իր ընկիւքը որոշող մարդու մը ան-
հոգութեամբ • ո՛չ ինքըզինքը արդա-
բացընելու խօսք մի , և ո՛չ ալ խոստ-
մունք մը բերնէն չ'ելաւ • արձանի
պէս լուռ կը կենար • և գիտես թէ ա-
ւելի հօրը սպառնալեացը վրայ կը խըն-
դար քան թէ անոր խոհական խրատնե-
րէն կը շարժէր •

Այն ժամանակէն սկըսելով այս թըշ-
ուառ երիտասարդը օտարականի մը պէս
կը համարէր զինքը իւր ընտանեացը մէ-
ջը , ո՛չ մօրը գորովանքը , ո՛չ եղբօրը

գգուանքը , ո՛չ քրոջը սէրը չկրցան
 այս երիտասարդը ուրիշ զգացմունք-
 ներու գարձընել . — « ի՞նչ » կ'ըսէր
 ինքնիրեն , « զիս բանտարկելու սպառ-
 նալի՞ք կ'ընեն , ես գո՞ղեմ . ի՞նչ յան-
 ցանք ըրի , զիս ո՞վ գիտցան . անոնց
 հասկըցընեմ պիտի , որ ես կարօտու-
 թիւն մը չ'ունիմ իրենց . և տղայ չը
 գիտնան զիս . աղէկ ըրաւ Դանիէլ , փա-
 խաւ . ես ալ անոր պէս պիտի ընեմ , որ
 այս անարգ հսկողութենէս ազատիմ .
 տղու պէս զիս պիտի ծեծեն , ա՛լ ան
 բանը լըմնցաւ » . Ուզեց շուտ մը իր դի-
 տաւորութիւնը կատարել . բայց ստակ
 պէտք էր . կիրակի օրը վեց սքուտ վաս-
 տրկեր էր . բայց սա բան մը ըսել չէր ,
 գիտէր որ հայրը քանի մը օր առաջ ըս-
 տակի գումար մը առեր էր . դրած տե-
 ղն ալ գիտէր , և մինակ մտուկը կտա-
 րելու հնարքը կը նայէր , ամեն կաս-
 կած փարատելու և իւր չարութիւնը
 ՚ի գործ դնելու պատեհութիւն ունե-
 նալու համար՝ հիւանդ ձեւացաւ սաս-
 տիկ գլխուցաւով . և հրաման ուզեց
 որ սենեակը մնայ , որսի չ'երթայ . Շը-
 ուէտէր ալ խաբուեցաւ , և հաճեցաւ
 որ շենքիկոս տունը մնայ . այս խաբե-

բայն՝ մօրը պարտէզը , և կիլօմի և խուխ
 զայի քաղաքը եկած ժամանակը պատե-
 հութիւն գտնելով , բացաւ հօրը սըն-
 տուկը , առաւ 150 սքուտը , պլէց լա-
 թի մը մէջ , աւելի հարկաւոր բաները
 պատասա մը ըրաւ , և անկողինին սակը
 մէկ կողմ մը դրաւ , և գիշերուան կ'ըս-
 պասէր փախչելու անանկ սուռնէ մը ,
 ուր իւր կարծեօքը ամեն բան իրեն
 դէմ դաշնակցեր էին . գիշերը հասաւ ,
 լուսթիւնը կը տիրէր . Հենրիկոս կե-
 ղակուրի սենեակը իջաւ . իր ի՞նչպէս
 ըլլալը հարցուցին , և ծածկեալ բառե-
 լով պատասխանեց թէ միշտ քիչ մը
 ցաւ կ'զգայ գլուխս . բայց քիչ մը կե-
 ղակուր ուտելու միտք ունիմ . արդա-
 ընւ ախորժակով մը կերաւ , գինի ալ
 խմեց , գիշեր բարի ըսաւ ծնողացը ,
 և քնանամ ըսելով ելաւ գնաց .

Երբոր սենեակը դարձաւ , լաթե-
 լովը անկողինին վրայ ինկաւ , փախչե-
 լու յարմար ժամանակին սպասելով . քը-
 նացաւ և արթնցաւ որ ժամացոյցը կէս
 գիշեր կը զարնէր . « արդէն կէս գիշեր
 է եղեր , երթալու ատեն է » ըսաւ ինք-
 նիրեն , առաւ պատասար կախեց ձեռքի
 գաւաղանին , բացաւ կամաց մը սենե-

կին դուռը, իջաւ սանդուղքէն վար,
 և քիչ մը կայնեցաւ ականջ դրաւ որ
 մարդ իմացած չըլլայ. իայց որովհե-
 տեւ կատարեալ հանդարտութիւն էր,
 դուռն ալ բացաւ և բակը մտաւ. հոն
 գտաւ Տիանը՝ որ եկաւ կը քծնէր. նը-
 շանացի հասկը ցուց որ չի հաջէ, և ա-
 սանկ ազատեցաւ « հիմակ ո՞ր կողմէն
 երթամ » ըսաւ ինքնիրեն. « արեւել-
 քի կողմէն երթալու է. հոն կը ծագի
 արեւը, անկից կուգայ երջանկութիւ-
 թիւնը » :

Արտորնօք հեռացաւ առանց դոյզն
 ինչ վշտանալու հայրենի տանը վրայ,
 ուր թէ որ ուզէր, երջանիկ կրնար ըլ-
 լալ, և բռնեց իրակայի ճամբան, յու-
 սալով որ երկրիս մայրաքաղաքին մէջ
 բարեբաղդ կ'ըլլայ.

Գիշերը գեղեցիկ էր, և փախստա-
 կանը կը շարունակէր իւր ճամբան ան-
 տառին մէջ, որուն ամեն ճանապարհ-
 ները գիտէր. արդէն ժամու մը չափ
 քալեր էր, երբոր կամուրջի մը հասաւ
 հոն քիչ մը կեցաւ որ հանգստանայ. և
 տեսաւ որ Տիանը ետեւէն կուգայ.
 այս խեղճ կենդանիս կարծեր էր թէ
 անոր դուրս ելլելը որսի արշաւանք մը

ընել է . և իր անբոլոր օրդւոյն ուրբէն
չէր զատուեր :

« Ահա Տիանը » , աղաղակեց Հեն-
րիկոս , հաւատարիմ շուեր տեսնելով .
« հոս ի՞նչ կ'ընես , իմ թշուառական
վիճակիս մասնակից ըլլալ կ'ուզես .
դարձի՛ր հօրս տունը , թո՛ղ զիս . որով
հետեւ ինձի համար աշխարհիս մէջ
ինձմէ զատ մէկը չկայ . գուցէ քիչ մը
ետքը ինձի համար ալ հաց չախտի գըրա-
նամ , և ո՛ւր տեղ քեզի համար գտնեմ ,
թո՛ղ զիս , խեղճ անասուն կը խաբուիս
ետեւէս գալովդ . ա՛լ ես Հենրիկոս Շը-
ռէտէրի օրդին չեմ . փախստական մը ,
անբաղդ մըն եմ չխղճաս զիս , դարձի՛ր
հօրս » : խեղճ կենդանին տրտում կեցեր
էր , գիտես թէ երիտասարդին ամեն
խօսքերը կը հասկընար . սկըսեց ուրբե-
րուն քճնելու , բայց Հենրիկոս գա-
ւաղանը վերցուց վրան՝ զարնելու մը
պէս . և ցուցուց անոր երթալիք ճամ-
բան , բայց Տիան կը պօռար անոր խըս-
տութիւնը յանդիմանելու կերպով մը ,
և պահուրտեցաւ կամուրջին նշաննե-
րէն մէկուն ետին , Հենրիկոս երեսը
դարձուց անկից . առաւ պատասար , և
հեռացաւ հառաչելով :

Շահատի և իւր Գերդաստանին վերայ :

Շահատի հետեւեալ օրը կանուխ գնաց շենրիկոսին սենեակը ի՛նչպէս ըլլալը հասկընալու համար . բայց ո՞րչափ զարմացաւ երբոր հոն չգտաւ երիտասարդը . վարիջաւ , հարցուց թէ մարդ տեսեր է զշենրիկոս տեղ մը . բայց մէկն ալ չէր գիտեր . գացին տանը և պարտէզին ամեն խորշերը նայեցան . շենրիկոս չէր երեւար . և տեսան որ իր զգեստներուն մէկ մասը չկար . որով հաստատուեցաւ երկիւղնին որ չըլլայ թէ փախած ըլլայ . սակայն կը յուսային որ կուգայ . որովհետեւ կը կասկածէին թէ ստակ չ՞ունեն . քանի մը օրէն ետքը Շահատի տեսաւ որ սնտուկը բացուեր է . և 150 սքուտ պակաս է մէջէն .

Ամիս մը անցաւ . շենրիկոս չեկաւ ամեն մարդ այս դժուարին հարցումը կ'ընէր . « շենրիկոս ի՛նչ եղաւ » . երբոր այս փախստեանս համբաւը քաղա-

քին մէջ տարածուեցաւ , չարասէր
մարդիկ սկսան ըսելու թէ Հենրիկոս
ինքրդինք մեռցուցեր է . և թէ անոր
մարմինը անտառին մէջ ծառի մը տակ
գտնուեր է . և սակայն մարդ մը չէր
կրնար ցուցրնել այս դիպուածիս պատա-
հած տեղը . ինքնին յայտնի է խեղճ մօ-
րը վիշտը , երբոր այս բաները կը լսէր .
իր որդւոյն համար զուրցուած ամեն
խօսքերը անոր սիրտը խոցող մէկ մէկ
նետեր էին . իւր այրն ալ՝ որ ամեն պա-
րագաներու մէջ համբերող և քաջա-
սիրտ էր , այն ալ ամենաախուր արրա-
մուծեան մը մէջ ինկաւ . ո՛ւր որ կը
գտնուէր , թէ՛ որսի , թէ՛ իւր մարդոցը
մէջ , և թէ սեղանը վիշտը իւր հետն
էր , խեղճ հայրը գիտես թէ ամեն տեղ
իւր որդին կը փնտրուէր . և իւր շուր-
ջը գտնուած անկենդան բաներուն ան-
գամ գրեթէ իր որդին կը հարցընէր .

« թէ որ անգամ մը նամակ մը առ-
նէի անկից » կ'ըսէր երբեմն , « և գիտ-
նայի տակաւին ողջ կամ մեռած ըլլա-
լը » .

Շատ անգամ կը տեսնէին որ հա-
ռաչելով Հենրիկոսի անուընը կ'արտասա-
նէր . երիտասարդին տեղ մը չպահաւը-

տելը ստուգելու համար բոլոր երկրին
մէջ փնտուեցին գետերուն և լիճերուն
մէջ ալ նայեցան . փոսերուն լեռներուն
քարայրներուն մէջ փնտուեցին . վախ-
նալով որ չ'ըլլայ թէ այն տեղուանք
թաղուած կամ մեռած ըլլայ անօթու-
թիւնով . բայց ամեն բան անօգուտ
եղաւ , անոր անուներ և անձին վրայօք
ծանօթութիւններ խրկեցին զինուորա-
կան կանայքները և երկրին կառավա-
րութեան մեծերուն , բայց 'ի զուր .

Այն ատեն հայրը շփոթելով ըսաւ
ինքնիրեն . « տղաս կամ անուներ փոխեր
է , կամ հեռաւոր երկիր մը գացեր է .
գուցէ մինչեւ Ամերիկա . կամ գու-
ցէ կենդանեաց համարէն արդէն ջրն-
ջուեր է . գուցէ գեղին գերեզմանա-
տանը մէջն է . բոլոր մարդոցմէ անծա-
նօթ մնացած առանց իւր գերեզմա-
նին վրայ արցունք մը թափուելու .

Ի հոնարատու ժողովրդապետն ալ , ու-
րուն իմացուցած էր կիլով այս թրշ-
ուառութիւնը , շատ անգամ կաւգար
այս բարի գերդաստանին , և կը մխի-
թարէր ըսելով .

« Ո՛վ գիտէ որ քանի մը տարիէն
ետքը Հենրիկոս չափտի գայ զգաստաւ »

ցած , զեղջի եկած . և մէկ նոր մարդ
մը եղած . այս եղածները անսուսկ
որդւոյն պատմութիւնը կը բերեն միտ-
քըս . այս տեղ տղայնիդ շատ աղէկ էր ,
ուրիշ տեղ երթալ ուզեց . ուրիշնե-
րուն հացը ուտելու գնաց , հեշտու-
թեան և աղէկ բաներու յուսով , ա-
զատութիւն վայելել ուզեց . բայց իւր
դիտաւորութեան մէջ պիտի խաբուի .
Ատուած անոր աղէկ խրատ մը կը
պատրաստէ , ուրեմն մի' արտաք , ու-
րովհետեւ շատ չքշեր պիտի տեսնէք
որ Հենրիկոս իրեն թշուառ կեանքէն
պիտի ձանձրանայ , և պիտի գայ ծո-
ցերնիդ ինչայ թողութիւն խնդրելով :

Այս խօսքերը զորոնք մարդարէ ու-
թիւն մը կը համարէր գերդաստանը ,
շատ մխիթարեցին սիրտերը : Հռէտեր
և իր կիներ կը համարէին որ ժամանակ
մը զրկուած են իրենց որդւոցմէն . յու-
սալով որ որ մը կրկին պիտի տեսնեն
զանիկայ :

Ասանկով շատ ամիսներ անցան ,
տերեւեները ծառերէն թափիլ սկըսան ,
արեգակը ուշկէկ կը ծագէր հորիզոնին
վրայ , մառախուղները երբեմն անոր ձա-
ռագայթները կը խափանէին , շտեմա-

րանները կը զեղուին հնձոց առատու
 թենէն, տակառները գինիով լեցուե-
 ցան. հիւսիսային հողմը սաստկու թեամբ
 ձմեռ կը կոչէր. ամենայն սրբոց տօնն
 ալ մօտեցեր էր. այս տօնախմբու թենէն
 ութն օր առաջ, դպրոցները յաճախե-
 լու պատրաստ աշակերտները իրենց ա-
 նուներ արձանագրել տալու կը փութա-
 յին. կիլօմն ալ հայրենի տուներ թողլով
 Տրակա պիտի երթար իւր ուսմունքը
 շարունակելու համար. մայրն աւ քոյ-
 րն ալ անոր բաները պատրաստելու
 կ'զբաղէին. ժողովրդապետին քոյրը՝
 որ Տրակայի մէջ կրթուած է այն տեղ
 հօրեղբայր մը ունէր, կը խոստանար իւր
 հօրեղբօրը տուներ տեղաւորցունելու
 զկիլօմ, ուր աղէկ խնամք, դարման և
 բնակարան կը գտնար. լէ՛ծնարատուն ալ
 արդէն իւր աշակերտը դպրոցին մեծա-
 ւորին յանձնած էր, գիտցընելով անոր
 իւր յօժարութիւններն ու կոչումը.

Բանի որ սիրելի կիլօմէն բաժնուե-
 լու ժամը կը մօտենար, այնչափ կը վըշ-
 տանար մայրը. « գուցէ ալ զանի չի պի-
 տի տեսնեմ », կ'ըսէր ինքնիրեն. « կա-
 բելի է որ տղայս իւր փափաքած վիճա-
 կին չի հասած՝ ես կը մեռնիմ, խեղճ կի-

լում, ինչո՞ւ ինձսէ՛ն այսչափ հեռու
կ'երթաս » :

« Չի հասկըցուելու կին մըն ես », պատասխանեց ամուսինը . « միանգամայն կ'ուզես որ գերդաստանիդ մէջ քահանայ մը ունենաս , և տղադ քովդ մնայ . դո՞ւն՝ եթէ ե՞ս պիտի սորվեցընենք անոր հարկաւոր եղած ուսմունքը , Տ . Սէնարտո՞սն է մի արդեօք , չէ՛ . անանկ է նէ պէտք է որ երիտասարդը մեզնէ հրաժարի , եթէ ո՛չ բան մըն ալ ըլլալիք չ'ունի . ո՛վ որ մէկ բանին վախճանը կ'ուզէ , պէտք է որ անոր միջոցներն ալ ուզէ . մէկ մըն ալ որ կիլում շատ հեռու չի պիտի երթայ աս տեղէն . Տրակարածնիս աշխարհիս ծայրը չէ՛ . կրնամ ժամանակ ժամանակ երթալ զանի տեսնել . և որովհետեւ աղէկ տան մը մէջ պիտի տեղաւորուի , շատ հանգիստ կրնանք ըլլալ ասոր վրայօք » :

Բայց մայրը կը վախնար մեծ քաղքի մը գայթակղութիւններէն , և կը զանգիտէր սրդւոյն պարզամտութենէն և կոչմանէն . թշուառութենէ և դժբաղդութենէ զատ ուրիշ բան չէր մտածեր . արդէն Հռաքելի նմանելով , որ իւր վաղահաս մահուամբ մեռած որդիքն Եստաստէն .

Արթուրու օրը գալով՝ կիլով առ-
 առն կանուխ ելաւ, և գնաց ծնրադ-
 րելու Քրիստոսի պատկերին առջին ա-
 նանկ ջերմեռանդութեամբ՝ որ կը կար-
 ծուէր թէ աշխարհային մարդ չէ,
 Աստուծոյ օգնութիւնը խնդրեց որպէս
 զի բնակելիք մեծ քաղաքի մը վտանգ-
 ներուն մէջ անարատ և մաքուր մնայ,
 և խոհական և առաքինի վարմունքով
 մը և բարի ուսմամբ՝ կոչուած գերա-
 գոյն կարգին պատրաստուի, Տէրն ալ
 մարդասիրութեամբ ընդունեց իւր ա-
 ղօթքը. պատանին ելաւ կայնեցաւ քա-
 ջալերութեամբ իւր ապագային վրայ
 լիովին հաստատուելով, իջաւ հօրը
 սենեակը, ուր պատրաստ էր նախաճա-
 շիկը. շատ շանցաւ Շուէտէր ներս ե-
 կաւ, կիլովի բաները պարունակող ծա-
 նրը սնտուկը կառքին վրայ կապելով,
 սեղանի նստան, և յանկարծ դուռը
 բացուեցաւ, յէնարտոս ժողովրդա-
 պետը և իւր քոյրը ներս մտան.

« Բարի ախորժակ » ըսաւ հովիւը,
 ողջունելով ա՛յն փոքրիկ ընկերութիւ-
 նը.

« Հրամեցէ՛ք, Տ. ժողովրդապետ ».
 պատասխանեց Շուէտէր, ոտքի ելլելով,

բայց ժողովրդապետք բան չկերաւ . ու
 բովհեանէ դեռ սուրբ պատարագ չէր
 մատուցած . « միայն հրաժարական ող-
 ջոյնս տալու եկայ իմ սիրելի աշակեր-
 տիս , և անոր կրկնելու այս օրերս խօ-
 սածներս » պատասխանեց . « Օրանքն
 ալ գրեցի , » ըսաւ կիլոս . « և ձեզի
 ունեցած պարտականութիւններս չպի-
 տի մոռնամ » :

« Հատ աղէկ , իմ փոքրիկ բարեկա-
 մըս . Տրակայի մէջ ուսումնական և ա-
 ուաքինի մարդիկներ պիտի գտնես , որ
 իմաստութեամբ ճշմարտութեան ճամ-
 բուն մէջ առաջնորդ պիտի ըլլան քեզի .
 սրտաշարժ յիշատակներ պիտի գտնես
 սուրբ անձանց բազմութեան մը մէջ ,
 որ քեզի օրինակ պիտի ըլլան , նաեւ
 մեծ կամուրջին վրայ սուրբ Յովհաննէս
 Նէպոմիկենէս հայրապետին և խոստո-
 վանութեան մարտիրոսին արձանը պի-
 տի տեսնես . որն որ աւելի նախապա-
 տիւ համարեց մեռնիլք բան թէ յայտ-
 նել բարեպաշտ թագուհւոյ մը իրեն
 հաւատացած ապաշխարութեան սուրբ
 դատաստանին ամենասուրբ գաղանեա-
 ցը կնիքը , այս օրինակները՝ մեր հա-
 ւատքը և քաջասրտութիւնը կենդանա-
 ցրնելու համար եղած են :

« Ուրիշ բանէ չեմ վախնար » ըսաւ մայրը արձուները սրբելով . « միայն թէ որդւոյս անխորձառու ըլլալը վաանգի մը պատճառ չ'ըլլայ իրեն . մեզնէ երբէք զատուած չունի . քաղաքներուն վարմուները չգիտեր , դիւրաւ գէշութեան մէջ կրնայ իյնալ , երբ որ այս բանըս կը մտածեմ , ո՛վ Աստուած , կը գողամ » :

« Այս երկիւղդ իրաւացի կ'ըլլար , Տիկին » , պատասխանեց ժողովրդապետը . « թէ որ մեր կիլումի բնաւորութիւնը չգիտնայինք . ես երաշխաւոր եմ անոր , և աղէկ գիտեմ որ զիս սուս չպիտի հանէ . Աստուծոյ երկիւղը անոր առաջնորդը պիտի ըլլայ , և զանի՝ մոլութեան իւր անխորձառութեանը լարած որոգայթներէն պիտի պահպանէ . գիտէ կիլում , որ Տիրոջը աչքը ամեն տեղ մարդուս վրայ է , և թէ զուր տեղը կը ջանայ մեղաւորը անոր հետազոտող աչքերէն ծածկուելու , ծովուն անդնդոցը յատակը իջնանք , լեռներուն տակ պահուիք , գետնի խորունկն ալ մանանք , ամեն տեղ զԱստուած պիտի գտնանք . Աստուծոյ ներկայութեան մտածութիւնը չարագործին պատժին

է . բայց արդարին ալ մխիթարութիւն
 նրն է . աշխարհի մէջ կորսուած ծա-
 ծուկ բան չկայ , գործքերնիս և խօս-
 քերնիս , խորհուրդնիս և իղձերնիս ,
 ամենքն ալ յաւիտենական վրիժուց և
 վարձուց գրքին մէջ գրուած են , ա-
 հա մեր կիլումի զգացումները ա-
 սոնք են . որով ամենեւին երկիւղ չու-
 նիմ անոր համար . գիտէ որ սեղանոց
 ապագայ պաշտօնեայ եղողը նախ և ա-
 ուաջ Աստուծոյ պիտի ընծայէ Աբելի
 անմեղութիւնը , վերջը կ'ստացուին Ա-
 հարոնի բարեպաշտութիւնը և Մով-
 սէսի գիտութիւնը , և անոնցմով՝ բա-
 ըի քահանայի մը վայելիք ուրիշ որպի-
 սութիւնները :

Կիլում բռնեց արգոյ Հովիւին ձեռ-
 քը , և ստէպ կը համբուրէր յայտնե-
 լով մը թէ անոր ամեն խօսքերը հաս-
 կրցեր է . և թէ իւր սիրտը կը հաս-
 տատէր իւր արգոյ վարժապետին ամեն
 զուրցածները :

Սակայն հայրը սեղանէն ելաւ և
 գնաց նայելու թէ ամեն բան պատ-
 րաստ է մի . քիչ մը ետքը եկաւ և ծա-
 նոյց որ ձիերը անհամբեր են , կիլում
 հասկըցաւ , գնաց ծունկ չոգեց մօրը

առջին, որ ա՛ն ալ իւր օրհնէնքնիրը
տուաւ :

Եւ իսկան եղբօրը քովը կեցած՝ ար-
ցունք կը թափէր, զանի իւր սրտին
սեղմելով, ա՛յնչափ դժուար կուգար ա-
նոր եղբօրմէն զատուիլը. մայրն ալ շատ
կը ցաւէր, և ա՛յն ատեն բացուեցան
իր սրտին ամեն վէրքերը. իւր միւս
որդին կը մտածէր, որ ա՛յն ալ իր սի-
րոյն հաղորդ էր, բայց իւր գորովէն
խորշելով կը թափառէր աշխարհի մէջ
նոր անատակի մը պէս. ո՛հ անոր վիշտե-
րուն առաւելու թիւնը գիտնալու հա-
մար՝ մօր մը սրտին ի՞նչ ըլլալը հասկընալ
պէտք է, երբոր միտքը կը բերէր մի և
նոյն կաթով սնուցած իւր երկու որդ-
ւոցը հակառակ վարմունքը, որոնք այս-
չափ հակառակ ճամբաներու մէջ կը պը-
տրտէին :

Վերջապէս կիլով մեկնեցաւ Եւ-
նարտոսի հետ, և մայրն ալ իւր սեն-
եակը քաշուեցաւ ազատութեամբ ող-
բալու :



Ժ Լ Ո Ւ Խ Լ Ե

Հենրիկոս Հոկտեր Բրահայի մէջ :

Երբոր կիսով իւր ուսմունքը շարունակելու համար հօրը հետ մէկ տեղ Պօհէմիոյ մայրաքաղաքը կ'երթար, կըռիմայտի կոմսին բերդին մէջն ալ խեղճ և անժանօթ պատանի մը ընդունեցին, զանի ծուլութենէ ազատելու և թըշուառութենէ փրկելու համար, կոմսուհին՝ որ բարեպաշտ և մարդասէր աիկին մըն էր, այս պատանին իւր քովը ընդունելովը բարի գործ մը ընել կարծեց. սկըսեց անոր ապագային վրայ զբաղելու, անկից հնազանդութիւն և երախտագիտութիւն յուսալով, բայց շատ չի քչեց տեսաւ որ խաբուեր է. որ մը աթբանիս վրայ գանգ տեցաւ երկանը, որն որ պատասխանեց.

« Այո՛, ամենը ես առաջուց գիտցայ. և քեզի չի հակառակելու համար էր որ հաճեցայ թէ այն երիտասարդը հոս մտնէ. ամենեւին չ'ախորժեցայ ան.

կից, և որտիւ անոր ի՛նչ ըլլալը կրցայ
գատել, Երբ որ այն տարիքը մարդ մը իր
ճնողքը կը թողու, որ իր խօսքին նայե-
լով վիճակնին աղէկ մարդիկ են եղեր,
պէտք է որ ծանր պատճառներ ունե-
նայ: Կ'ըսէ որ անտառապետի մը որդի
եմ, և թէ իւր հօրը խատու թենէն բըռ-
նադատեալ թողուցեր է հայրենի տու-
նը: այս ալ շատ մտածելու բան մըն է.
իրենց ճնողացը խատու թենէն գանգա-
տող տղաքները սովորաբար անմիտ կ'ըլ-
լան, չ'ըսեմ չար: իւր ճնողացը բնա-
կած անզը մեզի ըսել չ'ուզեր բնաւ.
և Հենրիկոս կլաց անունն ալ կարելի է
որ իր ճշմարիտ անունը չէ: Արդ ևս
զգուեր եմ անոր վարմունքէն, և միտքս
գրեր եմ առտուն զանի վռնտելու, թէ
որ սպասաւորի մը կարօտութիւն ու-
նինք, գիւրաւ ասկից աղէկ մէկը կըր-
նանք գտնալ":

« Դու գիտես » ըսաւ կոմսուհին.
« ուզես նէ վռնատէ. թէ որ Հենրիկոս
ալ պատուոյ զգացում ունի նէ, այս
վռնտութիւն անոր օգտակար կ'ըլլայ.
Բայց չեմ յուսար որ ասանկ իւր բարե-
կամները գէշ ընարող մարդու մը վար-
մունքը փոխուի »:

« Անշուշտ » կրկնեց կոմսը . « ա-
նարդ խաբեբայ երիտասարդի մը վըս-
տահու թիւն չըլար . առաջ խելքը գը-
լուխը բարեկարգ մէկը երեցաւ , բայց
կամաց կամաց բացուեցաւ . շատոնցու ը-
նէ իմ վստահութիւնս կորսընցուց . մա-
նաւանդ այն օրու ընէ՝ երբ որ իմացայ
որ ինքըզինք խաղու և խմելու տուած՝
գիներտու ններուն մէջ կը կռուըտի . և
խաղու մէջ կորսընցուցած ասունը կը
հայհոյէ . ա՛լ բաւական եղաւ . ասանկ
գէշ մարդ մը իմ տանս մէջ չեմ կրնար
պահել » :

Կոմսը ելաւ և զանգակը զարկաւ .
քանի մը վայրկեան ետքը ծեր դռնա-
պանը ներս մտաւ . և հարցուց թէ ի՞նչ
կ'ուզէր իր Մեծափառութիւնը .

« Հո՛ւտ հիմա ինձի խրկէ շէն-
րիկոսը » ըսաւ կոմսը .

« Հիմա՞ » ըսաւ ծերը .

« Ա՛յո՛ , հիմա » :

« շէնրիկոս հոս չէ՛ , բայց թէ որ
Մեծափառութիւննիդ կ'ուզէ , գըտ-
նել տամ . գրեթէ ուր ըլլալը գիտեմ » :

« Ո՛ւր կը գտնուի ան » :

« Անշուշտ գիներտուներ Վոպուռկի
կամսին օրսորդին հետ թուղթ կը խա-

դայ . շատ գիտնալ կ'ուզեմ թէ այս երիտասարդը ո՞ւրկէց կ'առնէ այս խորճած ստակները ?

« Բաւական է , բարեկամ ? պատասխանեց կոմսը . « գնա՛ բանդ ? » . Ետքը իւր կնոջը դառնալով՝ ըսաւ . « աղէկ գիտեմ , ո՞ւրկէց կ'առնէ ստակը . այս առտու ալ տեսայ անոր մէկ նոր անհաւատարմութիւնը , ուրիշէն կասկած կ'ընէի , բայց հիմա աղէկ ստուգեցի որ Հենրիկոսն է գողը . շատ կը ցաւիմ սանկ մէկ չար մը իմ ծառայութեանս պահելուս » :

Վերջը նորէն հնչեցուց զանգակը . ծեր դռնապանը եկաւ .

« Փիլիպպոս » ըսաւ կոմսը . « Հենրիկոսի հոս պառկիլը վերջին անգամն է . այս բանը իմացուր անոր իմ կողմէս . ամսականը վճարէ՛ . վաղը առտու թող երթայ . հասկըցա՛ր » :

« Այո՛ , տէր իմ , հաւատարմութեամբ պիտի կատարեմ հրամաննիդ » :

Հենրիկոս հանգիստ կը զուարճանար գինեատուներ , երբոր իր վճիռը կը տրուէր . կը խմէր , կը խաղար , իւր սիրելի ընկերութեամբը նրջանիկ ըլլալով . . . Դանիէլը կրկին գտնելու թըշ-

ու առ ութիւնը ունեցեր էր . երբ որ մօ-
 տակայ աշտարակի մը վրայէն զանգակը
 հնչեցուց , երկու բարեկամները ելան
 և իրենց տեղերնին գացին . Հենրիկոս
 գինիին շոգիներէն հոգնած՝ ծանր ծա-
 նրը կը քաշէր քաղաքին փողոցներէն ,
 հագիւ հագ ոտքի վրայ կենալու
 կարող ըլլալով . երեք ամիս կար որ
 հորը տունէն դուրս ելեր էր , և արդէն
 իր առաջին գոյութեանը ստուերը դար-
 ձեր էր . այտերուն վարդերը թառամեր
 և կանխահաս կնճիռները՝ խռովեալ ե-
 ռիտասարդութիւն մը կը յայտնէին .
 հանդիպած առարկաներուն վրայ անու-
 թոշակի կը թափառէին աչքերը , և իր
 ծանրաշարժ գնացքէն բաւական կը
 յայտնուէր անկանոն և մոլեկան կեան-
 քով մը անոր ուժերուն սպառուիլը :

Հենրիկոս եկեղեցիի մը առջեւէն
 կ'անցնէր . տաճարին տխուր կամարնե-
 ըր լուսաւորող կանթեղին լոյսը՝ գոթա-
 ցի պատուհաններէն դուրս կը ցոլա-
 նար . և կը թուէր ըսել այս թշուա-
 ռականին թէ այն տեղ իւր սիրոյ տա-
 պանակին մէջ կը հանգչի իւր դատա-
 ւորը , որ իրմէն իր եղեռնաւոր կենա-
 ցը համարը պիտի ուզէ . բայց Հռէտէ-

ըի որդիսն ամենեւին շնորհաց ներգոր-
 ծութեանցը ենթակայ չէր . եկեղեց-
 ւոյն առջեւէն անցաւ տան մը առջե-
 ւէն անցնելու պէս, և ի՞նչ հոգն էր ա-
 նոր որ Յիսուս Քրիստոս ներկայ եղած
 ըլլայ մեր սեղաններուն մեծ խորհրդո-
 ցը ժամանակ, ան՝ ուրիշ Աստուած մը
 փնտռեր էր . գինին, խաղը, հեշտու-
 թիւնը իր աստուածն էին . որով կրօնա-
 կան արարողութեանց սուրբ հեշտու-
 թիւնները անոր ամենեւին հաճելի չէ-
 ին ըլլար, երկնից հետ բան չուներ . իր
 սրտին մէջէն ջնջեր էր զԱստուած . և
 իր հոգին ալ սոսկման և գթութեան
 առարկայ մըն էր իր Արարչին աչքին
 առջեւ :

Վերջապէս կոմսին տանը դուռը հա-
 սաւ, և զարկաւ :

« Ո՞վ է ասանկ ուշ ատեն դուռը
 կը զարնէ » հարցուց դռնապանը խիստ
 ձայնով մը :

« Ես եմ փիլիպպոս, Հենրիկոսն եմ
 բաց դուռը, սառեցայ » :

« Ինչո՞ւ համար ամեն ատեն ասանկ
 ուշ կուգաս . ասիկայ քու տարիքդ մար-
 դու մը վարմո՞ւնք է մի, քու առողջու-
 թեանդ կը վնասես, և հոգիդ կորարն-

ցրնելու վտանգին մէջ կը մտնես » .
 — « Հետեւեալ ըրէ՛ , բաց դուռը , կը խոստանամ ալ ասանկ ուշ չգալու : »

« Բնէլ է որ » պատասխանեց ֆիլիպպոս . դուռը բանալով , « այս վերջին անգամն է որ այս իրիկուն հոս կը մտնես . որովհետեւ հրաման ունիմ որ ամսակաւորդ վճարելով պիտի վաճառեմ զքեզ , տե՛ս քու գէշ վարմունքովդ ստացածդ ճամբայ կուտան քեզի անանկ տունէ մը՝ ուր կրնայիր երջանիկ ըլլալ , և այս ալ ձմեռուան սկիզբը . ի՞նչ պիտի ըլլաս » :

Այս խօսքերը խորին ազդեցութիւն մը ըրին Հենրիկոսին վրայ . խելքը գրլուխը եկաւ , գինիին շոգիները ցրնդեցան . կայծակէ զարնուած մարդու մը պէս մնաց . « ի՞նչպէս , զիս կը վաճառե՞ն , և ինչո՞ւ համար » :

« Դեռ հարցունելու երե՛ս ունիս » աղաղակեց դռնապանը բարկութեամբ . « ամեն իժիր ուշ ատեն տուն կուգաս գինովութեամբ , անա՞նկ կը կարծես որ նորին մեծախառութիւնը իւր ծառայութեանը պահէ զգինովները . գնա՛ պատկէ » և ձեռքով գէպ ՚ի սանդուղքը հրեց զանի . և գնաց իր տեղը :

Հենրիկոս մտաւ իւր սենեակը, և
 առանց լաթերը հանելու ինկաւ անկո-
 ղինին վրայ, երբէք ասանկ սոսկալի գի-
 շեր չէր անցուցեր, խիղճը կը յանդի-
 մանէր իր խայտառակութիւնները, և
 երեւակայութիւնն ալ խռոված՝ իւր
 ոգւոյն սոսկալի վիճակին վրայ՝ տաք վա-
 ւարանի մը վրայ գտնուող մարդու մը
 պէս, ամօթը, զղջումը, յուսահատու-
 թիւնը, իր ծնողքները գտնելու և խո-
 նարհաբար թողութիւն խնդրելու փա-
 փաքը հետզհետէ կը կռուէին սաստ-
 կութեամբ իր խոցեալ սրտին մէջ, և
 բիւրաւոր տագնապներու մէջ կը ձը-
 գէին զանի, բնաւ անանկ սրտի կսկիծ
 չէր կրած, իւր բազմաթիւ յանցանաց
 և պակսութեանցը յիշատակը կը սաստ-
 կացրնէր անոր հոգւոյն վիշտերը. — « աս
 ի՛նչ է » ըսաւ կատղութեամբ մը. « աս
 ի՛նչ խեղճութիւն է. տակաւին ապրի՞մ,
 Աստուծոյ շանթերը դեռ չեն շանթա-
 հարեր զիս. այո՛, երկնից վրէժխնդրու-
 թիւններն են իմ վրաս. շատ ատեն ի-
 րեն հակառակեցայ. և հիմա ալ Աստ-
 ուած ինձմէ հեռանալով զիս իմ տխուր
 վիճակիս մէջ կը թողու. — ա՛հ, ի՛նչ
 պիտի ըսէ հայրս, երբոր այս վիճակին

մէջ տեսնել պիտի, ես՝ որ հօրս տունը
 երջանիկ կրնայի ըլլալ, անօթու թե՛նէն
 պիտի մեռնիմ, կեանքս երկար վիշտ մը
 պիտի ըլլայ, և իմ դահիճս ալ ես պի-
 տի ըլլամ. ահա՛ ուրեմն եղեռնաւոր
 կեանքէ մը քաղած պտուղս, թշուա-
 ռութեամբ և կշտամբանօք հալածուե-
 լով կայէնի պէս պիտի թախառիմ ա-
 նիճեալ երկրիս վրայ, անոր պէս ճակ-
 տիս վրայ դրոշմուած ունենալով իմ ա-
 նիրաւութեանցս կնիքը ։

Դսանկ կը խորհրդածէր թշուառա-
 կանը. բայց մէկ վրկարար մտածու-
 թիւն մը չէր երեւեր սրտին մէջ, գը-
 րեթէ բան մը չի կրցաւ անոր հոգւոյն
 մէջ ահրող խաւարը փարատելու. և
 յուսոյ կայծ մը փառելու ։

Արշալոյսը արեւելից դուռները բա-
 նալով՝ ամեն մարդ իրենց գործին կ'եր-
 թային. Հենրիկոս անկողինէն ելաւ,
 իր հին զգեստները պատատ մը ըրաւ,
 առաւ գաւազանը, և գնաց գտաւ ծեր
 դռնապանը, որ տուաւ անոր երեք ըս-
 քուտ. բարի ճանապարհ և բարօրու-
 թիւն մաղթելով. Հենրիկոս առաւ ըս-
 տակը. շնորհակալ եղաւ դռնապանին,
 և տունէն դուրս ելաւ, խեղճ Տիանը

բանի մը շարքաթէ 'ի վեր սասկեր էր .
 Հենրիկոս՝ այն հաւատարիմ կենդանին
 սրտորդի մը ծախեր էր, որ ինամք չի տա-
 նելով՝ անօթու թենէն մեռաւ : « Ո՛ր
 պիտի երթամ » ըսաւ Հենրիկոս ինքի-
 յուն՝ ոտքը փողոցը դնելով, երեք ըս-
 քուտ ունիմ, ասկէց հօրս տունը եր-
 թաղու ճանապարհի ծախքին բաւական
 է . ինձի թողութիւն չեն ըներ . դար-
 ձեալ ամօթ չէ՞ մի ինձի սպասաւորնե-
 րուն առջին, երբ որ մուրացկանի մը
 պէս դառնալս տեսնեն : Չէ՛ հօրս տու-
 նը չեմ երթար . ասանկ գէշ հագուս-
 տով ծնողացս առջին երեւնալու կա-
 մրչնամ . գլխուս ճարը նայիմ . հաց մու-
 րալու է » :

Հենրիկոս կորսուեցաւ ամբօխին
 մէջ, և մտաւ հին դատաստանարա-
 նին կամարներուն տակ, ուր կը ժողվը-
 ւէին բեռնակիրները՝ անօթի չի մեռնե-
 լու համար գործ մը գտնելու յուսալով :

Ն. Բ. Կո. Եղբարք Բրակայի մէջ:

Կիլով՝ մեծ մարդասիրութեամբ
 ընդունելութիւն գտած էր հարուստ
 սաւանաւաճառի մը տունը, որ յէնարու
 տոսի քրոջը հօրեղբայրն էր. քիչ ժա-
 մանակի մէջ այս ընտիր գերդաստանին
 սիրելին եղաւ, սաւանաւաճառը մէկ
 հատիկ ութն տարեկան փոքրիկ աղջիկ
 մը ունէր. որ գեղեցիկակնկալութիւն-
 ներ կուտար. Երբոր կիլով դպրոցին
 մէջ գործքերը կը լըմնցընէր, կ'երթար
 այս գերդաստանիս ժողվուած սենեա-
 կը, և գիր, կարդալ և թուաբանու-
 թիւն դաս կուտար փոքր Բառօլինային.
 Ետքն ալ պատմութեան և աշխարհա-
 գրութեան տեղեկութիւններու սկը-
 սաւ. կիլով ամենեւին վայրկեան մը չէր
 կորսընցունէր իր ժամանակէն. և իւր
 զբօսանքն ալ գիտութեանց մէջ յաւա-
 ջադիմելու կը գործածէր. որովհետեւ
 պտրտած ատենն ալ միշտ գիրք մը ու-
 նէր հետը, որ ատեն ատեն քիչ մը բան
 կը կարդար անկից. ետքն ալ կ'սկըսէր
 կարծաւորէն վաս կ'ըսէր.

Իւր դասատուները շատ կ'ուրա-
 խանային ասոր ջանացողութեանը վրայ .
 դպրոցին մեծը՝ որ շատ ուսումնական
 երիտասարդաց բարեկամ և յարգ գիտ-
 ցող մարդ մըն էր , լէոնարտոսի վաղե-
 մի աշակերտը՝ իւր աշակերտակիցնե-
 րուն օրինակ կը ցուցընէր , կիլօմ անոր
 բարեկամ եղած էր , թէ՛ իւր գեղեցիկ
 վարմունքովը և թէ՛ իւր տաղանդնե-
 րովը . և գրեթէ շաբաթը անգամ մը
 անոր տունը ճաշելու պատիւը ունէր .
 Արդոյ դպրոցապետը քանի մը ընկերու-
 թեան մէջ հանեց զանի , ուր տեղուանք
 երիտասարդութեան վայելիք կըթեայ
 և բարի եղանակաւ մը կը վարուէր :

Ասանկ խոհական վարմունք մը շու-
 տով ամենագեղեցիկ պատուներ ունե-
 ցաւ . կիլօմ քիչ ատենէն դասագլուխ
 եղաւ . իւր բնաւորութեան քաղցրու-
 թեամբը , պարկեշտութեամբը և ուս-
 մանցմէջ ունեցած յառաջադիմութեամ-
 բը զարմացողներ և մտերիմ բարեկամ-
 ներ ունեցաւ . ամեն մարդ կը փութար
 իւր յարգանքը անոր ցուցընելու . բայց
 կիլօմ շողոքորթութեամբ չէր բռնուեր ,
 և իրեն եղած գովեստները կ'արհամար-
 հէր , մտքէն չէր հաներ իւր փափաքած

վիճակը, և միշտ անոր կը պատրաստուէր: Տանի՛ քանի անգամ կը պատահէին որ սենեակը քաշուած իւր շինած քարոզին մէկ հասուածը կ'արտասանէր, և ասանկով ատենախօսութեան համար իւր դեռ անխիթիթ տաղանդը վարժելու կը կրթէր զինքը, որուն մէջ ետքը պայծառապէս պիտի փայլէր. իրեն անանկ կուգար որ պատերը զինքը մըտիկ կ'ընեն և կը դատեն. մէյ մ'ալ կը բորբոքէր, և սուրբ եռանդով մը վառելով իւր միտքը կը կենդանանար. և օրէ օր մարդկային կրից փայ իւր տանելիք յաղթանակներուն նախերգանքները կ'ընէր:

Նսանկ երբոր այս բարեպաշտ և ուսումնասէր պատանիս ամեն կերպ առաքինութիւններով և խիստ ուսմունքներով իւր ապագայն կը հաստատէր, թշուառական եղբայրն ալ կուրութեամբ կորստեան ճանապարհին կը հետեւէր:

Երկու շաբթի իրիկուն մըն էր, արեւուն մարդ մտած ժամանակը այն տըխուր եղեմնապատ շաբթուներուն մէկուն մէջ, կաղանդին և Մեծ պահոց միջոցը, կառք մը եկաւ, կայնեցաւ սա-

ւանսալաճատին դրանք առջին, կիլում
 նստեր էր փոքր Քառօլինային քով, որ
 իւր համարը կը սորվէր. կարդացա-
 ծըն էր Գերսմանիոյ երեւելի բանաս-
 տեղծներէն մէկուն գարնան վրայ շինած
 տաղերգութիւնը, որուն գեղեցկու-
 թիւնը կ'երեւար որ կը հասկընար աղ-
 ջիկը. կիլում ալ մտիկ կ'ընէր, և շարժ-
 մունքով կը հաւնէր իր մատղաշ աշա-
 կերտու հւոյն:

Յանկարծ դուռը բացուեցաւ, Շը-
 ուէտէր, Լուիզան և Չիչլիան կիլումի
 գիրկը նետուեցան, որն որ ապշեցաւ
 մնաց քողքը զարմացմամբ մը. շուտ մը
 վաճառականն ու իր կիսնն ալ եկան. խօ-
 տակցութեան սկըսան. կիլում անպատ-
 մելի կերպով ուրախ էր:

« Ի՞նչ կ'ընէք կոր իմ ուսանողս »
 հարցուց Շուէտէր խնդալով. « շուտով
 քահանայ պիտի ըլլայ »:

« Ո՛ր, այս ի՞նչ նուէր որ ըրիք »
 պատասխանեց վաճառականը. « մենք
 ամենքնիս զաւկի պէս կը սիրեմք զկի-
 լում, և օրէ օր մեր սիրոյն աւելի կ'ար-
 ժանանայ, պիտի զարմանաք երբոր գիտ-
 նաք որ մեր փոքր բարեկամը իւր դա-
 սուն առաջին աշակերտն է, իւր դա-

սատուացր և աշակերտակցացր և դրպ-
րոցապետին ալ գովելի ։

« Մի՛րելիս ։ » աղաղակեց երջանիկ
հայրը, սեղմելով զկիւտ, իւր բազուկ-
ներուն մէջը . « քու վարմունքդ սրտիս
վերքերը կը գոցէ, երկու որդի ունէի,
ի՞նչու մէկը . . . » ։

« Դադարե՛ հայր իմ ։ » պատասխա-
նեց Եւսիզան, ընդմիջելով զՇոէտէր .
« ունեցած ուրախութիւննիս ասանկ
տարժանելի յիշատակութիւններով մի՛
խոռովեր ։ » ետքը կիւտի ձեռքէն բռն-
նելով՝ « եկո՛ւր նայէ մայրդ քեզի ի՞նչ
խրկեց Տարեկենդանի համար ։ » ըսելով
տարաւ տենեակին մէկ խորշը, բացաւ
սպասաւորին կառքէն իջեցուցած սու-
փերէն մէկը, և երբ տեսաւ կիւտ այն
մեծ կարկանդակը՝ զարմացաւ, որուն
հետ կար Ռէնի գինիէն քանի մը շիշ
գինի, տասներկու աման շաքարեղէն,
ուրիշ շատ մը բաներ ։

« Ահա դպրոցին բոլոր մարդոցը ա-
սոնցմով հացկերոյթ մը կ'ըլլայ ։ » ըսաւ
կիւտ ։

« Ուրիշ բան ալ կայ ։ » պատասխա-
նեց Եւսիզան . « բայց մինչեւ որ սու-
փերս չի բանաւ, ամենը չեմ կրնար տա-
նալ ։ »

լու » . Ուրեմն հիմա բանանք , որպէս
զի ունեցածներս գիտնամ » .

Երբոր Լուսիլան և Չիչիլիան տու-
փերը բանալու կ'զբաղէին , Հռէտէր
նամակ մը տուաւ կիլոսին իր մօրակէն .
որուն մէջ ներփակեալ էր ուրիշ նամակ
մըն ալ Տ . Լէոնարտոսէն գրուած . Ի՞նչ
երջանկութիւն էր պատանւոյն՝ ասանկ
երկու սիրելի ձեռքերէ արուած լու-
րեր ընդունել , առաւ այս նամակները
և դեռ չի կարդացած .

« Դայէ՛ » ըսաւ Լուսիլան . « ահա՛
մօրս խրկած ընծաները , երկու զոյգ
գուրպայ , երկու փողպատ , երկու բաճ-
կոնցու կերպաս , ձեռնոցներ և այլն .
անկից ևտքը տանը ախրոջը , կնկանը և
փոքր Բառօլինային համար ընծաներ կա-
յին , ամենքը զարմացան այս գեղեցիկ
ընծաներուն վրայ , չէին գիտեր թէ
ի՞նչպէս յայանեն իրենց երախտագի-
տու թիւննին :

« Բայց » ըսաւ Հռէտէր տանտիկ-
նոջը . « այս ամենը մեր գլխաւոր նպա-
տակէն զմեզ կը հեռացընեն , երկու
ամսական վարձք պարտք ունիմ ձեզի
որդւոյս համար . և որովհետեւ հիմա
հոս եմ , հետեւեալ երկու ամսական

այ պիտի վճարեմ ձեզի, Օտակէն առ
 ուաջ ձեզ տեսնելու յոյս չ'ուենեալով՝
 հանեց սքուտի ծրար մը, համբեց և
 սեղանին վրայ դրաւ .

« Չի հասկըցայ » պատասխանեց
 տիկինը ,

« Ինչո՞ւ չի հասկըցար » ,

« Այո՛ . . . այրս կը հասկըցընէ
 քեզի » և թողուց գնաց տիկինը Լուի-
զային և Չիչիխային օգնելու համար .

Հռէտէր ապշեցաւ մնաց ա՛յն տեղ ,
 չի գիտնալով թէ ի՞նչ բանի տայ ստակը
 չ'ընդունելը , անանկ եկաւ իրեն , որ
 հաշուոյն մէջ սխալած է , և թէ տիկի-
 նը աւելի կ'ուզէ .

Վերջապէս վաճառականին քով գը-
 նաց , ձեռքէն բռնեց , և աղաչեց որ
 այն բանը իրեն յայտնէ .

« Բանը ինքնին յայտնի է » պատաս-
 խանեց վաճառականը . « աղադ մեզի
 համար աւելի բաներ ըրաւ . և մենք
 մինչեւ հիմայ անոր բան մը չ'ըրինք ,
 մեր փոքր Բառօյիներ կը գատախարակէ ,
 և որը երեք անգամ դաս կու տայ անոր .
 թէ որ անոր վարձք տալու ըլլայինք ,
 ինչպէս տունէ տուն պարտող դասա-
 տուներուն կը արուի , աւելի ծախք

պիտի ընէինք . որ կիլում մեզի այնչափ
 ծախք չպատճառեր, ուստի այս պատան-
 ւոյն վարձքը վճարելու բան մը չկայ,
 որովհետեւ կիլում իրեն համար ըրած
 ներնէս աւելի կը վասարկի . քու աղադ
 չգանուած աղայ մըն է, և շատ մեղք
 կ'ըլլար թէ որ ասանկ գեղեցիկ աա-
 ղանդ մը կորսուէր . հրեշտակային բա-
 րեպաշտութեամբ մը ընդարձակ միտք
 և մեծ սրամտութիւն մը ունի, գրպ-
 րոցին մէջ շատ յարգի, բոլոր դասա-
 տուները մինչեւ երկինք կը բարձրացը-
 նեն զանի . որ մը քեզի մեծ պատիւ
 պիտի ըլլայ » :

Արուեստէր կը թախանձէր, բայց ա-
 նօգուտ եղաւ . վաճառականը չընդու-
 նեց ստակը, և իսասկցութիւնը վա-
 իսելու համար, յանկարծ դարձաւ ախ-
 կիներու կողմը և ըսաւ :

« Իմացուցի՛ք տի կիներ . այս ճա-
 նապարհորդու հետցս բռնած կարգը
 զուարճալի է . վեց մղոն տեղ չեն կրո-
 նար երթալ, առանց երեսուն և վեց
 սուփ տանելու հետերնին, պէտք է
 որ սնտափ պաճուճանքները ամեն տեղ
 բոյն ունենայ . մասնոցի շափ ալ ըլլայ,
 պէտք է որ ամեն տեղ գանուի » :

Այս խօսքը զամենքը խնդացուց ,
 շուտ մը ընդրիքը պատրաստեցին , սե-
 զանին վրայ հազիւ կը սղմէր դրուած
 կերակուրները . և Շուէտէր այս շը-
 ուայլու թեանս դէմ գանգաատելով կ'ըս-
 կըսէր կոր , երբոր կիներ ըսաւ .

« Ի՞նչնէ մէկ շնորհք մը պիտի
 խնդրեմ , կը յուսամ որ չէ չես ըսեր » .

« Ինչ » ըսաւ .

« Գանէ՛ ութն օր այս տեղ կենա-
 լու խօսք տաս » .

« Անկարելի է , տիկին » պատաս-
 խանեց Շուէտէր . « Երկու օր պիտի
 կենանք երթանք , չեմ կրնար կինս վեց
 սպասաւորով տունը մինակ թողուլ , և
 մէկ մ'ալ որ Չէչլիա օրիորդը իւր
 Պ . Եղբայրը պիտի խնամէ . այն ալ եր-
 կար ատեն հեռուն չի կրնար մնալ .
 քանը ասանկ ըլլալով , որչափ որ ձեզի
 հետ այս տեղ մնալու կը վախաքիմ ,
 ասկայն պէտք է որ մեր պարտականու-
 թիւնը նայինք » .

« Այս գէ՛շ » կրկնեց տիկինը .
 « հազիւ թէ նոր տեսանք զքեզ , ասանկ
 շուտով երթա՛ս . քեզ չպիտի թո-
 ղում » .

Սակայն տիկինը չկրցաւ զանի հա-

մոզել, ամենքն ալ հաստատ մաքերնին
 դրեր էին եթալու. այն իրիկուներ զը-
 ւարձալի կերպով անցաւ. և երբոր իր
 երջանիկ մարդիկը զարդարուն սեղանն
 մը շուրջը կը զւարձանային, խեղճ
 Հենրիկոսը՝ որ անկից քիչ հեռուն կը
 գտնուէր, անօթու թեամբ և թշուա-
 ռութեամբ կը տառապէր

Հետեւեալ օրը Չէչիլիան, Լուիզան
 և Շռէտէր գացին քաղաքը պրարան-
 ցան, և զանազան բաներ գնեցին, կի-
 լումն ալ երկու նամակ պատրաստեց,
 մէկը՝ իւր մօրը, և միւսն ալ՝ Լէան-
 արտոս ժողովրդապետին. այս երկրորդ
 նամակիս մէջ առաքինի պատանին շատ
 զգուշութեամբ կը խօսէր ինքզինքին
 համար. անանկ որ իւր դասուն յետին
 աշակերտը կը ցուցնէր զինքը, հովիւր՝
 դպրոցապետէն տեղեկացած էր զամենը,
 զարմացաւ անոր պարկեշտութեանը վը-
 րան, վերջապէս երթալու ժամանակը
 եկաւ, երկու կողմէն շատ արցունք
 թափուեցան. և խոստացան Օասկի
 տօնին տեսնուելու.

Կառքը՝ փողոցներուն սաւայտա-
 կէն անցընելով՝ քաղաքէն դուրս ել-
 լելու վրայ էր, երբոր Լուիզան՝ դեղ

նաժ նիհար երիտասարդ մը տեսաւ , որ
 մէկ սահմանանշանի մը կրթնած՝ ձեռք
 կ'երկընցընէր սղորմու թեան . կառքը ա-
 ռագ երթալուն համար մատաղ աղջի-
 կը չկրցաւ մուրացկանին դէմքը աղէկ
 մը տեսնել . բացաւ քսակը , քանիմը դա-
 հեկան նետեց , և ըսաւ . « ա՛ն դնա՛ ,
 քաղաքը ճաշ ըրէ » .

Ան տանն Շուէտէր շարժմունք մը
 ըրաւ վերարկուին մէջ աղէկ փաթ-
 թուելու համար . մուրացկանը ճանչցաւ
 զանի . « հայր հայր » աղաղակէց , ձեռ-
 քերը դէպ ՚ի անոր երկնցընելով . բայց
 կառքին շառաչուէն հայրը չկրցաւ
 այս աղաղակները լսելու . իր որդւոյն
 շարժմունքները շնորհակալութեան նը-
 շան մը համարելով՝ ուշադիր չեղաւ .
 Հենրիկոս յիշաւ ի ճանչցելու էր իւր
 հայրը . կառքին ետեւէն վազեց , բայց
 ուժը հասնելով չի կրցաւ հասնելու .
 դարձաւ իւր սահմանանշանը սաստիկ
 ցաւով մորմոքելով . « իմ հայրս է »
 ըսաւ ինքիրեն . « այո՛ հայրս է . և թէ
 որ չեմ խաբուիր , այս ստակներն ալ
 ինձի նետողը քոյրս է . ո՛հ լո՛ւիլա .
 ի՞նչպէս չճանչցար քու եղբայրդ , չէ՛ ,
 դուն չէիր կրնար կարծել որ այս թըշ-

աւառութեան ցնցոտիները հազած
մարդը Հենրիկոսը ըլլար. և ո՛վ կրնայ
զանի ճանչնալու, սրտի հետեւ ա՛յն ալ
ինքզինքը ճանչնար ։

Այս միջոցիս ալ իւր երեւակայու-
թեանը առջին շարուիլ սկսան իւր հօ-
րը ազգարարութիւնները և մօրը բա-
լոր խրատները. շնորհքը՝ սաստկու-
թեամբ խօսեցաւ անոր սրտին, և դի-
տես որ Աստուած ալ այս առիթը ձեռ-
քը առաւ զանի իր թշուառութենէն
սղաակելու համար, այս վերջին անգա-
մի թշուառութիւնն էր որ անոր պատա-
հեցաւ. բայց Աստուած դեռ զանի ե-
րեսէ ձգած չէր. սակայն Հենրիկոս
իւր ներսը կրած այս վրկարար ստակու-
մը չզգաց, սրտի դառնութեան բաժա-
կը լիաջին պիտի խմէր ։

Գ Լ ՈՒՆԻ Ս Թ Ե

Հենրիկոս գողերուն մէջ էր մնայ ։

Հենրիկոս վերջապէս իւր խորհր-
դածութիւններէն արթնցաւ խորուն-
քունէ մը արթննալու պէս. և սկսաւ

գէպ ՚ի քաղաքին դուռը երթալ .
 դուրս ելաւ անանկ երկրէ մը՝ ուր առ-
 ջի յուսացածին պէս քաղդ չունեցաւ .
 ժամանակը մթնոցած՝ հոյժը սասակու-
 թեամբ կը փչէր . և փոթորկալից գի-
 շեր մը կը գուշակէր . Շքուէտէրի
 խեղճ որդին՝ բարեկամէ և օգնութե-
 նէ՝ զուրկ՝ գաղանական կրից խաղալիք
 ըլլալով ատուր վիճակի մը մէջ կը գրա-
 նուէր , ի՞նչ ըլլալիքը չգիտնալով , ար-
 գէն քառորդ մղան մը հեռացեր էր
 քաղքէն . ձիւնը կուգար և հոյժը կը
 սառեցընէր . ան առնն խորհելով այս
 խիստ գիշերուանս մէջ իւր վիճակին
 վրայ՝ սրտչեց որ քաղաքը դառնայ . մը-
 սաւ քաղաքը , և գնաց գարեջուրի
 գործարան մը՝ իւր յուրիցա քրոջը ստու-
 ած ստակը մխելու , անցաւ սաւանա-
 վաճառի սանը ստջեւէն , ուր կը գրա-
 նուէր եղբայրը , չգիտնալով թէ հոն
 էր կիլով . այն ալ արհտ՛ս , ամենեին
 չէր կասկածեր Հենրիկոսի հոն գրա-
 նուելէն . գարեջուրի գործարանէն
 ելլելով Հենրիկոս գնաց այն տեղ ,
 ուր շատ գիշերներ անցուցեր էր . այս
 տեղն էր եկեղեցւոյ մը սրահը , ուր
 տեղ կը պատապարուէր ձիւնէն և

անձրևէն պահպանուելու համար. հա-
սաւ "հո'ն' ուր տեղ ծիծեռնիկնելն ու
ճնճողուկները բոյն դրած էին, պառ-
կեցաւ մէկ ցուրտ և խոնաւ խորշ մը,
և սկրսաւ քնանալ. առանց վազուանը
մտածելու իր բոլոր ստակը խարձելով.
կերած կերակուրը՝ զանի քնոյ պատ-
րաստեցին. այս վերջին գիշերն էր որ
հանգստեան քաղցրութիւնը վայելեց.

Հետեւեալ օրը քանի մը ժամ թա-
փառեցաւ Տրակիոյ վազոյները, ձեռք
բանալով անցաւ որաց. բայց գիտես
թէ գթութիւնը ամեն օրաի մէջ մա-
րեր էր, ամենքն ալ երբ որ կը տես-
նէին զանի, կ'ըսէին. « ահա' մէկ գէշ
մարդ մը » և կ'անցնէին կ'երթային. այս
կրից զոհ եղած երիտասարդը անօ-
թութեամբ նեղեալ, ցուրտն զող-
գըղալով՝ ստուերի մը սէս մասււ այս
բաղմամարդ քաղաքիս բաղմութեա-
նը մէջ, ամեն մարդ իւր գործքերու
կը պարտաւ, ամեն մարդ իւր պաշ-
տօնը կը նայէր Հենրիկոս միայն պատ-
ուած ինքիւր գլխուն հակ մը կ'երևէր,
աշխարհի անօգուտ բեռան մը պէս.

Հաս անպամ խորհեցաւ որ այս իւր
թշուառական կեանքը վերջացրնէ, ու

բովհեանե ալ ինչ պէտք էր անոր ապ-
րիլ, որուն կեանքը իրեն տանջանք ե-
ղած՝ օրերը անգործութեամբ կ'անց-
նէին, և իւր գոյութեան ամեն մէկ
վայրկեանը՝ վշտաց երկարած գութիւն
մըն էր:

Ահ, գուցէ մօրդ արցունքները,
գուցէ եղբօրդ աղօթքները պահեցին
զքեզ, ո՞վ թշուառական պատանի, բա-
րեպաշտութեան գաղանի միջոցներն են
որ քեզնէ այն մահաբեր հարուածը
դարձուցին. և չթողուցին տարատարտին
հրեշտակը մահուան մանգաղը քու վը-
րադ երկնցընէ:

Հենրիկոս անօգնական մնաց, ին-
րակիան կը թուէր զանի տարագրել.
ուրեմն որոշեց հաստատութեամբ որ
այն քաղաքը թողու, դուրս ելաւ առ-
ջի օրը հօրը պատահած դրան դիմացի
դուռնէն, և սկըսաւ քալել սախաղա-
կան գործքեր ունեցող մարդու մը պէս,
այն օրը բան չէր կերած. կէս օրէն եր-
կու ժամ ետքը գեղ մը հասնելով՝
դուռները զարնել սկըսաւ քիչ մը հաց
գանելու համար. պառաւ կին մը պա-
տառ մը բան սուաւ, Հենրիկոս ճամ-
բան շարունակեց առանց գիանալու

ուր երթալիքը . գիշերը շուտ մը վրայ
 հասաւ . որով իւր ճամբան շտկեց ճա-
 խակողմը եղած անտառին կողմը . ճա-
 նապարհ մը բռնեց գնաց . և հեռուն
 լոյս մը տեսաւ . միանգամայն կացիւնի
 հարուածներ ալ լսելով , և համոզուե-
 լով որ այս առանձնութեան մէջ ած-
 խաղործի բարեսիրտ ընտանիք մը պի-
 տի գտնայ , սկսաւ արագ քալել , շուտ
 մը հիւղի մը առջև հասաւ , և ած-
 խաղործի մը խրճիթ կարծելով՝ գը-
 նաց դուռը դարկաւ :

Այս կարծեցեալ ապաստանարանը
 գտնելուն վրայ ուրախանալով՝ թըշ-
 ուտուութենէ ազատելու ակընկալու-
 թիւններ կ'ընէր . նորէն դարկաւ , և
 կարծեց աղօթող կնկան մը ճայն լը-
 սել :

Արքոր դրանը բացուելուն կ'ըստա-
 սէր , դէպ 'ի իրեն եկող մարդու մը ոտ-
 նաճայնը լսեց :

« Ի՞նչ կ'ուզես տանս առջին » ըսաւ
 մէկը կերկերեալ ճայնով մը . որ ուսին
 վրայ ալ բեռ մը փայտ և կացին մը ու-
 նէր , « անշուշտ այս տանը տէրն ևս » :

« Այո՛ , ի՞նչ կ'ուզես . Հիւպէրար
 խրկեց դքեղ » :

« Հիւպէրա չեմ ճանչնար . և աւ
նոր վրայօք խօսք չեմ լսած . ես ինդճ
աղքատ մըն եմ . այս գիշերուան հաւ
մար մէկ ապաստանարան մը կը խընդ
րեմ » .

« Աղքատ ես , բայց պարկեշտ
պատանի ես . քեզի հաւատարմութիւն
կ'ըլլայ մի » .

« Մարդու գէշութիւն ըրած չու
նիմ . և անիրաւութիւն ընելը ամենեւ
ւին չգիտեմ » .

« Թէ որ ըսածդ ստոյգ էնէ , քեզ
կը պահեմ . բայց թէ որ անանկ չէնէ
Աստուած աղասէ քեզի ձեռքէս » .

Բացաւ դուռը . Հենրիկոսը ներս
մտցուց և զանի իւր կնոջը ներկայացր
նելով ըսաւ .

« Հո՛ս հարուստ մարդու տուն
չեա , բայց թէ որ բանի մը պէտք ու
նիս նէ ըսէ . ի՛նչ որ ունինք քեզի հա
մար պատրաստ է . անօթի՞ ես » .

Հենրիկոս գլուխով նշան մը ըրաւ
որ կերակուրի չէ շքեր . մարդը հաս
կըցաւ և կնկանը պատու իրեց որ ընթ
րիք պատրաստէ , կինը դուրս ելաւ .

« Հիւպէ՛րա , հիւպէ՛րա » ըսաւ
ինքնիրեն Հենրիկոս , « ա՛յ ի՛նչ պիտի

ըլլայ ո՞ւր եմ ես, քու ցէ գողերու հե՞տ
 եմ », և սկըսաւ մտածել, իւր կաս-
 կածները աւելի հաստատուեցաւ իր
 ապնջականին խորհրդաւոր կերպարան-
 քէն, ասիկայ դուռ մը բացաւ, ուր-
 անդ ամուր սնտուկ մը կար, մէջը դը-
 րաւ երկու ծրար սքուտ, և շուտ մը
 գոցեց, շուզելով մէջի եղածը Հեն-
 րիկոսին ցուցրնել:

Կարբը խօսելու սկըսան և տանտէրը
 ճարտարութեամբ մը հասկընայ կ'ու-
 ղէր թէ ո՞ւրկից կուգար խեղճ Հեն-
 րիկոս, ո՞վ էր և ի՞նչպէս այս անտա-
 ոսին մէջ ապաստանարան մնարուելու
 հարկադրած էր:

Հենրիկոս զգուշու թեամբ կը պա-
 տասխանէր իւր հիւրընկալուին խնդիր-
 ներուն, որն որ տեսնելով թէ շատ բան
 չպիտի կընայ առնել բերնէն, ինքն ալ
 ինքրդինք քաշեց, կիներ պնակով կերա-
 կուրը բերաւ, որ քիչ մը կանաչեղէն
 և կտոր մը աղած միս էր, Հենրիկոս
 կերաւ զանոնք, և շուտ մը ապրն-
 շականին առած գինիով լեզուն
 բացուեցաւ, և իւր կենաց ամե՛
 գաղանխները յայտնեց, կարծեցեալ «
 ծիագործը ասոր զուրցածներէն բառ

մըն ալ չմտցաւ . և գիտեալ Հենրիկոսի բերնէն խօսք առնելու հնարքին վերայ ուրախացաւ . որն որ առաջ չէր ուզեր խօսել . վերջապէս կեղծաւորութեամբ մը ըսաւ անոր :

« Կը խղճամ դ.բեզ խեղճ պատանի . այսչափ վիշտ կրելուդ վրայ , բայց կը յուսամ որ ասկից ետքը երջանիկ պիտի ըլլաս . թէ որ Հիւսէրափ և ինձի հաճոյ ըլլաս , վիճակդ կ'աղէկնայ . ևս հօրմէդ աւելի դ թու թեամբ պիտի վարուիս հետդ , շուտով ի՛նչ մարդ ըլլալս պիտի հասկընաս . ասկայն հիմակ որ քուն ունիս , կրնաս պառկիլ հանգ ստանալ ու հանար » :

Կիներ տարաւ զանի մէկ ցած ու մուտ սենեակ մը . Հենրիկոս յարդէ խուրճի մը վրայ պիտի անցընէր գիշերը . շուտ մը քնացաւ . բայց իր քունը երկար չեղաւ . կէս գիշերուան մօտ էր , որ սանը գրանը զարնուիլը խմանալով արթնցաւ . քանի մը վայրկեան ետքը , շատ մը անհասաներ սենեակը մտան , և սկրսան խօսիլ :

« Տան մը ըրի՞ր , Հիւսէրափ » հարցուց սանակըրը :

« Մ'սիկ ըրէ՞ր » ըսաւ Հիւսէրափ .

« Տրակիոյ տօնախաճառին դացող վաճառականներ ձեռք բերինք . և գրականունն վեց հազար ոսկի Ֆլորինի չափ կողոպտեցինք . շատ դէմ դրին , և այս կռուոյս մէջ մեր յէոբօլա բարեկամը կորուսինք , որ գլխունն վրայ ատրճանակի հարուած մը առնելով՝ շուտ մը ինկաւ մեռաւ . քաշեցինք անտառին մէջ , ասորինք թաղեցինք . բայց սնտուկը՝ կողոպտածս մէջը դնեմ » :

Հենրիկոս այս ամեն խօսքերը իմացաւ . աւաղակներու բազմութեան մը մէջ գանուելու գաղափարը զանի շատ վախցուց . շուտով փախչիլ ուզեց , բայց անկարելի եղաւ , քիչ մը ետքը գաւաթներուն մէկըմէկու զարնուելու ձայնը սկրսաւ . աւաղակները սեղան նստան և ընթրեցին , խօսակցութիւնը շուտ մը սոսկալի լրբութեան մը փոխուեցաւ զորն որ գրիչնիս ջիներեր նկարագրելու :

« Ե՛հ » կրկնեց ասպնջականը . « երբոր դուք վաճառականներուն հետ կը կռուէիք , ես ալ հոս պարսպ չմնացի , թռչուն մը բռնեցի որ ներսը կը քնանայ կոր . որն որ կը յուսամ թէ օր մը մեր կորուսած յէոբօլա երիտասարդին տեղը ես առնե » :

« Ո՞վ է քառ Հիւպէրա » .

« Իւր ծնողացը առնէն փախած
 քատապարտեալ աղայ մը , որ անօթու-
 թենէն կը մեռնէր . բաներնուս պիտի
 դայ » .

« Ուժեղ , գործունեայ , ճար-
 պի՞կ է » .

« Կ'երեւայ որ ըլլայ . կրնաք հաս-
 կրնալ որ զանի փորձելու ժամանակ
 չունեցայ » .

« Երթանք նայինք սա՞ քառ Հիւ-
 պէրա սեղանին վրայէն կանթեղը առ-
 նելով , և երթալով Հենրիկոսին եղած
 սենեակը . թէպէտ երիտասարդը աղէկ
 արթնցած և աւազակներուն ամեն խօս-
 քերը լսած էր , բայց քնանալ կեղծեց
 Հիւպէրա քննեց նայեցաւ կանդեղին
 լուսովը և սենեակէն դուրս ելաւ .

« Ի՞նչ , ինչպէ՞ս է հաւնեցա՞ր » ք-
 առ աւազակներէն մէկը .

« Գէշ չէ՛ , բայց դեռ չորոչած՝
 անոր վարքը հասկրնալ կ'ուզեմ » .

Հիւրընկալուն սկրսաւ Հենրիկոսին
 բերնէն առած խօսքերը պատմելու ա-
 ւազակները լռութեամբ մտիկ ըլին հը-
 րացանուն (գարապինա) վրայ կրօ-
 թրնած .

• Ան ալ մեզնէ պիտի ըլլայ * կըրկ-
 նեց Հիւսէրա ընկերներուն կողմը
 դառնալով. « մարդը չէ՛ մնացեր աշխար-
 հի մէջ. անոր հայր ու մայր պիտի ըլ-
 լանք, հետք քաղ ցրու թեամբ վարուե-
 ցէ՛ք, սորվեցուցէ՛ք անոր ծառայու-
 թեան վերաբերեալ բաները՝, առանց
 իմացունելու անոր շուտով այն գաղտ-
 նիքները՝ որ մէկ համբաւ մը՝ գիտնա-
 լու չպարտաւորիր, աղէկ տղայ կ'երե-
 ւայ կոր. և հաւանականաբար մեզնէ
 ալ աղէկ է. իւր ծնողացը խստութիւ-
 նը բաղդախնդիր է ըրեր զանի. անանկ
 ճամբայ մը բռնեցէ՛ք որ մեզնէ գոհ և
 երջանիկ ըլլայ * »

Այս վերջին խօսքերը սոսկալի տը-
 պաւորութիւն մը ըրին Հենրիկոսին
 վրայ. հուղկահարներու հետ երջանիկ
 և գոհ ըլլամ. ըսաւ ինքնիրեն, աս ը-
 րաւ բան է մի. այս մարդիկները ի-
 րենց նմանեացը կեանքը խաղալիք մը ը-
 րած են իրենց, անոնց ունեցածը կառ-
 նեն. և երջանկութիւն ու գոհունա-
 կութիւն ասանկով մի կը գանեն. ո՛հ.
 այսչափ ցածութիւն կրնամ ընել. չէ՛
 չէ՛, աւազակ չեմ ըլլար. յիրաւի աշխար-
 հիս վրայ բնաւ օգնութիւն չմնաց ինձի,

ամեն պարկեշտ ճամբայ գոցու եցաւ առ ջիւս, բայց աւաղակներուն կեանքը . . . այսու ամենայնիւ թէ որ այս չարագործներուն խուճբին միանամ նէ՝ ժամանակ մըն է, մինչեւ որ առիթ մը գտնեմ անոնցմէ չգնատակոծուած դատուելու :

Վերջապէս լուսցաւ, Հենրիկոս ելաւ, հոյ՛ը սաստիկ կը փչէր անաստին անհեթեթ բնակարանին շուրջը . թըշուտատականը այս սաստիկ հիւսիւսային քամիին փչած աստեր լսել կը կարծէր իւր հօրը յանդիմանութիւնները . խանդակաթ մօրը ձայնը, որ իր գործած յանցանքները կը յայտնէր . և կը յորդորէր ան մարդիկներէն հետու կենալ, որոնց ընկերութիւնը անոր այնչափ աղետալի պիտի ըլլար, բայց այս խորհրդածութիւնները՝ որ անոր դիտաւ որու թիւնը կրնային փոխել, շուտ մը մէկ գի ըրաւ, և գուցէ ամհնայով մը վրան՝ աղաղակեց . « պարապ երկիւղ է, քիչ մըն ալ քաջասիրտ ըլլալու է, ամեն բան կարգին կը մտնէ » :

Հիւսպէրտ կանչեց իւր ընկերները, և ըսաւ, « երթալու է, սի՛րելիք իմ գայե՛ք, ևս ալ կուգամ կար » :

Հաս չանցաւ Հենրիկոս սենեակէն

* Երջանկու թեան ճամբանն * ըսաւ
 Ընկտերի որդին անորոշ կերպով մը .
 * ո՛ր պիտի տանիս զիս * .

Բայց Հիւպերտ պատասխան չար-
 ւաւ , և ծիափայտ մը տալով անոր
 առաւ տարաւ իւր աշակերար . պղտիկ
 ճամբայ մը բռնեցին գացին և երկրին
 մեծ ճանապարհին վրայ ելան . Բանի
 մը վայրկեան մէկ տեղ քաղցին , և
 շուտով անանկ տեղ մը հասան , ուր
 ճամբաները շատ ճիւղերու կը բաժ-
 նուէին . ան տեղ մէկ խաչ մը տեսաւ
 Հենրիկոս , որուն առջին կին մը ծուն-
 կի եկած մեծ ջերմեռանդու թեամբ
 կ'աղօթէր , և որուն զգեստը քիչ մը
 մօրը զգեստուցը կը նմանէր . * տակա-
 շին մայր իմ * աղաղակեց բարձրաձայն .
 այս կինս գիտես թէ հասկըցաւ անոր
 խօսքերը . գորովագութ հայեցուածով
 մը վրան նայեցաւ , և իբր թէ կ'ըսէր
 թէ ո՛րչափ ցաւ էր իրեն զանի անանկ
 ընկերութեան մը մէջ տեսնելը . կինը
 շուտ մը ելաւ . և սկրսաւ քաղաքը
 երթալ . այս վերջին իրաւա մըն էր որ
 Աստուած այս նոր անառակին տալ ու-
 զեց , զետ զանի Հիւպերտին առաջնոր-
 գութեանը չի թողած .

Եւստի մը չափ լեռան և անտառին
մէջէն դժուարութեամբ քալելէն ե-
տեւ , Հենրիկոս և Հիւպէրտ ամայի
տեղ մը հասան . ուր կ'երեւէին բնու-
թեան ձեռօք ժայռին մէջ կարուած
քարայրներ , որոնց մուտքին վրայ ա-
պառաժներ թաւալած էին , որ ներս
մարդ չի մտնէ . Հիւպէրտ մէկ մը սու-
լեց , երկու անհատ գիտես թէ գետ-
նէն ելլելով նայելու եկան .

« Մեծաւորն է » ըսաւ մէկը ,
« քարը մէկդի ա՛ն » . Հիւպէրտ և
Հենրիկոս մեծ զգուշութեամբ վար-
իջան մէկ ընդարձակ այրի մը մէջ , ուր
կար մէկ մեծ սեղան մը , փայտէ ա-
թոռներ , խոհարարութեան գործիք-
ներ , ջուրի և գինեոյ տակառներ , և
ժայռին պատուածքին մէջ շինուած
վառարաններ :

Ութն ընկեր արդէն հոն ժողովու եր-
էին , ոմանք լուման եղջերու մը շամ-
փուրը անցընելու կ'զբաղէին , միւսնե-
րը կրակը կը վառէին , ոմանք ալ այս
մարդոց անկողինի ծառայող յարդերը
կը շարժէին .

« Ահա՛ քու տունդ » ըսաւ Հիւ-
պէրտ՝ Հենրիկոսին . « այս տեղ քե-

զի քան պակաս չի պիտի ըլլայ, և գրո-
պանդ ալ շուտ մը սքուտով պիտի լեց-
ուի 9 :

Հենրիկոս ժպտեցաւ ըսածներուն
միտքը հասկըցածի պէս . երբոր եղջե-
րուն կայծակնացայտ բոցին վրայ կը
խորովէր, մեծաւորը սկըսաւ Հենրի-
կոսին հետ թուղթ խաղալ, շուտ մը
կէս օր եղաւ, սեղան նստան ճաշելու,
և առատ ըմպելիքներով զուարթանա-
լու սկսաւ այս քիչ մը լաւ ընկերու-
թիւնը, ճաշէն ետքը աւազակները քը-
նացան իրենց գիշերային արշաւանացը
սպասելով :

Այն ժամանակէն 'ի վեր Հենրի-
կոս մէկ նոր ասպարէզի մը մէջ մտաւ,
իւր վարքը քանի մը տարի եղևոնա-
գործութեան գարշելի տեսարան մը
կ'ընծայէր, գարձընենք անկից աչքեր-
նիս, և մեր յարգանացը արժանի
նիւթ մը ձեռք առնենք :

Գ Լ Ո Ւ Խ Ժ :

Ահով կղերիկոսաց գպրոցը կը մտնէ, Գանիէին
տխուր վիճակը :

Ահով իւր ուսմունքները հասա-
րակ գպրոցին մէջ լրմնացուց, և ան

տեղ եղած ընտիր աշակերտի մը համ-
 բաւ ստացաւ, դպրոցին գլխաւորը խը-
 րատ տուաւ անոր որ՝ համալսարանի
 քանի մը դասերուն ալ գտնուի, կը-
 ղերիկոսաց դպրոցը չի գացած, աստ-
 ուածաքանու թիւն սորվելու համար,
 կիլում՝ որ ան ատենը տասն և ինն տա-
 րեկան էր, հաճեցաւ այս քանիս, իւր
 հայրը՝ որ այս ամենուն տեղեակ էր,
 հարկաւոր քաները ընելու կը պատ-
 րաստուէր, որովհետեւ կիլում սաւա-
 նաւաճառին տունէն պիտի ելլէր հա-
 մալսարանին թաղին մէջ բնակելու
 համար, որպէս զի զանազան գիտու-
 թեանց դասերուն հետեւելու կարող
 ըլլայ, բայց դպրոցապետը խնայեց
 զՇուէտէր այս ծախքերէն, կառավար-
 չի պաշտօնով կռիմալտի կոմսին տը-
 ղուն քով դնելով զկիլում, որուն սու-
 նը պաշտօնեայ էր շենրիկոս քանի մը
 տարի առաջ, կիլում քիչ ատենի մէջ
 սիրելի եղաւ այս անուականին իրեն
 յանձնուած տղան դաստիարակելու
 ջանքովը և իւր գեղեցիկ որպիսու-
 թիւններովը,

կիլում իր տեղեկու թիւնները աւել-
 ցուց Տրակայի համալսարանին մէջ,

այն ատենուան գիտուն դասատուաց
 աշակերտելով, ատնցմէ շատերը եկե-
 ղեցիէն կը նախանձէին իրեն պաշտո-
 նեայ ըլլալիք այս երեւելի անձը, և
 ծածկաբար աղերաներ կ'ընէին, որպէս
 զի Շուտերի որդին ետ կենայ իր կող-
 մանէն, և գրագիտաց կարգը մտնէ,
 բայց կիլում հասաատ կեցաւ իր մտքին
 վրայ, ամեն տարի իւր ծնողացը քով
 կը դառնար, և միշտ ուրախութեան
 օր մը կ'ըլլար երբոր որդին իւր հօրե-
 նական սուներ կուգար, երբոր հօրը
 կամ մօրը հետ քաղաքին փողոցներէն
 կ'անցնէր, մարդիկները կը կայնէին դա-
 նի տեսնելու, «Տ'վ բարի պատանի»,
 կըսէին, «գոնէ այս մխիթարութիւն
 մըն է իւր ծնողացը, և անդրանիկին
 անոնց ըրած գէշութեանը տեղը բա-
 րիքներով կը լեցընէ, օր մը կանոնիկոս
 կամ եպիսկոպոս պիտի ըլլայ»:

Այս ճանապարհորդութեանց մէ-
 կուն ժամանակը կիլում մըրիկէ բրա-
 նուելով պարտաօրեցան մէկ պանդո-
 կի մը մէջ մնալու, որ գէշ պատահա-
 րով մը անուեր կոտորէր էր, Շուտեր
 ճիւղն կերը տալէն ետքը, ճաշ ու զեց
 և երբոր իմացաւ որ իրեն համար պան-
 դոկին մէջ ճաշելիք շատ քան չի կար,

զարմացաւ , պանդոկապետը թողու-
թիւն խնդրեց , և ըսաւ անոնց ողբա-
լի կերպով մը , որ պանդոկն ալ պիտի
գոցէ , որովհետեւ չէր կրնար ծախքը
հանել :

« Այս կրած նեղութեանդ պատ-
ճառը ի՞նչ է » ըսաւ Շուէտէր :

« Հոս պատահած ցաւալի դիպ-
ուած մըն է պատճառը , կը զարմա-
նամ որ չէք գիտեր » :

« Կարելի՞ է որ մենք ալ գիտնանք » :

« Հրամներէք , պատմեմ ձեզի :
Անցեալ տարի օգոստոսի մէջ ճանա-
պարհորդ մը եկաւ հոս , որն որ ար-
տաքին տեսքէն աղքատ մարդ մը կ'ե-
րեւէր , բայց շատ ստակ կար քովը ,
ըսաւ ինձի որ շրջակաները գործքեր
ուներնալուն համար՝ ութն օրուան հա-
մար սենեակ մը կ'ուզէր , ամեն առտու
դուրս ելած ատեն առջի օրուան ծախ-
քը կը վճարէր . շատ ալ ոսկի դահե-
կաններ աւրել տուաւ , ասկից մտա-
ծեցի որ գէշ մարդ մը ըլլալու է աս ,
և գուցէ աւազակ մը . երբեմն իրիկ-
վան պանդոկը եկած ատեն՝ շատ տխուր
կ'երեւէր . առանց խօսելու կերակու-
րը կ'ուտէր , և սենեակը կը քաշուէր :

երբեմն ալ զուարթ էր , շատ կը խօսէր , և շատ կը նստէր » :

« Ի՞նչպէս մարդ էր » հարցուց Հռուէտէր կարի անհանգստութեամբ :

« Հասակը հինգ ոտնաչափ և երեք բթաչափ կար . քիչ մը կը կաղար մազերը խարտեաչ եւ . . . » :

« Ո՞վ երջանկութեանս » աղաղակեց Հռուէտէր « ուրեմն ան չէ . շարունակէ » :

Պանդոկապետը այս բացագանչութենէն բան մը հասկըցաւ և խեղճ Հռուէտէրին վրան նայեցաւ աղէկ մը և սկըսաւ շարունակել :

« Օր մը կանուխկէկ հոս եկաւ շիշ մը գարեջուր ուզեց , վառեց ծխափայտը , և սկըսաւ մէկ թուղթ մը կարգալ , զորն որ նո՛ր խրկեր էր կառավարութիւնը ամեն տեղ , և որն որ երկրին զանազան ճանապարհներուն վրայ գործուած գողութիւններով և մարդասպանութիւններով ամբաստանեալ մարդու մը ծանօթութիւնները կը պարունակէ՝ այս մարդը Պանիէլ Հօլթ անունը ունէր . քառասուն յիսուն տարեկան մէկը , և Բօնիցի իշխանին վերակացու և որսորդ Տիօուլֆ Հռուէտէր

անուն մէկուն քոյն ալ ծառայու թիւն
ըրեր է . այս ծանուցագիրը կարգալով
մարդը մեռելի նման այլագունեցաւ ,
այս գրու թեանս իր վրայ ըրած ազդե-
ցութիւնը մեզմէ պահելու էր շանար .
բայց մենք հասկըցանք որ արտաքոյ
կարգի բան մը կայ վրան . գլուխը ձեռ-
քին կրթնցընելով՝ խորունկ մտածելու
սկըսաւ . Երբոր ասանկ էր խորհրդա-
ծէր , այս սենեակին դուռը բացուե-
ցաւ . և տասիկանու թեան երկու նու-
խրակ ներս մտան , հետերնին մէկ մեծ
շունով մը , քննողական հայեցուածքով
մը օտարականին վրայ նայելով՝ կը թը-
ւէին մէկ մէկու ըսել , — ահա այս է
փնտած մարդերնիս — իսկ ճանապար-
հորդը՝ զինքը աչօք դիտած ասեննին
այս դուռնէն փախաւ , ելաւ իր սենե-
կակը , գոցեց դուռը , և մէյ Մ'ալ
տասիկ բոմբիւն մը լըսեցինք շուտ
մը սենեակը վազեցինք , և դուռը կոտ-
րելով տեսանք որ անիրաւը իւր ալ-
եանը մէջ շողախեր մնացեր է անզգայ .
տակաւին չէր մտած . բայց երբոր
վերցուցինք իր տնկողինին վրայ պառ-
կեցընելու , ան ասեն վիշեց հողին .
« Եղէկ բան մը կորսընցուցինք »

ըսաւ ինձի նուիրակներէն մէկը . « առ
նէր գլուխը հարիւր սքուտի գին ու
նոր . որ բռնողը պիտի առնէր » .

« Զող չէ » պատասխանեց միւսը .
« գոնէ այս գումարին կէսը կ'առնենք .
որովհետեւ ինքքզինքը մեռցրնելուն
պատճառը մենք եղանք » .

« Ահա Պարո՛ն » ըսաւ պանդոկա
պետը , « այս կերպով մեռաւ այն ա
ւաղակը , յիրաւի երկիրը ազատեցաւ
անոր ձեռքէն , բայց իմ պանդոկիս ա
նունը կտորեց . և աս բանիս մէջ ինձ
մէ ցաւալին չի կայ . բայց դուն ալ , ը
սէ Պարո՛ն , ի՞նչ էր այն ըսած օտարո
տի խօսքերդ , « Ը երջանկ-խեանս , ա՛ն չէ » :

« Որովհետեւ կը վախնայի որ ու
րիշ մը չըլլար պատմածդ . զորն որ այս
Դանիէլը գլխէ հանեց , և որ աւելի
մերձաւոր է ինձի . այս Դանիէլը եր
բեմն ծառայութիւն կ'ընէր ինձի , բայց
իւր գէշ վարմունքին համար պարտա
ւորեցայ զանի վռնտելու . կամ շիտակը
ըսեմ , կառավարութեան ձեռքը պիտի
մատնէի , բայց տունէս փախաւ , Բո
նիցի իշխանին վերակացու և որսորդ
Տիտուզ Ընէտէր ըսածդ էս եմ » .

« Ո՛վ Ետեւած » աղաղակեց պան .

դոկապետը . « անանկ է նէ կը ճանչնաս այն անիրաւը » .

Շուէտէր մահառիթ անհանգըստութենէ մը աղատեցաւ , հասկընալով որ այն անհատը իր Հենրիկոս որդին չէ , ճաշեց կիլոմին հետ , վճարեց իւր ծախքը , և ելաւ Տըրակա երթալու :

Կիլոմ տարի մըն ալ կեցաւ կրիմալ կոմսայն որդւոյն քով , և Պօհէմիոյ մայրաքաղաքին շրջակայները գործուած գողութիւններուն և մարդասպանութիւններուն վրայ խօսուիլը շատ անգամ կը լսէր , կ'ըսէին որ ճամբաները լրտեսող աւաղակներու ահագին խուճի մը կայ , երկրին մէջ պարտող լրտեսներ ունէին ճանապարհորդաց շարժմունքը իմանալու համար , և թէ այս չարագործները շատ անգամ կառավարութեան պաշտօնեաներուն հետ կըրուած էին , բայց տակաւին իրենց առանձնութեան տեղը գտնուած չէր .

Շուէտէրի առաքինի որդին իր Հենրիկոս եղբարը կը մտածէր . և չէր դադարեր անոր համար աղօթք ընելէն , որպէս զի Մատուած պահէ դանի թշուառական Պանիէլի նման վախճանէ մը :

կիլով մէկ նոր եռանդով մը ուս-
մունքի պարապեցաւ, տարւոյն վերջը
քննութիւն տալու պատրաստեցաւ. և
չատ մը լատիներէն քանաստեղծու-
թիւններ յորինեց, որ ամեն գիտնոց
առջև գովելի եղան:

կիլով կրիմալաի կոմսոյն քովէն ել-
լելով՝ կղերիկոսաց դպրոցը մտաւ աստ-
ուածաբանութիւն սորվելու համար.
ազնուական կոմսը անոր խոստացեր էր
իւր առաջին պատարագին ներկայ գրա-
նուելու, և ամեն շաբաթ դպրոցը
կ'երթար զանի տեսնելու. ուր տեղ
սորվեցաւ այս սրբութեան աշակերտը՝
քահանայական ընդարձակ գիտու-
թիւնները. որով ետքը կարող եղաւ,
այնչափ յաջողակութեամբ իւր խընա-
մոցը յանձնուած հաւատացեալները
հովուել, առաջի սորվուած ուսմունք-
ները՝ անոր շատ դիւրացուցին աստ-
ուածաբանական գիտութիւնը, և
սուրբ գիրքն ալ առատ անունով մը տը-
լաւ անոր հոգւոյն և սրտին, ալ անոր
վարմունքին վրայ չխօսինք, որովհետեւ
միշտ մէկ գնաց, և ի'նչպէս ըլլալ
պէտք էր նէ, անանկ եղաւ.

կիլով երեք տարի կղերիկոսաց

դարոցը մնաց . և սրբազան կարգը ըն-
գունեց ամեն վայելուչ յարմարու-
թեամբ . իւր բարեպաշտ մայրը անձ-
կանօք կը վախաբէր զանի ամենաբարձ-
րելոյն սեղանին վրայ տեսնելու վայր-
կեանին . անարիւն պատարագ մատու-
ցանելու , և Սատու ծոյ նուիրելու իր
ընտանեաց ուխտերը :

ԳՆՈՒՄ ԺԸ

Հենրիկոս կը վերադարձի , և իր ծնողացը ամենը
դաւնադու խորհուրդ կ'ընէ :

Արեւը նոր մարը մտեր էր . և գի-
շերն ալ իր տխուր քօղը լեռներուն
վրայ տարածել սկստեր էր , Հիւ-
պէրա և իւր խումբը զէնքերնին մար-
րելու կ'զբաղէին այն պրին մէջ , ուր
մինչև այն օրը սատիկանու թեան խու-
զարկու թեանցը գէմ ապաստանարան
մը գտած էին , և ուհա սուլերու ճայն
մը լսեցին , ամենքն ալ ոտքի ելան . քիչ
մը ետքը երկրորդ անգամ սուլերով
հասկրցան իրենց լրտեսներէն մէկուն
գալը , Հիւպէրա իւր ընկերներէն մէ-

կը դուրս հանեց, և շուտ մը կէնձ ա-
ղէկ հագուած մարդ մը ներս մտաւ,
բարե տալով ընկերութեանը. Հիւ-
պէրս ասոր ուսը ծեծելով հարցուց թէ
Տրակիայէն ի՞նչ լուր ունի:

« Աղէկ լուրեր բերի ձեզի, ըսաւ
մարդը. այս իրիկուն աղէկ կողոպուտ
մը ունիք. ձեր ուշադրութեանը ար-
ժանի վեց փաճառական ճամբայ կ'ել-
լեն Իսթրիք երթալու համար, շատ
ստակ ունին հետերնին. և թղթատա-
րի կառքով կը ճանապարհորդեն կոր,
լսեցի որ հետերնին գէնք ալ առեր են,
գողերու ձեռք ինան նէ, ինքզինքնին
պաշտպանեն, ուրեմն պատրաստ եղիք,
ձեռքէ մի փախցընէք »:

Աւաղակները ուրախութեան ձայ-
ներ ձգեցին, ու հրացաննին և ատրո-
ճանակնին լեցուցին:

Հենցիկոս՝ որ ասան տարուընէ 'ի
վեր գողութեան սկսեր էր, և այս
միջոցիս մէջ շատ խրատ առած՝ բայց ա-
մենեկն օգուտ մը քաղած չէր, միւսնե-
րէն քիչ ուրախութիւն չի ցըցուց:

« Բանի՞ հոգի ենք », ըսաւ Հիւ-
պէրս, իւր մարդիկները համբելով:

« Տասն և հինգ հոգի ենք », պա-

տասխանեց աւելի աներկիւղներէն մէկը, « կը յուսամ որ այն վեց բիրտերուն հետ գլուխ կ'ելլենք » :

« Հաս աղէկ, անանկ է նէ, երթանք, ըսաւ Հիւպէրտ, մեծ կաղնիին տակը մէկզմէկ գտնանք վստահ եմ ձեր վրան » :

« Պատրաստ ենք մե՛ծաւոր », ազդակեցին տասն հոգի մէկէն, « մեծ կաղնիին տակը գտնուինք », վառեցին ծխափայտնին, առին ղէնքերնին գացին :

Գիշերուան մութը կոխեր էր, երկնից հաստաստութեանը վրայ աստղ չէր երևար. հազիւ հազ կ'երևէին առարկայները, արդէն բոլոր խումբը կաղնիին տակը ժողվուած էր, երբոր հեռուէն կառքերուն շառաչիւնը լսուեցաւ :

« Ահա կուգան կոր մարդիկները », ըսաւ Հիւպէրտ « պատրաստուեցէ՛ք » :

Կառքերուն ձայնը երթալով մօտեցաւ, աւաղակներն ալ խոտին մէջ պառկած՝ վաճառականներուն վրայ յարձակելու վայրկեանին կ'ապասէին. բայց անոնք հանգիստ կը խօսակցէին մէկ տեղ, երբոր յանկարծ վայրենի ձայներ լսեցին շուրջերնին, շուտ մը

ատրճանակնին առին, և իրենց կեանքը պաշտպանելու պատրաստուեցան, էն առաջ Հիւպէրոս գնաց կառքին դրանը առաջին, և ըսաւ, « կամքսակնիդ կամ կեանքերնիք »: Ասոր պատասխան եղաւ՝ Հիւպէրոսին երկու գնատակով իւր մարդոցը վրայ խնալը, « մեռայ, ըսաւ չարագործը, վրէժխնդիր եղէք ինձի համար »:

Իր մարդոցմէն երկուքը բռնեցին զանի, տարին խոտին վրայ պառկեցուցին, ուր վիչեց հողին. այս մահը քիչ մը շփոթութիւն տուաւ աւազակներուն յարձակմանը. վաճառականները ասիկայ տեսնելով աւելի սիրտ առին. ճարպիկ աւազակներէն շատերը մեռան կամ վիրաւորուեցան, Հենրիկոս ալ զարնուեցաւ գնատակով մը աջ թևէն, և չի կրնալով կռուիլ, մուծ տեղ մը քաշուեցաւ, իւր ընկերները անանկ վտանգաւոր կռուոյ մը մէջ թողլով, հանեց թաշկինակը, կապեց վերքը, և աճապարելով վտառաւ կռուոյ տեղէն, « բոլորովին բժշկուեցայ գողութեան արուեստէն », կ'ըսէր ինքնիրեն « բոլոր կենացս մէջ խեղանդամ մնալով, ի՞նչ պիտի ըլլամ թէ որ կառաւ

վարու թեան ձեռքը իյնամ քանս լմնցամ
 է. այս է մի իմ եղեռնական կենացս
 մրցանակը. կամ հիւանդանոցի մը կամ
 սանջանաց մէջ մեռնիլ. առ ի՛նչ գէ-
 շու թիւն է. այսչափ յանցանքներով
 աղաւելած կրնամ իմ ծնողածս երե-
 սը տեսնել. իմ մեծաւորս ծեծ կուե-
 լով մեռաւ, ինչո՞ւ ես ալ չի մեռայ ո՞չ
 թշուառականը գրպաններուն մէջ
 զէնքերը կը փնտրուէր, և միտքը չէր
 բերեր որ ընկերներէն զատուած սան-
 նը հոն ձգեր էր զանոնք, քիչ մը մը-
 սածեց որ երթայ զանոնք փնտռէ, և
 իր եղեռնաւոր կեանքը սասանկով վեր-
 շադրնէ. այն ստեղծ իւր մօրը պատկերը
 առջևը եկաւ, և կը կարծէր զանի
 տեսնել, որ ձեռքերը երկնցուցած
 զինքը կ'ընդունէր. և քաղցրագոյն խօս-
 քերով կը համոզէր զինքը իւր հայրե-
 նի սուներ գալու. ճամբան շարունա-
 կեց կ'երթար առանց որոշելու որ գե-
 ղի մը մօտեցեր էր, մտաւ գիւղը, և
 եկեղեցւոյ մը առջև ելաւ, տասը տար-
 ուրնէ ՚ի վեր առաջին անգամն էր որ
 լստուած միտքը բերաւ. և որպէս թէ
 անտեսանելի ձեռք մը մղուած մօտե-
 ցաւ Տիրոջը սանը դուռը, և ծունկի

եկաւ գաւիթը՝ իւր Արարչին ըսելու,
 Ի՛նչ . . . ինքն ալ չի գիտէ . ամենեւին
 խօսք մը չի գտնար, որով երկնից և երկ-
 ըրի ամենակալ Տիրոջը հետ խօսակից ըլ-
 լայ, զորն որ չէր ալ ճանչնար . այն ա-
 ռաքինութենէ և բարեպաշտութենէ
 մասնատականը, այն անարգ եղևունա-
 գործը . այն պիտի խօսէր ամենայն սրբ-
 բութեանց Աստուծոյն հետ

Սակայն կամաց կամաց սիրտը շար-
 ժեցաւ, կրակի պէս արտասուք մը ե-
 լաւ աչքէն, հոգին խոնարհեցաւ, կը
 թոթափախօսէր . և առաջին զուրցած
 բառը եղաւ « շնորհք » . և Աստուած
 ալ կը թուէր խոնարհիլ իր արարածոյն,
 և ժպտիլ անոր ինդրութեան, երանի՛
 այն օրուանը ուր երկու եղբարք ասանկ
 գերազանց շնորհքներ կ'առնեն եր-
 կինքէն :

Այն առտուն կիլոմ քահանայ Աս-
 տուծոյ օժեալ էր . իրիկունն ալ Հեն-
 րիկոս առաքինութեան ճամբան մտաւ . . .
 առտուն՝ Տիրոջը նորապսակ պաշտօն-
 եայն, սրբութիւն սրբութեանց քա-
 ղայատակին վրայ խոնարհած՝ մոլորեալ
 եղբօր մը ողորմութիւն ինդրեր էր,
 իրիկունն ալ այն յափշտակող գայլը՝

գառնուկի փոխուեցաւ, առտունն՝ ան-
մեղը ձեռքերը երկինք կը վերցընէր, ի-
րիկունն ալ մեղաւորը գետինը խոնար-
հեցաւ... ալ չի մտածենք այս նմա-
նու թեանս վրայ:

Չենրիկոս անկեղծութեամբ իր
մեղքերը խոստովանեցաւ Տիրոջը առ-
ջին, և այս խոստովանութեամբս միտ-
թարուեցաւ, խիղճը հանգչեցաւ, սիր-
տը անդորրացաւ, և իւր դողդոջուն
սիրտը շատ աղօթքներ մրմնջելու սկը-
սաւ. զորոնք իր աղայութենէն ՚ի վեր
ամենեւին զուրցած չէր, ասանկ կէս
ժամու չափ աղօթք քրաւ. և ան՝ որ
դեռ այն գիշերը անարգութեան մէջ
էր, նոր մարդու մը փոխուած ոտք ե-
լաւ ամչցած և զղջացած. յոյսը մտեր-
էր անոր սրտին մէջ, և հեանս ալ եր-
ջանկութեան նշոյլ մը:

Ճամբան շարունակեց, և ասան-
կով հեռացաւ աւազակներուն վերջին
եղեռանցը տեսարանէն. անոնք ալ յու-
սահասելով իրենց յաջողութենէն, և
իրենցմէ շատերը մեռած տեսնելով՝
փախան, « դէպ ՚ի լեռք » աղաղակեց
անանցմէ մէկը, և վաճառականները
զիրենք աղասած տեսնելով՝ իսկոյն

Ճամբանին շարունակել սկըսան . առաջին գիւղը հասնելով՝ ծանուցին վաճառականները սեղւոյն կառավարութեանը , և աւաղակներուն վրայ ունեցած սեղեկութիւննին յայտնեցին . քաղաքապետը՝ հարիւր ասէկ ղինեալ գեղացիներ առնելով գնաց վաճառականներուն ցրցուցած լեռը , լուսնայու վրայ էր երբոր գեղացիները՝ որոնց մէջ քանի մը վաղեմի ղինուորներ ալ կային , եղեռնագործներուն բնակած այլը հասան . քաղաքապետը անանկ մը շարեց ղանոնք ամեն դուրս ելլելու բերանը՝ որ շարագործները չի վախչին . ան առնն աւելի քաջերը իւր հետք առնելով մասա այրին մէջ , գողերուն ո՛ր մէկը վէրքերնին կը կապէին , ո՛ր մէկը ստակնին կը համրէին , և սրատանին կը շինէին , ուրիշ սեղ երթալու համար :

Աւաղակները մէկըմէկու երես նայիլ սկըսան , և կռուելու պատրաստը վիլ ցրցուցին . բայց երբոր երեսունի չափ գեղացւոց ներս մտնելը տեսան , որ գաշանյնին ճօճելով հոսցանովնին կ'ապառնային , խոհեմութիւն չսեպեցին նորէն անոնց հետ կռուիլը . մաւաւանդ որ այն գիշերը ըրած կռիւ-

նուն ու թերնին հասած էր, անձնա-
տուր եղան անոնց, սոսկալի հայհոյու-
թիւններ ընելով:

« Ի՞նչ կ'ըլլայ առանկ Աստուծոյ դէմ
մեղանչելէն » ըսաւ քաղաքապետը: « ա-
սանկով ձեր վիճակին փոփոխութիւն
կ'ըլլայ մի: չէ: Ուրեմն պապանձեցէք,
ձեր եղևո՞նագործութեանը չափը լեց-
ուեցաւ, ա՛յլ բաւական գէշութիւն ը-
րիք, և պէտք էր որ մտածէիք որ կա-
նուխ կամ ուշ երկնից վրէժխնդրու-
թիւնը պիտի յայտնուի ձեզի »:

Ասքը կապել տուաւ այն չարա-
գործները, որ տակաւին ութն հոգի
էին. և այրը յուզելով անհամար կողո-
պուտ մը ելաւ. բայց այնչափ ստակ չէ
կար. որովհետեւ ոսկին և արծաթը
անտառին հիւղին մէջ կը պահէին, այն
տեղ՝ ուր Հենրիկոս անոնց ընկերու-
թեանը մէջ ընդունուած էր:

Այս մեծ չարագործները աղէկ ըլ-
լաւ շութեամբ մտակայ քաղաքին բան-
տերը սարուեցան, ուր տեղ դատաս-
տաննին տեսնուելով՝ շուտ մը իրենց
եղևոնցը արժանի եղած պատիժը ըն-
կալան. բայց իրենց դատաստանը եղած
ատենը ամենեւին Հենրիկոս Շուտե-

բին անուներ չի տուին . և ասանկով այն
Թշուառականը՝ իրենց պէս իրեն ար-
ժան եղած պատուհասէն պահեցին .

Այս կերպով վերջացան այն գողու-
թիւններն ու մարդասպանութիւննե-
որ երկար ատենէ ՚ի վեր սգոյ մէջ ըն-
կզմած էին բոլոր այն երկիրը . այս ա-
ւազակներէն շատը արձակեալ գինուոր-
ներ էին , որ երբեմն Վալէնսթէնի
գունդերուն մէջն էին . և երբոր խա-
ղաղութիւն եղաւ եղեռնական կեան-
քը իրենց աշխատութենէն նսխապա-
տիւ համարեցին . Հիւպէրան ալ զօրաց
երկրորդ պաշտօնատար էր , և մեծ հան-
ճարով՝ կորովի քաջութիւն մը ունէր .
բայց այսու ամենայնիւ անարգ մահ-
ուան մը և յաւիտենական պատապար-
տութեան արժանացաւ :

Ք Ա Ո Ւ Խ Ժ Բ .

Հաշտութիւն :

Սուրբ Միքայէլի տօնախմբութեան
օրն էր . զանգակները առտուն կանուխ
հնչելով՝ մէկ գեղեցիկ կրօնական տօն
մը կը ծանուցանէին . և բոլոր քաղա-

քացիք ալ ասոր մասնակից ըլլալու կ'եր-
 Թային . այն փողոցը որ քահանային
 տունէն՝ ուր քանն և հինգ տարու ընկ-
 ՚ի վեր կը բնակէր արգոյ Սէնարտու .
 եկեղեցին կը տանէր , դանդաղ աշնան
 ընծայած ծաղկեաց պսակներովը զար-
 գարուած էր . ժամը տասը զարկեր էր ,
 և ամեն զանգակները աշտարակին գա-
 գաթէն մէկ քաղցր նուագ մը հնչեցին
 ՚ի նշան չուոյ . իսկոյն թափօրը ճամբայ
 ելաւ Տիրոջ տաճարը երթալու . արու-
 և էգ տղաքներ , առջւե՛ւնուն Մարիա-
 մու փակագիծով դրօշ մը բռնած կար-
 գաւ կը յառաջէին . ասոնց ետեւէն պա-
 տանի երաժիշաներու խումբ մը . ետ-
 քը ժողովրդապետին բնակարանին գաւ-
 թէն կուսանաց դաս մը դուրս ելաւ .
 որ սրբազան երգերով օգը կը հնչե-
 ցունէր , և որոնց կը խառնուէր սը-
 րինգներուն որսորդափողերուն ձայնը .
 ասոնցմէ ետեւ երիտասարդ քահա-
 նայ մը երեւցաւ քահանայական ըզ-
 գեսաով , շուրջը ունենալով բազմաթիւ
 կլերիկոսներ . կիլօմն էր աս , որ իր ա-
 ուաջին պատարագը պիտի մատուցա-
 նէր . ասոր ետեւէն կուգար իւր հայ-
 րը , կուխմալտցի կոմսը , քաղաքապետը

և քաղաքին երեւելիները, որոնց կը մի-
անային իւր մայրը, քոյրը և այն տեղի
տիկիները, փողոցը խուռն քաղաք-
թեամբ լեցուեցաւ. ամեն պատուհան-
ներէն ձերմակ թաշկինակներ կը շար-
թէին ՚ի նշան ցնծութեան. ամեն սիրա-
կ'որհներ Տիրոջը այս երիտասարդ պաշ-
տօնեայն և ամեն աչք արցունքով կը
թանար:

Թափօրը ծանր ծանր դէպ ՚ի եկե-
ղեցին կ'երթար. զանգակներուն հրնչ-
մունքէն, բարեպաշտական երգերէն,
զմայլեցուցիչ երաժշտութենէն, հա-
ւատացելոց բարեպաշտութենէն, ե-
կեղեցւոյն ետին պահուած խուճք մը
երիտասարդ զօրաց միանգամայն արձա-
կած հրացաններուն ձայնէն՝ ամեն սիրա-
շարժեցաւ:

Արդոյ լէոնարտոս փայլուն շուր-
ջառ մը առած՝ սրբազան տաճարին սր-
բահին մէջ կ'ապասէր, և օրհնեալ շուր-
ու խուռն կը մատուցանէր անոր. երբ
որ նորապսակ քահանայն եկեղեցի մը-
տաւ, երգեհոնը ներդաշնակու թեամբ
հնչեց եկեղեցւոյ գաւթին մէջ, ուր
լեցուած էր երկար ատենէ ՚ի վեր ան-
համբեր ժողովուրդը:

Եկեղեցւոյն դասը՝ որ այն օրը ա-
նուշահոտ անտառի մը կը նմանէր, սի-
րալի տեսարան մը կ'ընծայէր. ամենա-
գեղեցիկ գոյներով թուփեր և ծաղ-
կեայ պսակներ՝ անդլոյս վեհափառու
թիւնը կ'աւելցընէին:

Դաբիրային մէջ ակթուններ դուռած
էին կիլօմի ծնողացը և բարեկամացը
համար. թանկագին գորգեր՝ զորոնք
կրիմալտի կոմսը խրկած էր, սիւնե-
րէն կախուած՝ դաբիրային յատակը կը
ծածկէին. սեղանը կը փայլէր աւելի
գեղեցիկ զարդերով և մոմեղինաց ցո-
լացմամբը. որոնց լուսաւորու թիւնը
թուփերուն աղօս կանաչու թեանը հետ
կը հակառակէր:

Չայնաւոր պատարագը սկըսաւ, և
քահանայն յատակ ձայնով՝ «Փառք 'ի
բարձունս Աստուծոյ» երգը կ'ըսէր,
երբոր եկեղեցւոյն կողմնական դռնե-
րէն մէկը բացուելով՝ երիտասարդ մու-
րացկան մը ներս մտաւ թեւը կապած.
որ շիտթու թեամբ կը նայէր այն բաղ-
մաթիւ ժողովրդեանը, երիտասարդ քա-
հանային, պատարագ ըրած սեղանին
զարդերուն, և սեղանոյն շուրջը եղած
գերդաստանին վրայ. այս պատկառելի

միութեանս մէջէն մէկ քանի հոգի
ճանչնալ կը թուի . արտասուք մը կը
փայլի աչքին մէջ, և խռովելով ու սիր-
տը ելլելով կ'երթայ մինչեւ հոգւոյն
խորունկը, Հենրիկոս էր աս մուրաց-
կանը :

Մարդ չէր ճանչցած զանի այն ցըն-
ցոտիներուն տակ . գնաց մէկ խորշ մը
նստաւ, տեսածներուն վրայ մտածե-
լով :

«Անշուշտ» ըսաւ ինքնիրեն, « այսօր
հօրս տունը մեծ հանգէս պիտի ըլլայ,
ամեն իր աղգականներն ու բարեկամ-
ները՝ որ դաբիրայն էին, հոն պիտի եր-
թան ճաշի . ո՛հ, գերդաստանիս մէջ
խնդճ օտարականս, ևս ալ երթալ կ'ու-
ղեմ հոն, և հօրս ներկայանալ թողու-
թիւն խնդրելու, և ցաւօք անոր առ-
ջին մեռնելու » . դողդոջուն քայլերով
անտառապետին տունը երթալու սկս-
տաւ, անցաւ անտառէն, քննեց և ա-
մեն բան ճանչցաւ . բան մը չէր փոխ-
ուած, մինակ ինքը հակաց կարգէն
դուրս ինկած դասապարտեալ մարդ մըն
էր . գաւաղանին կը թընած հայրենի
աանը դուռը հասաւ . դուռը գոց էր .
կը զարնէ՝ շուները կ'սկըսին հաչելու .

և դրանք չորս դին կ'առնեն իբր թե
 զանի պաշտպանելու . Վերջապէս սպա-
 սաւոր մը կուգայ, Հենրիկոս կրնայի,
 և չի ճանչնար զանի . սա նոր սպասա-
 ւոր մըն էր, որ տարի մը կ'ընէր որ հօ-
 րը քովը ծառայու թեան մանր էր . Հեն-
 րիկոս՝ Շռէտեր անստասպետին հետ
 խօսիլ կ'ուզէր, « ամենքն ալ քաղաքն
 են » պատասխանեց սպասաւորը . « ի-
 ընդհանրապէս պիտի գան . իհնարաւ ժո-
 ղովորդապետին տունը պիտի ուանն ճա-
 շերնին . Պ . Շռէտերի որդին այսօր
 իւր առաջին պատարագը քրաւ . կեցի՛ր
 քեզի կտոր մը հաց սամ :

Հենրիկոս քաւական հասկըցաւ .
 առանց սպասելու իրեն տրուելէք կտոր
 մը հացին, կ'ելէ քաղաքը կ'ելժայ .

Երբոր անտառէն կ'անցնէր, զան-
 գակները կը հնչէին, և մեկուրիչ հրա-
 ցանի արձակումն ալ Նատուածային
 պաշտօնին վերջանալը կը ծանուցանէր .
 Հենրիկոս շատ անգամ ճամբան կայ-
 նելու պարտաւորեցաւ . այնչափ հագ-
 ներ էր, վերջապէս հասաւ ժողովորդա-
 պետին տունը, և լսեց սեղանի նստող
 քաղմաթիւ հրաւիրելոց խօսակցու թիւ-
 նը : Ներս կըմտնար կոր, բայց ժողովր-

դապեաինս պատաւ աղախինք չթողուց ,
 ըսելով . « քիչ մը սպասէ՛ , կտոր մը
 խորոված տամ քեզի » և մէկ պնակ մը
 առնելով , կտոր մը խորոված կարեց և
 Հենրիկոսին տուաւ .

« Նստէ կէր , ըսաւ . քեզի հաց ալ
 տամ , գաւաթ մըն ալ գինի . Պ . Շը-
 ուէտէր պատուիրեց որ այսօր աղէկ նայ-
 ուի աղքատներուն . որպէս զի աղօթեն
 իր բարի որդւոյն կիլօսին համար . որն
 որ ամեն մարդու սիրելի կ'ըլլայ կոր
 օրէ օր :

Հենրիկոս՝ երբոր հօրը անաւնը լը-
 սեց , խռովեցաւ . մէկդի հրեց խորո-
 վածը , և սկրսաւ լալ . այն տեղ իւր
 գերդաստանին մօտ կեցած կը լսէր ա-
 նոնց ձայնը , կրնար զանոնք տեսնելու
 և մէկ անջրպետող պատ մը կար անոնց
 և իր մէջ տեղը . . . ինքն ալ մէկ տեղ
 մը ունէր այս սեղանիս մէջ , բայց իր
 յանցանքները զինքը անարժան կ'ընէին
 այն տեղ երեւալու . աղախինը ասոր
 լալը տեսնելով՝ քովը մօտեցաւ և հար-
 ցուց թէ հիւանդ է մի . Հենրիկոս
 ամենեւին պատասխան չտուաւ . իւր
 ցաւոյն մէջ ինկած՝ չէր տեսներ որ ու-
 թիչ սպասաւ որմեր ալ ժողվուեր էին իր

բողորատիքը • կերակուրի արահին դու-
 ուր բաց էր • Հենրիկոսի մայրը տեսած
 էր որ արտաքոյ կարգի բան մը կ'ըլլայ
 կոր խոհանոցին մէջ • սեղանէն ելաւ
 գնաց աղէկ մը նայեցաւ պատանւոյն
 երեսը • և հարցուփորձներ ընելով ա-
 ղաղակեց խեղճը հետը ասնելով • « ո՛վ
 Սատուած իմ , այս ի՞նչ երջանկու-
 թիւն է » :

Այս բացագանչութիւնը կոչնա-
 կաններուն ուշադրութիւնը գրաւեց •
 ելան սեղանէն , երիտասարդ մուրաց-
 կանին բողորատիքը խոնեցան , և ամե-
 նուն բերնէն այս ձայնը կը լսուէր •
 « Հենրիկոսն է , Հենրիկոսն է » :

Այս աեղ կենանք , այս երջանիկ
 գերդաստանիս ուրախութիւնը անպատ-
 մելի էր • Շուէտէր՝ իր բարեբաղդու-
 թիւնը յայնելու խօսք չէր կրնար գըտ-
 նելու • իւր կինը , երիտասարդ քա-
 հանայն , յուսիլան , ժողովրդապետը ,
 Չիչիլիան , կռիմալացի կոմսը ասոնք ալ
 իրարմէ աւելի սիրոյ նշաններ կը ցը-
 ցընէին Հենրիկոսի • ամեն աչք ար-
 ցունքով լեցուեցաւ , երբոր ամեն
 մարդ տեղը նստաւ , Հենրիկոս պար-
 տաւորեցաւ իւր հօրը և մօրը մէջ տե-

զը նստելու , և ժողովրդապետն ալ ա
 նստակ որդւոյն առակը մէջ բերաւ .
 և իր կորուսեալ որդին կրկին գտնելու
 վը երջանիկ հօրը ունեցած ուրախու
 թիւնը՝ ամեն մարդ այս նմանութեանը
 հաւնեցաւ . և զուարթութիւնը նո
 ղին սկըսաւ . Հռէտէր՝ այս երջանիկ
 օրը նշանաւոր ընելու համար , առատ
 ողորմութիւն ճապաղեց աղքատնե
 լուն , և խոստացաւ չորս օրքի հան
 դերձ շինել , շատ ուշ արձակուեցաւ
 այս ընկերութիւնը . և Հենրիկոս հօ
 ըր ձեռքէն բռնած՝ կամաց կամաց տուն
 գնաց . շատ դարման ըլլալով՝ քիչ մը
 ուժը վրայ եկաւ խեղճին , բայց չի
 կրցաւ ալ որսի երթալու , իր աջ թևը
 միշտ խեղ մնաց . անդադար Ակեղեցի
 կ'երթար . և իր բոլոր կենացը ընդ
 հանրական խոստովանանքը եղաւ արդոյ
 յէօնարատսին ալ անիկա ամենեւին գի
 նեառնը չերեւցաւ . քուէները և
 թուղթը սոսկալի առարկայ մը եղած
 էին անոր աչքին , և իր դարձէն ետ
 քը բարի օրինակ ըլլալու կեանք մը ան
 ցուց . շատ անգամ իր բազմաթիւ
 մեղքերը յիշելով՝ արցունք կը թա
 փէր . և Աստուծմէ թողութիւն խնդ

բելէն չէր դադարեր • Տէրն ալ աղօր-
մեցաւ անոր , խաղաղութիւնը կամաց
կամաց անոր հոգւոյն մէջ մտաւ և իւր
բարեպաշտական գործքերովը և զոջ կան
խաղաղութեան քաղցրութիւններովը
գտաւ այն երջանկութիւնը , զորն որ
ի զուր կը բնառէր աշխարհիս ազմուկ-
ներուն և իր կրօնը մոլութեանցը մէջ •

() ր մը մեռելաթաղը գերեզման կը
փոսէր քաղաքին գերեզմանատանը մէջ
աւքալջ գերդատան մը՝ որսորդի նշան-
ներով զարդարուած դագաղի մը կը հե-
տեւէր : Երիտասարդ քահանայ մը փոսը
օրհնեց , և դագաղին վրայ ափ մը հող
նետելով համաշէջ արտասուօք • « պէտք
էր մի » ըսաւ հեծութեամբ ընդ մի-
ջեաց ճայնով մը • « որ շուտ մը ասանկ
ծածկէ հողը զայն՝ որ երկար ասուն ապ-
րելու էր • այս գերեզմանիս առջնի ա-
մեն գծուարին յիշատակ կ'ոչնչանայ •
այս սեղ մանողը բարի Յրիստոնեայ մե-
ռաւ • բայց մահուան այս ողջակէզին
երիտասարդութիւնը մեզի կը խրատէ
որ զգուշութեան մէջ գամուինք , և
մեր կիրքերուն վրայ հսկենք , ո՛վ չեն
բիկն'ս , եղբայր իմ • ներէ ինձի թէ որ
բիւ մը ասուն քառ աղէտաբեր մոլորու-



Թիւններդ յիշեմ . քու վերջին կամա-
 ցրդ . համաձայնելու համար է , որ այս
 անդ ժողովուած երիտասարդ ներուէ կ'ը-
 սեմ . — ահա՛ ս'ըր կը սանիխաղու մա-
 լու թիւնը — . այս խօսքը քու ազան է
 մեր սղբացած վատաբաասակ'ն նմանե-
 լու փորձ ընողները զգաստացընելու ,
 ու մնա՛ս բարով , Հենդիկաս , իցի՛ւ
 շնորհք գանեսս գերագոյն Գասաւ ոսին
 ասենին աս ջն . վասահ եղի՛ր մեր ա-
 դոթիցը , մեր յիշատակու թեանը և մեր
 սիրոյ մարտնչներուէ վրայ ։

Կիլով ալ աւելի չկրցաւ խօսելու
 իր ցաւէն . հողը առէին գերեզմանին
 վրայ , և ամենքն ալ ատրու թեանք լը-
 ուիկ մնջիկ ետ գարձան , այս վաղահաս
 վախճանիս վրայ՝ 'ի սրտէ հեծելով .

Երիտասարդ կիլով իր ճնողացը ու-
 րախու թիւն եղաւ . Մատու ծմէ և մար-
 գոցմէ սիրեալ հովուի մը ամեն պար-
 տականու թիւնները կատարելու ջանա-
 ցողու թեանքը . շատ անգամ իր եղբօ-
 րը օրինակը՝ փոփոխամիտ և անբարիշտ
 երիտասարդաց յիշեցընելու առիթ ու-
 նեցաւ . և միշտ անանկ կերպով մը
 կ'ընէր այս բանը , որ վատաբաասիկ
 Հենդիկասին յիշատակին պարտական ե-

զամ յարգն ու համարումս չէր վնասեր ,
 կիլով քանի մը սարիէն ետքը լէնար-
 տոս բարի ժողովրդապետին յաջորդ ե-
 ղաւ , և ասանկով երկրին ժողովրդա-
 պետութեանը ամենէն կարեւորին ա-
 դաջնորդ և գլուխ եղաւ . այն ատեն
 իր գեղեցիկ որպիսութեանն թիւնները երե-
 ւան հանելու միջոց ունեցաւ . ինչ
 հայր , մայր , և քոյրը անտառին տու-
 նը թողուցին , և ժողովրդապետին
 տունը գացին բնակեցան , այս կերպով
 այն երջանիկ գերդաստանը մէկ տեղ
 միացաւ , և աւելի սրտաշարժ առաքի-
 նական գործքերով երջանիկ ծերու-
 թեան մը հասաւ , բնաւ մէկ վիշտ մը
 անունը վայելած երջանկութիւնը չար-
 աովեց . և ժամանակին Մատուծոյ օրհ-
 ներքերով ինքզինքնին լրացած տես-
 նելով այս առտապետ գերդաստանիս
 անդամները , ընկալան երկնային վար-
 ճահասոյցէն յաւիտենականութեան
 մէջ խոստացուած պսակը , անունը հա-
 մար՝ որ իր սիրելի Մատուծ և ան-
 հաւատարիմ կիւնեան այն փորձու-
 թիւններուն մէջ , որով կը սերտանէ
 ինք իր ընտրելոցը աւխտատեղին :



